Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2207
2208
2209

84
Z-66

ԲԱՐՈՅԱՎԷՊՔ

Ա.
ՎԱՂԸ

ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲ Ի Մ. ԷՃՈՒՕՐԹԷ

Բ.
ԴԱԴԱՐՈՒՄՆ ԺԱՄԱՆԱԿԻ
(ՊԱՐՍԻԿ ՎԷՊ)

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ՖՐԱՆՍԵՐԷՆԷ

ՕՐ. ԶԶԻԱՐԴ Ֆ. ԷՄԱԼԵԱՆ

Ի ՆՊԱՍՏ

ԲԻՐԱՆՑՈՒՅԹԻՆ ԱԱՄՊԻՒՂԻ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. «ԱՐԵՒԵԼՔ» ԵՒ «ՄԱՍԻՍ» ԼՐԱԳՐԱՑ
1889

539

4

ԲԱՐՈՅԱԿԵՊՔԱՏԱՆՏԵԱՆ

ԱՐՈՒՄԱԼԻՈՒՄ
Ի ԽԱՍԳԻՒՂ
1866
ՄՐՄԱՆՈՑ

84

Ա.
ՎԱՂԸ

ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲ Ի Մ. ԷՃՈՒՕՐԹԷ

Բ.
ԴԱԴԱՐՈՒՄՆ ԺԱՄԱՆԱԿԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ՖՐԱՆՍԵՐԷՆԷ

ՕՐ. ԶՈՒԱՐԴ Ֆ. ԷՄԱԼԵԱՆ

Ի ՆՊԱՍՏ

ՈՐԴԱԶՈՍՑԻՆ ԽԱՍԳԻՒՂԻ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. «ԱՐԵՒԵԼՔ» ԵՒ «ՄԱՍԻՍ» ԼՐԱԳՐԱՑ
1889

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Չ'կայ Անգլիոյ մէջ հեղինակ մը որ աւելի ճշմարիտ ժողովրդականութիւն վայելէ քան զՕրդ. Էճուօրթ, հեղինակ մը որոյ գործերն աւելի ախորժ ընծայեն հասարակաց և որոյ ընթերցումը կարենայ ներել մայր մը իւր աղջկանն։ Իւր մէն մի գրութիւնը նորավէպ կամ վիպասանութիւն՝ սքանչելի մանրամասնութեանց հետ ունի շնորհալի ձեւ մը, և զգօն խորհրդոյ մը հետ բարոյականի կարեւոր դաս մ'ալ կը բովանդակէ։ Իւր այս բարոյականը ցամաք քարոզութիւն մը չէ, այլ իւր հետեւանաց կարեւորութեամբն ախորժելի սկզբունք մը։ Արդի ընկերութեան ճարտար ստորագրութեանց առթիւ՝ հանճարեղ հեղինակը գիտէ խառնել նուրբ կատակն ամենահրապուրիչ ըզգացմանց հետ։ Իւր անձնաւորութեանց իւրաքանչիւրն ունի իւր սեփական կնիքն որ մեծ կորովով և շատ ճշմարտութեամբ գծուած են. իւր նկարագրած կանայք շնորհալից զուարթութեան մը հետ՝ առաքինութեան և արժանապատուութեան գրոշմը կը կրեն։ Բայց իւր մանաւոր ձիրքը՝ իւր տպանդին յատկանիշը պարզ և միանգամայն ներդաշնակ ոճն է։ Իւր նպատակը՝ ընթերցողն զբօսցնելէ աւելի զայն

բարուքել է և լրացնել այն առանին կրթութիւնն որուն նուիրեց նա իւր բոլոր տաղանդն ու կեանքը. վեհ կեանք մը զորոյ նկարագիրը չուզեց երբէք գրել նա և զոր միայն իւր երկասիրութեամբք կը ճանչնանք։ Ինք 1770 ին Իրլանտա ծնած է, և իւր առաջին գործերն ամենքն ալ հօրն աշխատակցութեամբ ի լոյս ընծայուած են։ Ուր ուրեմն ինքն ալ առանձին սկսաւ մատենագրել բազմաթիւ երկասիրութիւններ որք գրեթէ ամէն Եւրոպական լեզուաց թարգմանուած են, յորոց մեք ալ ծաղկաքաղիւ հրատարակեցինք երկու տարի առաջ Տարաբաղդն Մուսա և հիմա այս չքնաղ վէպը։ Իցի՞ թէ օր մը եւս իւր ընտրելագոյն հեղինակութեանց մէկ մէկ ճաշակը կարենայինք ընծայել մեր սիրելի ազգին գոնէ ցուցնելու համար թէ որպիսի մեծ տաղանդի տէր հեղինակք աշխատած են ընկերական բարուքման և կատարելագործութեան՝ ընտանեաց գաստիարակութեամբը։

ՈՒՂԵՐՁ

Սիրելի Մայր իմ,

Իմ աշխատութեան եւանդս վառ պահելու՝ եւ միանգամայն հասակակցացս օգտակար բարոյականի խրատ մը զուարճալի կերպով ընծայելու համար, թոյլ տուիր ինձ այս երկու փոքրիկ սիրուն բարոյավէպերն ի լոյս հանելու։ Իցի՛ւ թէ՝ մայր իմ՝ ըստ քո բաղձանաց օգտակար ըլլային այս իմ դոյզն աշխատասիրութիւնք որ ինձ համար անգին արժանիք մը ունին՝ որովհետեւ քո հովանաւորութեամբ կը հրատարակուին։

Դուստր քո հնազանդ

ՆՈՒԱՐԴ

ՎԱՂԸ

«Ոչ այդ նոզկալի «վաղը» — մեր ակընկալած, եւ սակայն երբէք չը գտած բան մը.» —

ՃՕՆԱԸՆ

Շատ ատեն է, որ գիտաւորութիւն ունէի իմ կենսագրութիւնս ընելու, և որոշեցի այսօր զայն սկսիլ, որովհետեւ կենսոյս քարի տրամադրութեանց կէսն ի գերեւ ելած են չնորհիւ իմ յուսի ունակութեանս ամէն գործ վաղուան յետաձգելու։

Երբ երիտասարդ էի ինձ սովոր էին ըսելու թէ այդ էր իմ մեծակ թերութիւնս, և ես կը հաւատայի անոր. և իմ ունայնամտութիւնս կամ ծուլութիւնս զիս կը համոզէին թէ այդ թերութիւնը չնչին բան մ'էր, և թէ կարելի էր դիւրաւ ուղղել զայն ժամանակին։ Սակայն այդ ժամանակը դեռ չ'եկաւ, և իմ տարաժամեալ սխոյս մէջ ուղղուելու ամէն խորհուրդ մէկդի թողու եմ՝ յուսալով միայն որ ճշմարիտ ապաշաւը բարուոքման տեղը կը բռնէ։

Հայրս Լոնտոնի նշանաւոր գրավաճառներէն

մին էր։ Պատահեցաւ որ աշխարհ եկած օրս ինք նոր կենսագրական բառարան մը աչքէ կ'անցընէր և այդ վայրկենին յորում ծնունդս իրեն աւետեցին, իւր մատը Բարսեղ անուան վրայ դրած էր. բարձրաձայն կարդաց. «Բարսեղ՝ կարգեալ ի թիւ սրբոց, Կեսարիոյ եպիսկոպոս, աստուածաբան՝ վիճաբան և բարոյախօս մատենագիր։» Իմ տղան, յարեց Հայրս, պիտի կոչուի այս մեծ մարդուն անուամբ, և կը յուսամ և կը հաւատամ որ պիտի ապրիմ զինքը տեսնելու համբաւաւոր աստուածաբան, վիճաբան և բարոյախօս մատենագիր մը, կամ եպիսկոպոս մը։ Այնչափ յաւակնութիւն չունիմ որ ակնկալեմ թէ այս երկու բարի բաներն ալ միանգամայն կ'ըլլան։»

Բարսեղ կոչուեցայ ըստ հօրս բաղձանաց և իմ տպագոյ համբաւիս և հարստութեանս վրայ ունեցած յոյսերն հաստատուեցան մանկութեանս միջոցին խելքի և յիշողութեան ցոյցուցած օրինակներովս, որք թերեւս ուրիշ փոքրիկ ինձ հասակակից տղայոց ցոյցուցածէն աւելի չ'էին, բայց ծնողաց դորոմանաց ունայնամտութեան տարօրինակ եւ թերեւս գերբնական կը թուէին։

Հայրս յայտարարեց որ ինձ անթերի կրթութիւն մը չը տալը մեղք կ'ըլլար՝ և մինչեւ հոգ իւր կարողութենէն վեր եւաւ ինձ ընձե-

ուելու համար ամենէն ընտիր դասախօսակու-
թիւնը։ Մինչդեռ տղեկ իսկ մ'էր մեծ մարդ
մ'ըլլալու գաղափարով դրդուած էր, և դա-
սատուներս բաւական ատեն գոհ ըլլալու ի-
րաւունք ունեցան. բայց ինչ որ «իմ արագ-
ընթաց յառաջադիմութիւնս» կը կոչէին իմ
ճշմարիտ յառաջադիմութիւնս կը յետաձգէր։
Այն դիւրութիւնն որով դասերս կը սերտէի
զիս կը քաջալերէր զանոնք վերջին վայրկեանին
սովրելու ձգձգել, և այս յապաղման սովո-
րութիւնն, որ յանձնապատասխանութեամբ կ'ըս-
կըսէր, ամօթով վերջացաւ։

Երբ հասարակաց դպրոց մը ղրկուեցայ գը-
տայ ընկերացս մէջ այնչափ ծուլութեան փոր-
ձութիւններ, որ «իմ արագընթաց յառաջա-
դիմութեամբս» հանդերձ սովորաբար շաբաթը
երկու անգամ ծեծ կուտէի։

Թերեւս մեծնալով, խելքս ինձ սովրեցու-
նէր ուղղել ինքզինքս, եթէ ունայնամտու-
թիւնս հօրս մի քանի անխոհեմ խօսքերէն,
ծոյլ մնալու գաղափարին մէջ կը հաստատուէր։

Երբ դպրոցէն տուն կուգայի տան օրերն և
երբ արտունջներ կ'ըլլային իմ վրայովս նա-
մակաւ դասատուացս կողմէն, հայրս, մինչեւ
իսկ զիս անհոգութեանս համար կշտամբելէ
վերջը, կը շողոքորթէր զիս ամենէն վտան-
գաւոր կերպով չարտունակելով — մեկուսի ըն-

տանէաց բարեկամաց — «Բարեկամ տարօրինակ տղայ մ՚է, —ինչ ուզէ, կրնայ ընել — իւր բոլոր դասատուներն այսպէս կ՚ըսեն — բայց անպիտանը ծոյլ շուն մ՚է, — բոլոր այդ մեծ մարդիկ բաւական այնպէս կ՚ընեն։ Զորօրինակ... ի՞նչ է անունը — ան որուն տպերգութեանց երբորդ տպագրութիւնը դեռ նոր հրատարակեցի — ան ի՞նչ ծոյլ շուն է. Եւ տակաւն ով իրեն չափ աղմուկ կ՚ընէ աշխարհիս վրայ, ան ալ ամէն բան վաղուան կը ձգձգէ, Բարեկիս պէս, բայց կրնայ վերջին վայրկենին աւելի գործ տեսնել քան որ և է Անգլիացի մը, այդ ալ եթէ խելքին փչէ. վասն զի խելքին փչած առեն միայն գործ կը տեսնէ... բնաւ ուշադրութիւն չ՚ունի... եթէ ուշադրութիւն ընել պէտք ըլլար կը խենդենար՝ կ՚ըսէ։ Ամենեւին մեծ մարդ մը չ՚եմ ճանչցած որ ծոյլ շուն մը չ՚ըլլայ։»

Եւ ոչ իսկ բան մը կը փախցնէի այսպիսի խօսքերէն մեծահանճար մարդու մը և ծոյլ շան գաղափարներն այնչափ սերտիս կապուած էին իրարու խելքիս մէջ, որ զանոնք զատել անկարելի էր, թէ իմ դատողութեամբս թէ դատաստանս խրատներով։

Կը պարծէի նոյն իսկ այն ունակութեամբ զոր դատարակներս կը ջանային ուզել։ Եւ բնաւ այնչափ ծանր մահապարտ կրած չ՚էի. իմ յիմարութեանս հետեւանքներէն մինչեւ

որ Էդբնի*) դպրոցին ընդհանուր քննութեանց միջոցին կարանցուցի առաջին մրցանակը, վերջին վայրկենին թողով՝ երբ ալ շատ ուշ էր՝ ոտանաւորի մը օրինակութիւնը լմնցնել։ Գրած տողերս՝ կ'լսէին ամէն նոր և հին բարեկամներս, գեղեցիկ էին։

Մրցանակը վաստակեցաւ ծնողն անուամբ մէկը, ծանր տղայ մը, որ ամենեւին հանճար չ'ունէր, բայց մեծ համբերութիւն մը։ Սակայն իւր ոտանաւորը լմնցած էր ճիշդ, ասենին։

«Զի դանդաղկոտն պէտք է ըլլայ միշտ կանոնաւոր»։

Անօգուտ էր իմ հառուածս՝ թէ և սիրուն, բայց միայն վերջը բարեկամներուս ձեռքէ ձեռք պտտցնելու ծառայեց, ցցունելու համար թէ ինչեր կրնայի ընել եթէ ժամանակին աւարտէի։

Հայրս չարաչար վշտացաւ որ կորսնցուցեր էի պատեհ առիթ մը նշանաւոր հանդիսանալու այդ հասարակաց հանդիսին մէջ՝ մանաւանդ որ թագաւորն իւր ներկայութեամբ պատուեր էր կաճառն, և որովհետեւ առաջին մրցանակ վաստակողները Նորին Վեհափառութեան ներկայացուցեցան, այնպէս ենթադրուեցաւ որ իրենց հանճարաւոր տղայ նկատուիլն՝ անոնց ա-

*) Էդբն՝ Անգլիոյ գեղեցկագոյն դպրոցաց մին է՝ ի Ուինտսրը՝ մօտ Համանուն գղեկին։

պոգոց յառաջադիմութեան մեծապէս նպաստաւոր պիտի ըլլար։

Այս բոլորն ալ հայրս զգաց և ինքզինքը մեղադրեց գիս քաջալերելուն համար հանճարոյս հեղգութեանս մէջ. որոշեց իւր նախկին անխոհեմութեան հակառակը գործելու և միտքը դրած էր, ըսաւ գիս միանգամայն բժշկելու իմ ձգձգելու սովորութենէս։ Ասոր համար վարառաւ դարակէն Եունկին գիշերուան մտածմունքը, որմէնչ կը յիշէր տող մը որ ամէն գիր գրողի սովորական առածը գարձած է. «Յապաղումը ժամանակին գողն է։ Գիրքը խառնեց ձգձգումն՝ ժամանակ՝ այսօր և վաղը, բաները բնուռելու համար, և քաղ մ'ըրաւ եօթը մեծ էջէ բաղադրեալ յապաղման վտանգները ցցունելու համար։ «Հիմա, սիրելի Բարսեղս», ըսաւ, այս է որ զքեզ պիտի բժշկէ բոլոր կենացդ համար, և զայս ջուրի պէս սորվելու ես, ապա թէ ոչ չիլին մ'անգամ չ'եմ տար քեզ գրիչ մը։» Փաստը շատ ազդու էր, և յոգնութեամբ, կրկնութեամբ և անէծքով, այդ սարսափելի վիճակներն այնչափ աղէկ մը ասցս մէջ տարբերեցի որ անոնցմէ քանի մը հատը մինչև ցայսօր մնացած են. Զորօրինակ.

Ժամանակն սպաննել

մնճաասպանութիւն է, յորում արիւնէն առաել է շուայլուածը։

Ժամանակը խոյս կուտայ՝ մանը կը փութայ եւ եւ։

Զձեզ չը տաղտկացնեմ սերտածներուս ամենն ալ կրկնելով և սրտի մտօք կը յուսամ՝ սիրելի ընթերցողս՝ որ այս վկայութիւնք աւելի ազդեցութիւն կ՝ունենան ձեր վրայ քան զոր ունեցան իմ վրաս։

Ամօթով կը խոստովանիմ որ մինչեւ իսկ Շէյքսպիրի պերճաբան այն տողերով

«Վաղն, եւ վաղն, եւ վաղն ելն։»

զոր ձրիաբար սերտեցի, բոլոր այդ քերդողական բարոյականով հանդերձ մաղ մ՝աւելի չը բարուոքեցայ։ Ինձմէ պակաս եղածն ոչ թէ յիմարութեանս վրայ համոզուած ըլլալս էր՝ այլ ինքզինքս ուղղելու որոշումը։

Երբ կ՝ըսեմ որ և ոչ խաւն ինչ այս խրատներով բարուոքած էի՝ մոռնալու չեմ դիտել տալու ձեզ որ քիչ մնաց տարին չորս հարիւր ռսկւոյ չահ մը անոնց շնորհիւ պիտի վատակէի։

Պարտաւորուած ըլլալով Եունկին գիշերոյ մոռացմունքէն այնքան բան տրվիլ, չափէն աւելի յափրացայ, և իմ ուշադրութիւնս շարժեցաւ քննադատելու այն տողերն որոց վրայ բանի գիս զարմացնել կ՝ուզէին։ Յետոյ երբ դպրոց գացի, կ՝ախորժէի պնդելու, հակառակ իմ ընկերներուս ոմանց որ զարնուած, աքանչացած էին Եունկին, թէ նա բանաստեղծ չ՝էր։

Որչափ ծագը կ'ըլլայի, այնչափ կը պնդէի։ Վրան խոսեցուցի, շատ մը Քէմպրիճի գիտնականաց հետ ծանօթացայ, իմ կարծիքս կամ՝ ինչպէս ոմանք կ'անուանէին՝ հերձուածս պաշտպանելու համար գրեցի Պնդեցի թէ ինչ որ ոմանք վանմութիւն կարծած էին պարզապէս ճամարտակութիւն էր. թէ գիշերուան մոռածմունքներն աւելի նրբամիտ խորհուրդներով լի էին քան բանաստեղծական պատկերներով։

Բաղդատութիւն մ'ըրի Եունկի և Գոլէի մէջ, և վերջապէս կ'ըսէի թէ Եունկ տառնութերորդ դարուն Գոլէն էր։ Ճշմարիտն ըսելով այս գրութեանս մէջ շատ սրամտութիւն կար և քիչ մը ճշմարտութիւն, բայց այս՝ կուսակցի մը բացագանչութիւնն էր որ կրնայ մըտածել խնդրոյ միայն մէկ կողմը և որ հակառճառութեան տաքութեան մէջ մոռացածէն աւելի կ'ըսէ, իւր առջի գիտաւորութենէն անդր կ'անցնի։

Շատ անգամ գրագիտաց մէջ կը պատահի առ ժամանակեայ հռչակ մ'ստանալ իրենց արժանիքէն վեր, մանաւորապէս եթէ յարձակին համբաւաւոր հեղինակի մը դէմ։

Իմ փոքրիս յաջողութիւնը գերազանցեց իմ ամենէն բարձր ակնկալութիւններս, և սկսայ կարծել թէ հայրս իրաւունք ունէր կարծելու թէ մեծ հանճար և մեծ մարդ մ'ըլլալու հա-

մեր ծնողներէն։ տաղանդաւոր մարդկանց պաշտպան ըլլալ պարծող քահանայի մը իմ վրայօքս տեղեկութիւններ խնդրելը գիս հատատուց իմ յաւակնութեան և յառաջադիմութեան յուսոց մէջ։

Ձեզ յիշատակեցի որ հայրս ի պատիւ իմ անուանակից Բարսեղիս՝ Կեսարիոյ Եպիսկոպոսին, և ճշմարտելու համար իւր բուն Նախագգացումներն, գիս եկեղեցականութեան կը սահմանէր։

Իմ այժմու պաշտպանս, որ գիս այնչափ աւելի սիրել կը թուէր որչափ աւելի տէր իրեն սեղանակից կը դառնուէի, ինձ առիթ տուաւ յուսալու որ գիս շատ գոհացուցիչ կերպով պիտի խնամէ։

Դեռ ձեռնադրուած չէի, երբ տարեկան չորս հարիւր ոսկւոյ հատոյթ մ'եկաւ իւր ձեռնհասութեան մէջ. պահեց զայն քանի մ'ամիս ինձ համար, ինչպէս կը կարծուէր։

Այն առեն ինձ ապսպրեց գրելու Ողորմութեան վրայ քարոզ մը, զոր պիտի արտասանէր, ինչպէս որ կ'ակնկալուէր բազմամբոխ ակմբի մ'առջեւ։

Անոնք միայն որ ձգձգելու ունակութեան գերի են պիտի հաւատան որ բաւական յիմար եղայ՝ ձգելու համար ճառին գրութիւնը մինչեւ վերջին շաբաթ երեկոյին, մինչդեռ կիրակի օրը պիտի կարդացուէր

Երիտասարդ ընկերներէս ոմանք եկան յանկարծ ինձ հետ ճաշելու. ուշ սեղան նստեցանք. երիտասարդ հեղինակի մ'ունայնամտութեամբն, որ կը պարծի արագ արագ շարադրելու, ինքնիրենս ըսի որ կրնամ քարոզս լմընցնել ժամուան մը մէջ։

Բայց աւա՜ղ, երբ ընկերներս վերջապէս գացին՝ գիս այնպիսի վիճակի մէջ ձգեցին որ կարելի չ'էր քարոզս ամբողջացնել։

Գունս տարաւ և գիս առաւօտուն Եպիսկոպոսին սպասաւորն արթնցուց։ Զգացած սոսկումն աննկարագրելի էր, ոտք ելայ. ժամը ինն էր. գրելու սկսայ, բայց ձեռքս և միտքս կը դողային և գաղափարներս այնչափ շփոթութեան մէջ էին, որ չը կրցայ, որչափ ալ մեծ էր հանճարս, պարբերութիւն մ'արտադրել քառորդի մը մէջ։

Եպիսկոպոսին ծառայն ժամացոյցով քառասուն վայրկեան վար դրի, երկու երես գրեցի աւրեցի և պատրաստեցայ վեր վար սենեկիս մէջ, պատռեցի երկու էջերն. և վերջապէս երբ սպասաւորն լսաւ որ ալ չ'էր կրնար սպասել, պարտաւորեցայ ձգել որ երթայ անիմաստ երկտողով մը, ինքզինքս արդարացնելու համար յանկարծի հիւանդութիւն պատճառելով. իրաւ էր որ բաւական հիւանդ էի այն երկտողը գրած միջոցիս, գլուխս սարսափելի կը ցաւէր. սենեակս

կեցայ մտածելով խենդութեանս վրայ, օրն ի բուն. հեռեւանքները կանխատեսեցի։ Հասոյթը ուրիշի տրուեցաւ պաշտպանիս կողմէն յաջորդ առաւօտուն, և բոլոր հանդերձեալ մեծագործութեան յոյսերս խպաս դերեւեցան։

Հայրս դիս չարաչար յանդիմանեց. և կարելի էր ուղղուէի այդ դէպքով, բայց անկարծելի բարեբաղդութիւն մը, կամ թէ ըսեմ ըստ իս բարեբաղդութիւն երեւցած դէպք մը՝ կրուտս պատճառեց։

Դպրոցի բազմաթիւ ընկերացս մէջ կար երիտասարդ սեպուհ մը, որուն հայրը ճիշդ սահմանուած էր Զինի հուշակաւոր դեսպանութեան երթալու համար. եկաւ մեր խանութը Տիւ Հալտ մը գնելու և լսելով որ եռանդուն փափաք կը յայտնէի Զին ուղեւորելու՝ իւր հօր դիմեց դեսպանախմբին հետ դիս ալ տանելու համար։

Դիս ներկայացուց իրրեւ հանճարեղ երիտասարդ մատենագիր մը, և քանի մը տնկաբանական գծագրութեանցս տեսքը զոր այն առթիւ դիտմամբ բաւական մաքուր չինած էի, ինձ առացուց այն շնորհը որուն այնչափ տենչանօք կը փափաքէի։

Հայրս առարկութիւններ կը հանէր իմ ճամբորդութիւն ընելուս դէմ։ կը նեղանար տեսնելով որ կը ձգէի այն արհեստն որուն համար

պիս գաստիարակեր էր, և չը կրցաւ, առանց խիստ պատերազմի մը՝ պիս Եպիսկոպոս տեսնելու յոյսերը ձգել. բայց ցուցուցի որ դեռ կարգ առած չ'ըլլալուս, անպատեհութիւն կամ անյարմարութիւն մը չը կար տեսակ մը կեանքէ խորշելուս մէջ որ յարմար չ'էր իմ հանճարիս։ Այս հանճար բառը սասակ ապաւորութիւն մը գործեց հօրս վրայ, և այս դիտելով յայտնեցի, բարձրաձայն, որ ունեցած փորձառութեամբս կատարելապէս ապահով էի որ քարոզ գրելու վարձկանութիւնը պիտի եղծէ հանճարս. և թէ ընդարձակելու և զօրացուցանելու համար մը-տացս կարողութիւններն անհրաժեշտ պէտք էր՝ մեծ մատենագրի մը խօսքն յիշատակելով՝ «Օտար աշխարհներու մէջ տեսնել նոր ապրելու եղանակներ։»

Նորէն արծարծեցան հօրս յոյսերն թէ իւր մարդասէրութեան կէսը պիտի վերջապէս կատարուէր և պիտի մեծ մատենագիր մ'ըլլայի, հաւանեցաւ իմ Զինուորան երթալուս, պայմանաւ որ իրեն խոստանամ գրել կամ ճամբորդութեանս պատմութիւնը, երկու ութածալ հատորներով, կամ մէկ քառածալ թերթ մը պատկերներով։

Խոստմունքս ըրի անմիջապէս, որովհետև իմ ընիկ կարողութեանցս վրայ լիուլի վստահութիւնն, ութածալներ և քառածալները կը

նուազեցնէին իմ առջեւս, և վիճակերի գիրք մը ինձ շատ պզտիկ կ'երեւնար այն զանազան տեղեկութեանց վրայ, և այն կարեւոր մտածմանց համար զոր Զինաստանի ճամբորդութիւն մը ազդելու է։

Ակնկալութեամբ և առաջադրութեամբ լեցուած կը խօսէի առաւօտն մինչեւ երեկոյ ճամբորդութեան վրայով, բայց մոռնալով հօրս ժամ առ ժամ յանդիմանութիւնները, պատրաստութիւններս վերջին շարթուան ձգեցի։

Այն տեղն ամէն բան անապարանք և շքփոթութիւն էր. դերձակներ և ճերմակեղէն կարողներ, պայուսակ և անոռկ, գրապանակներ և գծագրութեան տոպներ, ներկ, մատիտ և յուշատետր, խառնուեցան սենեկիս մէջ։ Ունէի երկվեցեակ մը պզտիկ յուշատետրեր և ահագին դէպ մը տեսրերու, զոր պահելու էի խնամուն և անմահ Լօքին տպագրած ձեւովը։

Վերջին օրուան կիսաւոր խառնակութեան մէջ, նատեցայ սեղանի մը ծայրը, կարկինով, քանակով և կարմիր մելանով բաժանելու և կարգադրելու համար կարելի եղածին չափ տեսրեր. բայց կարմիր մելանը շատ թեթեւ էր, և թուղթը ալէկ չափուած չ'էր, ուստի գրերը մինչեւ վերջը կ'աւրուէին, որովհետեւ պարտաւորուած էի երեսները շուտ դարձնե-

լու, և մելանը չը չորնար և ոչ ծծուն թուղթը կրնայ աւելի շուտ ծծել, հանճարի մը համար քան ուրիշ որ և է մարդու մը համար։ Ամէն զատ ուշադրութիւնս շատ ցրուած էր այն երկիւղիւ որ ճերմակարար կինը չը պիտի տուն ղրկէ իմ երկվեցեակ նոր շապիկներս, և թէ անպիտան յեռաձգող կօշկարար մը չը պիտի գայ նոր կօշիկներս բերելու։ Ամէն անգամ որ դուռը կը զարնէին կը ցատկէի հասկնալու թէ արդեօք շապիկներն էին կամ կօշիկներն։ Երեք անգամ կարմիրի և երկու անգամ սեւ մելանի ամանները թափեցի այս բոլոր շարժումներուն, և անէծքներն զոր շուայլեցի այս առեւտուրի պարապող մարդիկներուն, որ կը ձգէին ամէն բան վերջին վայրկենին՝ անհամար էին։ Հրաման ունէի որ Բորդոմութ գացող կառքն երթամ դեսպանին հետեւողներուն ընկերակցելու համար։

Գիշերապահն իբրեւ թէ զիս զայրացնելու համար՝ պոռաց։ «Տասնեմէկն անցաւ», քանակելու տեսրեաս կէսէն պակաս դեռ չը լմնցած։ Շապիկներս և կօշիկներս եկած չ'էին։ Կառքը՝ ինչպէս կրնաք դուշակել, առանց ինձ գնաց։

Խեղճ հայրս սարսափելի դողի մէջ էր և կը պոռտէր սենեակէ սենեակ, զիս և ինքզինքը յանդիմանելով։ Բայց պնդեցի կրկնելով որ

Լորտ Մ. չը պիտի մեկնի այն օրը զոր որոշեր էր. թէ ոչ ոք աշխարհի ստեղծմանէն ի վեր, մեծ ճամբորդութեան մը ելած էր առաջուց միտքը դրած օրը. առ նուազն հարիւր հազա-նականութիւն կար ինձ համար որ այս Լորտը պիտի կասեցնէր ճամբան իւր Բորդոմութ երթալու առաջը, թէ հովը յաջող չը պիտի ըլլար երբ հոն հասնէր, թէ իւր հետեւողներուն կէսէն աւելին ինձմէ աւելի փութկոտ պիտի չ'ըլլան եւ եւ։

Այս փաստերով կամ պարզ ենթադրութեամբք հանգստացուցի հօրս երկիւղները և իմիններս, և հաւանեցանք, որովհետեւ անկարելի էր նոյն օրն երթալ, յաջորդ օրուան ըսպասեցինք։

Երբ Բորդոմութ հասայ առաջին լսածս այս եղաւ որ Աւիւճն և Հնդկաստանը ճամբայ ելեր էին քանի մը ժամ առաջ, Զինաստանի դեսպանութեամբ։ Անյուսութիւնը զիս պատպանծեցուց. ինչեւանին բարեսիրտ մէկ սպասաւորը տեսնելով տրտմութիւնս և մտածելու կամ որ և է բան մը գործելու խապտռ անկարողութիւնս, վազեց հարց ու փորձ ընելու և բերաւ ինձ սա ուրախալի լուրը թէ Զաքալ եռակայմը՝ որ պիտի տանէր դեսպանին ուղեկիցները՝ դեռ առաջատած չ'էր, թէ պարոն մը որ պիտի երթար Զաքալով կերթակուր կերեր էր

նոյն փողոցը պանդոկի մը մէջ, և գայեր էր ծովին եզերքը տասը վայրկեան առաջ։ Իր եռեւէն վազեցի. մակոյկը մեկներ էր։ Վճարեցի մեծ դին մ'որ գիս և արկղերս ալ նաւտանին, և Զաքալին հասայ ճիշդ երբ խարիսխը վեր կը քաշէր։ Զար բաղդ մը ինձ համար։ Այն վայրկենին որ ինքզինքս անվնաս գտայ նաւին վրայ, և կրցայ խօսիլ՝ գոչեցի «Նաւն եմ, անվնաս, ճիշդ իրրեւ թէ երեկուընէ ի վեր հոս եղած ըլլայի, իրաւ որ աւելի ալ ազէկ. ո՜հ, ասկեց վերջը բարի բաղդիս պիտի վստահիմ։ Գիտէի որ շատ ուշ չը պիտի մնայի։»

Երբ կրցայ պաղ արեամբ մտածելու, տրրտմած էի որ կորսնցուցեր էի անցքս Առիւծին վրայ, բարեկամիս և պաշտպանիս, և դեսպանին ուզեկցաց ամենէն գիտնական և հանճարեղ մարդոց հետ, որոց ներկայացուած էի, և որ շատ բարեյօժար կ'երեւէին ինձ նկատմամբ։ Բոլոր առաւելութիւններն զոր շահած պիտի ըլլայի իրենց խօսակցութենէն, այն երկայն ճամբորդութեան միջոցին, ինձ համար կորուած էին իմ անհոգութեանս պատճառաւ։

Զաքալն անջատեցաւ Առիւծէն և Հնդկաստանէն Մանչի նեղուցին մէջ։

Ինչպէս որ բարեկամներս վերջը ինձ ըսին, մեզ սպասած էին հինգ օր Բրայա ծոցին մէջ,

բայց Զաքալը չ'երևալուն՝ գայեր էին զայն թողով։

Վերջապէս մեծաւ ուրախութեամբ դիտեցինք Սումադրայի ծովեզրին քով ցոլ մը գամուած թուղթ մը. մեր բարեկամք զայն հոն թողեր էին մեզ տեղեկացնելու համար թէ Առիւծն և Հնդկաստանն այն տեղ գտնուած էին այս ինչ օր, և մեզ ցցունելու թէ ո՛ր ճամբէն երթալու էինք իրենց հետ միանալու համար։

Այս գիրը տեսնելով շունչ առի. հովը մեզի նպաստաւոր էր. բայց, աւա՜ղ, երբ կ'անցնէինք Պանքայի նեղուցն այնպիսի փեսաներ կրեցինք որ պարտաւորեցանք ետ դառնալու նաւը նորոգելու և նոր պաշար առնելու համար։ Մշ ոք կար նաւին մէջ որ չը փոփոքէր որ իրենց բաղդն եղած ըլլար տեղ մ'ունենալու միւս նաւերուն մէջ։ Եւ ես ամենէն բարձրաձայն քան միւսները կը յայտնէի այս փոփոքը քան անգամ օրը։

Երբ ընկերներս իմացան որ պիտի ուղեւորէի դեսպանին նաւին մէջ, եթէ առնին հասնէի Սրիթէտ, ոմանք զիս ծաղրեցին, բայց շատերն ըսին որ անհոգութեանս պատիժը կը կրէի։ Վերջապէս Առիւծին և Հնդկաստանին միացանք Հիւսիսային կղզին։

Մեր բարեկամք բոլորովին անյոյս էին զմեզ

նարկն տեսնելու, և բերել տուեր էին Պա-
դավիայէն Ֆրանսայի նաւ մը Զաքալին տեղը
փոխանակելու համար։

Ի՜նչ մեծ հաճոյք զգայի երբ կիս ընդունե-
ցան Առլուծին վրայ, և խօսակցութեան պա-
տեհութիւնն ունեցայ գրագէտ և գիտուն մար-
դոց հետ որոնցմէ այնչափ տարաբաղդաբար
անջատուեր էի. համբորդութեան մեծ մասը։
Իրենց խօսակցութիւնն արծարծեց և աճեցուց
զիրենք երբ ինձ պատմեցին բոլոր ինչ որ զբր-
կուեր էի տեսնելէ զանազան տեղերն ուր հան-
դիպեր էին. ինձ խօսեցան յուսահատեցու-
ցիչ ճոխութեամբ մանիօքի մշակութեան վը-
րայ, Քասավայի*) արմատին, որով թարիւ-
քան կը շինուի, Քաքդիւս կոչուած թփին,
որուն վրայ կարմիր որդան ճճին կը ժողվուի
և կը սնանի, և Իրէքաքուանհայի վրայ,
բոլոր ինչ որ Ռիօ-տէ-Ցանէյրօ տեսեր էին՝
բացի ութը պատկերներէ որ կը ցուցնէին թէ
ինչ եղանակաւ ադամանդներն և ոսկւոյ հան-
քերը Պրազիլին մէջ կը գործուէին. յիրաւի հա-

---

*) Քասավը՝ որ Եւրոպա կուգայ ճերմակ սակու կամ թաքիօքա անուամբ՝ տեսակ մը հաց կամ բլիթ է մանիօքի արմատով պատրաստուած։ Քասավը հասարակ ուտեստ մ'է ի Հնդիկս՝ և Եւրոպական գաղթականութեանց սեւերուն սնունդեան հիմը կը կազմէ։

բեւանցի մը նայելով, գտայ որ այս պատկերներն խեղճ կերպով չինուած էին, և հազիւ տեսնուելու արժանի։

Ամենէն աւելի կսկիծ զգացի չը տեսնելուս գեղեցիկ շօճենիներն, որք՝ ընկերներուս խօսքին նայելով՝ այնչափ առատութեամբ կային որ իրենց թուրերն անոր մէջ կը մաքրէին՝ հոն գտնուած ամենէն ոժան թթուուան ըլլալուն։ Բայց այս հեռաքրքրական նուաստ առարկայներէն աւելի, ցաւեցայ չը տրվելուս բան մը նշանաւոր Ուբաս*) ծառին վրայով։

Ապահով էի որ եթէ Պադովիա ըլլայի, աւելի ճիշդ տեղեկութիւններ պիտի ստանայի քան ինչ որ այս պարոնայք բժշկական պարտիզի վերատեսուչներէն ստացած էին։ Կը խոստովանիմ որ այս չ՚աջողածս թեանս վրայ զգացած վիշտս բնական պատմութեան սէրէս չը ծագեցաւ. Ուբաս ծառն նշանաւոր պատկեր մը պիտի ընծայէր իմ քառածալ գիրքիս։ Սակայն ինքզինքս մխիթարեցի միտքս գնելով որ կէտ մը չը փոխցնեմ այն ամէն բաներէ զոր

*) Ուբաս՝ ճավա կղզւոյն տեսակ մը մեծ ծառն է յորմէ սոսկալի թոյն մը կը սրի։ Ընդհակառակ՝ այս և քանի մը այլ ծառոց հիւթով՝ տեսակ մը թոյն կը կազմեն որուն մէջ իրենց նետերը կը թաթխեն՝ և որոյ ամենադոյզն կաթիլ մը կը բաւէ սպաննելու ամենէն մեծ կենդանիները։

ընդարձակ Զինի կայսրութիւնը կրնար ընծայել իբր աշխատանք, գրօսանք, գիտնական զուարճալիք և վնեմ բան։ Երեւակայութեամբ կանխեցի այն յոխորտ հաճոյքն որով պիտի ընդունէի բարեկամաց և ժողովրդեան շնորհակալութիւններն իմ «անգին և աննման երկասիրութեանս վրայ։» Երեւակայեցի այն ըզգացումն որով պիտի պարծէր հայրս իւր որդւոյն համբաւը լսելով և տեսնելով իւր գուշակութեանց լրացումը, և այս մտածմամբ լեցուած գլխուս մէջ հասանք ի Մէտոս՝ Զինաստանի մէջ։

Ուշ նստայ գիշերն ուրուագծելով ներածութեան պրակներուս սկզբնաւորութեանց համար գիտելիքներ։

Յոգնած էի. խորունկ քնոյ մէջ ինկայ և երազեցի որ Զինի կայսեր կը սովրեցնէի հնչել «քրօնոն Սնդրօղլօկոս» բառն, և տառուանց արթնցայ կոնկին*) ձայնով. նշան էր որ Ցընքերը (մակոյկ) պատրաստութիւններն աւարտած էին ճամբորդելու համար դեսպանին հետ ի Բէյքին։ Շտապաւ հագուստներս վրաս նետեցի, և նաւակին մէջ էի կոնկին զօրանքը չը դադրած։

---

*) Զինաց եւ Ճապոնաց երաժշտական գործիք մըն է կոնկը. պարզ մետաղեայ թիթեղ մ'է զոր կ՝շեպատ ցօղով մը զարնելով՝ օրուանդուստ հնչիւններ կը հանեն։

Արագութեանս վրայ պարծենցայ. բայց հաղիւ թէ երկու փարսախ գացեր էինք, ճամպարելուս վրայ գղջացի։ Ուզեցի նշանակել առաջին ապաւորութիւններս Զինատանի հողը մտնելուս առեն. բայց աւա՜ղ, պարապ տեղը մառիտս և յուշատետրս բնուռեցի. զանոնք ձրդեր էի անկողնիս քով։ Ոչ միայն մէկ յուշատետրն՝ այլ երկվեցեակն ամբողջ, զոր Լոնտրան ձգելու առենս դրեր էի պարկի մը մէջ գիշերնոցիս հետ։ Պարկ. գիշերնոց, նշանագիրք, ամէն բան մոռցուած էր։

Որչափ չնչին ալ երեւայ այս պզտիկ տետրակայ կորուստը, կարեւոր հետեւանք ունեցաւ։

Անտարակոյս, դիւրին էր թուղթ գտնել և ուրիշ մը չինել. բայց ձիշդ այնքան դիւրին ըլլալուն, ժամէ ժամ ձգձգեցաւ և պարտաւորուեցայ գրել ամենէն կարեւոր դիտողութիւններս թղթի կտորուանքներու վրայ, որ միշտ յաջորդ օրն օրինակուելու էին գրքի մը մէջ զոր պատրաստելու էի։

Բէքին հատանք, և սքանչելապէս օթեւանեցինք պալատ մը այդ քաղքին մէջ. բայց այնքան խատիւ պահուած էինք, որ չէինք կրնար երերալ պալատին մէջ։

Պիտի ըսէք որ այս բանտարկութեան առեն, բաւական ժամանակ ունէի յուշատետր

մը յօրինելու և նշանագրերս ընդօրինակելու. այդ այդպէս էր, և դիտաւորութիւնս ալ էր այնպէս ընել, բայց զայն մէկդի ձգեցի. որովհետեւ կարծեցի որ միայն քանի մը ժամ պիտի բաւէ, և թէ ո՛ր օրն ըլլար կրնայի ընել։

Ուր թողունք որ այնքան տաք էր, որ առաջին շաբթու ուրիշ բան չը կրցայ ընել բայց եթէ շապիկիս կոճակները քակել և օշարակ խմել։

Մանտարիններու հանդիսաւոր այցելութիւնները մեր առեղին շատն առին. կը խօսէին և կը շարժէին մեքենայի պէս. և շատ դժուարութեամբ մեր թարգմանը մեզի կը հասկցնէր ըսածնին, որ հազիւ նշանագրուելու արժանի էին։

Տեսանք որ ինքզինքնին կը հովահարեն, թէյ կը խմեն, կ՚ուտեն անուշ կերակուրներ և բրբինձ և պէդէլ կը ծամեն. բայց հազիւ կարժէր Եւրոպացին գալ զատանք տեսնելու, մասնաւորապէս անոր համար որ քանի մը Չինի հատարակ թղթեր կամ հովահար՝ ճիշդ գաղափար մը կրնան տալ այս իրաց իրենց սովորական ձեւերով։

Ուրիշ շաբաթ մ՚ալ անցուցի ծաղրելով այս չարաչար ապուշ կամ յանօգուտ բծախնդիր արարողութեանց հետամուտ արարածներն, և յիշատակարաններ պատրաստեցի ճարտարախօս

պրակի մը համար ապագայ երկասիրութեանս մէջ։

Առաւօտ մը ախորժելի զարմանք պատճառեց մեզ Մանտարինի մը այցելութիւնն որ բոլորովին տարբեր մէկն էր։ Զարմացմամբ տեսանք Զինի հագուստով և Մանտարինի անունը կրող մարդ մը որ մեզ հետ գաղղիերէն կը խօսակցէր. մեզ տեղեկացուց թէ գաղղիացի Յիսուսեան մըն էր, և Ցրանսայէն եկեր էր Զինաստան քանի մը քարոզիչներու հետ. բայց երբ իրենց արգիլուեցաւ քարոզութիւն ընել՝ անոնցմէ շատը Գաղղիա վերադարձան։ Քանի մը հատը մնացին և երկրին տարազն ու լեզուն առին, և բարձրացեր էին Մանտարինի աստիճանն իրենց գիտութեան։

Մեր Զինացւոյն խօսակցութիւնը շատ կը ուարճալի և հմտալից էր, շատ գոհ էր Ցրանսայէն լուրեր իմանալուն և մենք իրմէն կը բաղձայինք ստանալու տեղեկութիւններ Զինաստանի վրայ։

Մանաւոր խնամ տարի իրեն, և իւր վստահութիւնը գրաւելու բաղդն ունեցայ, որչափ Յիսուսեանի մը վստահութիւնը կարելի է գրաւել. ինձ յաճախ այցելութեան եկաւ և պատիւ ըրաւ քանի մը ժամ հետս անցընելու սենեակիս մէջ։

Որովհետեւ հասկցուց թէ ասոնք պարզապէս գրագիտական այցելութիւններ էին, և բարի համարում կը վայելէր ուրբաթեան առջև, կասկած չը յարոյց, և ասոնցիս ամենազուարճալի կերպով անցուցինք գրքերով և խօսակցութեամբ։ Ինձ իւր մանրամասնելով և ստորագրութիւններով, մանրամասն տեղեկութիւն մը տուաւ Բէքինի բակչայ բարուց վրայով զոր ուրիշ կերպով չէի կրնար ստանալ։ Իւր նկարագրական հանճարն աքսնչելի էր, և իւր նկարագիրք այնչափ նոր էին ինձ համար որ միակերպ հիացման մէջ էի։ Զինքը Զինացի Լապրիւյէր կը կոչէի. և մտօքս կանխելով իւր տուած պատկերներուն իմ գրելիք ապագայ երկասիրութեանս մէջ ընելիք ազդեցութիւնը, մոռացայ որ երբէք չը պիտի բաւականանամ ծախսելէ իւր ճարտարախօսութիւնն։

Ուրախ էր Զինական Մանտարինի մը հանդիսաւոր ծանրութիւնն ի բաց ձգելով, իրեն գաղղիական աշխոյժն առնուլ. իւր ունայնամտութիւնն իմ գովեստներէս ախորժ կը զգար և ամէն ճիգ թափեց բարձրացուցանելու համար իւր հանճարին վրայ ունեցած համարումս։

Վերջապէս ազդ արուեցաւ մեզ որ կայսեր հաճոյ թուած էր ընդունելու դեսպանն իւր Տէհիոլ կայսերական պալատը Թաթարիստանի մէջ՝ ախորժելի զովութեան վայրն, անհամար

ծառոց պարտէզն։ Տեղւոյն անունէն իսկ կը գուշակէի որ բարեյաջող տեղ մը պիտի ըլլայ հանճարի ներշնչութեանց համար, եւ որոշեցի նշանակելու առ նուազն դրելիք գիրքիս մէկ պզտիկ ապագայ գործիս մէջ այս սքանչելի առանձնութեան վրայով, Զինասանի Sans Souci։ Այս դիտաւորութեամբ Թաթարխանի ուղեւորութեանս պատրաստուեցայ։

Ազնիւ բարեկամս, Ցիսուսեանն, որ խնդիր մ'ունէր ներկայացնելու կայսեր քանի մը Զին ձեռագրաց վերաբերեալ, որոշեց՝ մեծ հաճոյք պատճառելով ինձ, ճիշտ ուղեկցիլ մեզ, եւ մեր առաջնորդող Մանտարինը, Վան-Թատ դործերն այնպէս մը կարգադրեց մեր ճամբորդութեան միջոցին, որ զուարճացայ կարելի եղածին չափ բարեկամիս իրատակցութեամբն։

Բնաւ մէկ Եւրոպացի մը ճամբորդող այս երկիրներուն մէջ չ'ունեցաւ ինձ չափ առաւելութիւններ։

Ընկեր մ'ունէի որ կարող եւ փափագող էր ինձ ուսուցանելու ամէն մանրամասնութեամբ այս ժողովրդեան սովորութիւններն եւ իւր տէրութեան եւ քաղաքականութեան ամէն ընդհանուր սկզբունքները։

Վտանգի մէջ չ'էի ճամբորդի մը այլանդակ սխալներուն մէջ իյնալու, որ, մասնաւոր տեսութիւններ ունենալով առարկայներուն եւ

մարդիկներուն վրայ՝ անհեթեթ կը պատճառաբանեն եւ անճառնի կերպով կը թիւրին մինչդեռ անվրէպ ըլլալ կը պարծենան։

Շատ մարդ, ինչպէս դաղղիա ի մանտարինը գիտեց, կը խորհին Վոլդէրի նշանաւոր ճամբորդին պէս որուն պատահեր էր ունենալու գիւեղէր պանդոկապետ մը եւ շիկահեր պանդոկապետուհի մը առաջին պանդոկն ուր իջաւ յԱլզաս։

Գրեց նա իւր յուշատետրին մէջ, «Բոլոր Ալզասցիք արբշիռ եւ իրենց կանայք շիկահեր են։»

Երբ Ցիսիոլ հասանք, մեր կայսեր ներկայութեան պատրաստութեան յուզումն, յարմար գրասենեակի մը չգտնուիլն, և գուցէ յետաձգելու ունայնութիւնս, արգիլեցին ինձ ապագայ աշխատութեանս համար պրակս պատրաստել, եւ արձանագրել այն դիտողութիւններն զոր Ցիսուսեանն ըրեր էր մեր ճամբորդութեան միջոցին։ Առաւօտ մը երբ թղթերս և յիշատակարանի կտորներն՝ որոնք հագուստներուս գրպաններն լեցուն էին՝ կը կարգադրէի, սարսափած մեացի խառնիխուռն շեղջ մը տեսնելով և նետեցի այս բոլոր ապագայ քառածալիս նիւթերն ըստուար կտաւէ պարկի մը մէջ, միտքս դնելով շարայարել զանոնք թղթապանակի մը մէջ յաջորդ օրը։ Բայց միւս օրն այս տեսակ բան մը

չը կրցայ ընել, որովհետեւ հարկ եղաւ հակերկն դուրս հանել անգլիական ընծայներն որ Բէքինէն հասեր էին. յաջորդ օրը կայսեր ներկայացուելու գործով բոլոր ժամանակն անցաւ, և միւս օրը նոր յաստակագիծ մ'ունէի գլխուս մէջ։ Կայսրը շատ շքով ներկայացուց իւր իսկ ձեռամբ մեր դեսպանին արկղիկ մը որ ըստաւ, ամենէն արժանաւոր ընծայն էր զոր կրնար ընել Անգլիոյ թագաւորին։ Կը պարունակէր կայսեր նախնեաց մանրանկար պատկերներն բանաստեղծական քանի մը տողերով իւրաքանչիւրին քով աւելցուած, նկարագրելով նոցա բնութիւնն, և պատմելով իւրաքանչիւր իշխանաց թագաւորութեան միջոցին նշանաւոր դիպուածներն։

Ինձ թուեցաւ որ նմանօրինակ պատկերներ և բանաստեղծական պատմութիւններ Անգլիոյ թագաւորներուն վրայով՝ յարմար և ախորժելի նուէր մը պիտի ըլլար Զինաստանի կայսեր. խորհրդակցեցայ բարեկամիս՝ դատպիտցի Մանտարինին հետ, և դիս քաջալերեց ապահովցընելով որ՝ ըստ իւր կարծեաց հիմա մանաւորապէս յարմար պիտի ըլլար կայսեր ճաշակին, և հաւանօրէն պիտի պատուէր դիս իւր հաճութեան քանի մը նշաններով կամ շքեղ վարձքով մը։ Բարեկամս խոստացաւ ունենալ մանրանկարներն, ինձ համար Զինացի ճաշակին

համեմատ յերիւրուած, և իւր վրան առաւ կայսեր ներկայացնելու աշխատութիւնն երբ գործն աւարտի։

Որովհետեւ կը կարծուէր թէ դեսպանութիւնը պիտի Բէյքին անցունէ ձմեռը, մտածեցի որ բաւական ատեն կ'ունենամ լմնցունելու Անգլիոյ թագաւորաց շարքը։ Հարկ չը կար շատ զգուշաւոր ըլլալ իմ պատկերներուս նմանութեան մասին, որովհետեւ Զինի կայսրը չ'էր կրնար դիւրաւ երեւան հանել այս տեսակէն սխալ մը։ բարեբաղդութեամբ բերեր էի Լոնտոնէն ինձ հետ բոլոր Անգլիոյ թագաւորաց աչքի զարնելու չափ ճշգրիտ պատկերներն իրենց իշխանութեանը նշանաւոր դիպուածներովը, մեծ թղթի թերթի մը մէջ, որ պզտիկ հօրեղբօրորդուցս միոյն կը վերաբերէր։ Ծրարներս կապելու շփոթութեան ատեն, զայն դրեր էի անտուկիս մէջ, Օրացոյցի տետրի մը տեղ որ մի և նոյն սեղանին վրայ դրուած էր։ Կենացս ընթացքին մէջ շատ բաղդաւոր դիպուածներ ինձ հանդիպեր էին նոյս իսկ անզգուշութենէս, սակայն նոյն անզգուշութիւնն արդիլեր էր ինձ ամէն ատեն բարի բաղդէս օգուտ քաղելու։

Բայց այս պարագայիս մէջ տրամադիր էի որ ոչ մի հեղգութիւն ինձ չ'արդիլէ բաղդս ընելու պատեհութիւն մը։

Սկսայ անմիջապէս աշխատիլ, և բարեկամս զարմացուցի այն դիւրութեամբ որով ոտանաւոր կը գրէի։

Սովորութիւնս էր քաշուիլ մեր պալատին տեսակ մը ննջարանի մէջ որ երկար պատշգամի մը ծայրն էր, ամենէն դուրսի սրահներուն միոյն մէջ ուր մեր ամբաձիգ զօրք սովոր էին հանդէս ընելու։ Իրենց հանդէսը լմննալէն վերջը, տեղը բոլորովին լռիկ և առանձին էր օրուան մնացորդն և գիշերը։ Սովոր էի ուշ նստելու, գրելով, և գեղեցիկ լուսնոյ գիշեր մը, անկողնէս դուրս ելաւ պատշգամին մէջ պտըտելու համար, շարագրելով քանի մը տող մեր մեծ Եղիսաբէթ թագուհւոյն վրայով։

Զը կրցայ ըստ քմաց աւարտել վերջին երկտող ոտանաւորն. նստեցայ արուեստական ապառաժի մը վրայ որ բակին կեդրոնն էր, գըլուխս ձեռքիս վրայ յենլով, և երբ կը փընտռէի ճոխ յանգ մը փառք բառին՝ քունս տարաւ։

Որոտընդոստ աղմուկ մը զիս արթնցուց և գետին ինկայ երեսիս վրայ։

Երբ ուշաբերեցի սրահը մարդով լեցուն էր, քանի մը Եւրոպացի, քանի մը Զինացի կ'երեւային՝ հազիւ իրենց անկողնէն ելած՝ կանթեղներ և ջահեր ձեռքերնին. ամէնն ալ տխրադէմ կը հարցնէին իրարու թէ ինչ հանդիպեր

էր։ Գետինը ցիր և ցան կտորուանք սիրբուած էին՝ փայտէ սիւներով, փոխաթներով և պամպուխ բանուած գաւազաններով. նայեցայ և տեսայ որ պատշգամին ծայրն, ուր պարտեր էի՝ և անկողնոյս յատակը կործաներ էր հիմնայատակ։ Հրացանի վառօդի բարկ հոտ մը կար։

Հիմա կը յիշեմ որ զինուորէ մը վառօդի տուփ մը առեր էի առաւօտուն, ատրճանակներս լեցունելու համար, բայց յետաձգած էի այդ գործը։ Հրացանի վառօդով լեցուն տուփը դրուած էր սեղանին վրայ բոլոր օրը անկողնոյ սենեակին մէջ, և ատրճանակներն ալ, դուրս՝ որոցմէ պարպած էի առջի գնտակները։

Երբ դուրս ելեր էի պատշգամին մէջ պարտելու համար, մոմը վառուած ձգեր էի. և կը կասկածիմ որ քնոյս միջոցին կայծ մը ինկեր էր վառօդին վրայ, ատով բռնկեցաւ տուփն և անկողնոյ սենեակն. ննջարանը թեթեւ փայտէ և եղէգէ շինուած էր, և միայն եղէգնաշէն սրահակով մը պատշգամին հետ կը հաղորդակցէր. եթէ այդպէս եղած չ'ըլլար վտանգն աւելի մեծ պիտի ըլլար։

Ինչպէս որ էր, պայթումն ոչ միայն վախցուցած էր բոլոր դեսպանին հետեւողներն՝ որ այն արքունեաց մէջ կը բնակէին՝ այլ շատ մը

դրացի Զինացիներ որ չ'էին ըմբռներ թէ ինչպէս այդ դէպքը պատահեր էր։

Մեր բոլոր մարդիկն ալ անգթաբար յանդիմանութիւններ հեղեղեցին իմ վրաս, և իմ ապաշաւիս մէջ՝ ժամանակ կամ առիթ չ'ունեցայ իմ Անգլիոյ թագաւորաց շարքիս կորստեան վրայ ողբալու. բան մը իրենցմէ մնացած չ'էր, և այս պատկերներուն վրայ բոլոր աշխատանքս կորսուած էր Զինի կայսեր և ինձ համար։

Ամենէն դէշն այն էր որ չ'էի կրնար ոչրուսունջի խօսք մ'ընել, որովհետև մարդ չը կար որ ինձ համակարծիք ըլլար, բոլոր ընկերներս այնչափ վախցած էին անհոգութենէս, և այնչափ արագահաս եղան այս դիպուածին դէշ հետեւանքներն։ Զինացիք որ սարսափեր էին, և անտարակոյս դժգոհ մեկներ էին՝ հարկաւ պատահածը պիտի ըսէին քաղքին մանտարիններուն, և անոնք ալ կայսեր պիտի պատմէին։

Միտքս դրի կարծիք հարցնելու բարեկամս, Ցիսուսեանին, բայց նա մեր կասկածներն նուազցնելու տեղ աւելցուց. ըսաւ թէ գործը շատ իսսակցութեան նիւթ եղած էր ի Ն։ Հ։ և դէշ գոյներով ներկայացուած էր և Զինացիք, ընութեամբ վախկոտ և օտարականներէն կասկածոտ, չը պիտի կրնան հաւատալ թէ դիտաւորութիւն չ'ունէինք իրենց թշնամանք մ'ընելու, և թէ պայթումը դիպուածական էր։

Տղայ մը վիրաւորուեր էր ենջարանին փլատակաց տակ, որ ընկեր էին ամենայն ուժգնութեամբ դրացւոյ տան մը վրայ. տարճանակիս մէկ կտորը դանուեցաւ փողոցին մէջ, զայրացած խուժանը զայն դատաւորին տարեր էր իբր նշան մեր չարամիտ գիտուորութեանց։

Յիսուսեանս դիտեց որ կարելի չ'էր ազգի մը կանխակալ կարծեաց դէմ մրցիլ ջանալ, և ինձ խոստովանեցաւ թէ այս տարաբաղդ դիպուածը ծանրակշիռ հետեւանքներ պիտի ունենայ։

Ինձ խորհրդարար պատահմունք մը պատմեր էր որ շատ հաստատել կը թուէր իր այս կարծիքն. քանի մ'օր առաջ, երբ կայսրը գացեր էր դիտելու Անգլիոյ հրապինուց ընծայներն, և երբ կը փորձէին պղնձի ռմբերը, թէ և կը զմայլէր այս կործանարար գործեաց ճարտարութեան վրայ՝ բայց յարեր էր թէ կը պարտաւէր այն ազգին ոգին որ զանոնք կը գործածէր, և չ'էր կրնար իրենց պատերազմի արուեստներուն մէջ յառաջադիմութիւնը պատշաճ տեսնել իրենց գաւառած կրօնքին հետ օրինացը։

Բարեկամս, մանտարինն, խոստացաւ որ պիտի ընէ իւր բոլոր ձեռքէն եկածը ճշդիւտ եղելութիւնն հասկցնել ասլու համար կայսեր և վատթար տպաւորութեան դէմն առնելու հա-

մար, զոր ժողովրդեան կանխակալ կարծիք, և թերեւս քաղաքացի մանտարիններուն դիտմամբ ըրած կեղծիքը պիտի յարուցանէին։

Անտարակոյս Ցիսուսեանիս բարեացակամութիւնն ի դերեւ եղաւ, և կամ խիստ հրաման մը ընդուներ էր չը խառնուելու մեր գործոց, կամ կը վախնար մասնակցած իսկ համարուիլ մեր աղէտից՝ եթէ շարունակէր ինձ հետ իւր տեսակցութիւնն, որովհետեւ այն եղաւ իւր վերջին այցելութիւնն։

ԳԼՈՒԽ Բ.

Քանի մ՚օրէն դեսպանութիւնն հրաման ընդունեցաւ Բէյքին վերադառնալու։ Դեսպանին ապարանքը պատրաստուած էր իւր ձմեռնային բնակութեան համար, և մեր հասնելէն վերջը դեսպանը կը յարդարէր իւր օթեւանն, երբ կայսերական նոր պատուէր մը հասաւ որ կը հրամայէր մեզ պատրաստուիլ Զինաստանի հողէն դուրս ելլելու անվիջապէս։

Երկուշաբթի օրը ընդունեցանք հրաման մը Բէյքինը ձգելու յաջորդ չորեքշաբթին և մեր բոլոր դիտողութեամբք հապիւ կրցանք երկու օր յապաղեցնել անոր կատարումը։ Զանազան

պատճառներ կը տրուէին այս կորուկ հրամանին, որոց մին էր նաեւ իմ չարագոյժ դիպուածս ալ։ Որչափ ալ անկարելի կ'երեւայ որ այսպիսի անոտիք մը այսչափ մեծ հեռեւանքներ ունենայ, այն կարծիքն ընդունուած էր ընկերացս շատէն, և տեսայ որ ինձ չար աչքով կը նայէին։

Սաստիկ կերպով կը տանջուէի։ Շատ անգամ դիտած եմ, որ նոյն իսկ իմ անցած անհոգութեանս վրայ զգացած խղճի խայթս կը ձգտէր աւելցնելու իմ բարուցս բնաբոյս դանդաղութիւնը։

Մեր Բէքինէն ի Ֆանդոն ըրած ճամբորդութեան ատեն, այս վերջին դէպքիս վրայ զգացած խիղճս ինձի բարուրք մ'եղաւ նոր յիշատակագրեր կամ դիտողութիւններ չ'ընելու։ Երբ Ֆանդոն հասանք, ատենս կ'անցընէի քանի մը բարեկամաց յանձնարարութեամբ զոր դիտաւորութիւն ունէի կատարելու ի Բէքին, կարծելով որ բոլոր ձմեռը հոն պիտի անցընենք։ Արկղերը նաւին վրայ էին իմ բոլոր յանձնարարութիւններս դեռ չը կատարած, և պարտաւորուեցայ դիզելու քանի մը խաղալիկներ և ուրիշ բաներ կոզովի մը մէջ։

Իմ թղթերուս գալով՝ դեռ մնացած էին կտաւէ պարկին մէջ ուր զանոնք ձէֆիոլ գրտնուած ատենս նետեր էի, բայց ապահով էի

ատեն գտնելու համբերութեանս միջոցին, զանոնք կարգադրելու և գետեղելու թղթատպանակիս մէջ։

Համբերութեանս սկիզբը, ծովէն շատ առնջուեցայ. երբ համբուն կէսը հասանք, աղէկցայ, և կը պրսնուի ճուկ բռնելով եթէ օդն աղէկ ըլլար. երբ օդը բաց չէր ծոյլ ծոյլ ժամանակաց կ'ըլլայի։

Անթիւ ուրիշ յաղագսն պատճառներ եղան. այնքան շատ ուտելիք և խմելիք կար, այնչափ շատ երգել և խնդալ, և այնչափ թուղթ խաղացող ընկերին մէջ, որ թէպէտ կատուէ պարկս հարիւր անգամ չրջրջեցի, երբէք չը կրցայ ատեն գտնել մէջինները դուրս հանելու. շատ շատ կապերը կրցայ քակել մէկ երկու անգամ։

Օր մը ամբողջ ընկերին իմ տրամադրութեանս թողուած գտայ, և յիրաւի աշխատանքս սկսեր էի, երբ ապատուորն եկաւ ինձ խնայնելու որ ծովը Զինական կողմս տարեր էր։ Կողմին մէջն էին բոլոր ընծայներն և յանձնարարութիւնները զոր գներ էի ի Քանդոն իմ հայրենակից բարեկամներուս համար։

Վազեցի ընկերին պատուհանն և տրամութեամբ տեսայ իմ բոլոր գեղեցիկ բաներս, էլուսի հօրեղբօրաղջկանս հոմահարն և զանազան խաղալիկներ, զոր գներ էի պզտիկ հօրեղբօրս-

գիներուս համար, ամէնն ալ ծախծուփ իմ ձեռնհասութենէն շատ հեռու։ Իմաց տրուած էր ինձ կողմը ծով իյնալէն առաջ թէ կրնայ իյնալ, և արամադիր էի զայն ապահով տեղ մը դնելու, բայց տարաբաղդաբար շատ ուշացուցի։

Այնչափ վշտացայ այդ գիպուածին որ չը կրցայ գրիչս շարժել. եթէ այս ընդմիջումն եղած չ'ըլլար, կարծեմ որ այն օրը պիտի լմընցունէի այդ յեռոնգած աշխատանքը։ Չ'եմ ուզեր, մանաւանդ թէ չ'եմ կրնար, յիշել ամէն մանր պատճառներն որ այդկից վերջը գիս չը ձգեցին գիտաւորութիւնս գործադրելու։ Թղթերը դեռ մի և նոյն խառնակութեան մէջ էին, նետուած կտաւէ պարկին մէջ, երբ Անգլիա հասայ։

Մխաքս դրի որ գանոնք մի և նոյն օրը կարգի դնեմ, բայց բարեկամաց շնորհաւորութեան այցելութիւններն իմ վերադարձիս համար՝ գիս չը թողուցին բան մ'ընել առաջին շաբթուն։

Յաջորդ շաբաթը շատ հրաւէրներ ընդունած էի. բոլոր ծանօթներս, հետապրգիր ըսելու մարդ մ'որ Զինուոռանէն եկեր էր, հրաւիրեցին գիս ճաշի և շայ խմելու. չ'էի կրնար մերժել այս մտերմական հրաւէրներն, և փակուիլ սենեկիս մէջ, իբր վարձկան գպիր մը

գրելու համար։ Հայրս շատ անգամ գիս պարտաւորեց աշխատանքս սկսելու, որովհետեւ գիտէր որ ուրիշ պարոնայք, որ դեսպանին ուղեկցեր էին, իրենց համբորդութեան պատմութիւնը գրելու տրամադիր էին, և ինք գրավաճառ ըլլալով, կը հասկնար թէ ինչ պիտի պատահէր։

Իմ առն գալէս տասնեհինգ օր վերջը, հետեւեալ ազդը երեւցաւ լրագրաց մէջ «Մամլոյ տակ՝ և անմիջապէս հրատարակելի՝ Անգլիոյ դեսպանին ի Չինաստան ուղեւորութիւնը, պարունակելով դեսպանութեան պատահած զանազան դէպքեր, նոյնպէս ի մասին Չինաց հագուստներուն և տարազներուն տեղեկութիւնք, և նկարագրութիւն մը երկրին, քաղաքաց և»։

Երբէք տեսած չէի խեղճ հայրս այնչափ դունատիլ, կամ աւելի զայրանալ քան երբ այս ազդը կարդաց. ինձ կարկառեց զայն ճաշի սեղանին վրայէն։

«Ահաւասիկ, Բարսեղ, ազաղակեց, քեզ ըսի թէ ինչ պիտի հանդիպէր, և ինձ չ'ուզեցիր հաւատալ։ Բայց այս ճամբով է որ ինձ ծառայեցիր բոլոր կենացդ մէջ, և այս ճամբով պիտի շարունակես մինչեւ քո մահուան օրը, ամէն բան վաղուան ձգելով։ Այս ճամբով է որ կորսնցուցիր ամէն պատեհ առիթ նշանաւոր հանդիսանալու, ամէն բաղդ (և շատ ալ ու-

նեցար) ինքզինքդ աշխարհիս մէջ առաջ տանելու։ Ինչ բանի ծառայեց քեզ համար ըրածս, կամ ինչ որ դու կարող ես ընելու քու անձիդ համար։

«Քու հանճարդ և կրթութիւնդ քեզ անօգուտ են։ Ինչո՞ւ, ահաւասիկ այս դանդաղ շունը, ինչպէս որ զայն յէդըն կը կոչէինք՝ ճօնսըն՝ նայէ ինչպէս առաջ կ'երթայ աշխարհիս մէջ, իւր գործին պարապելով։ Ամէն բանի մէջ գքեզ պիտի անցնի, ինչպէս որ բանաստեղծութիւն գրելով յէդըն անցաւ զքեզ։»

«Միայն զանոնք օրինակելով, տէր։ Իմ բանաստեղծութիւններս իրենէն շատ աղէկ էին. միայն տարտարադարար, իմիններս ատենին լըմընցուցած և օրինակած չ'էի։»

«Աղէկ, պ. Ռոն, և այս է ճիշդ պատճառն որու համար կը գանգատիմ քու վրադ։ Ապահով եմ որ՝ ինձ պիտի ըսես թէ քու Զինի համբորդութիւնդ շատ աւելի աղէկ պիտի ըլլայ քան այն որ այս առաւօտուն ազդարարուեր էր։»

«Ապահով այդ այդպէս պիտի ըլլայ, հայր, որովհետև պատեհութիւններ ունեցայ, և նիւթեր հաւաքեցի զոր այս մ.ոդն՝ ով ոք ալ ըլլայ, չ'է կրցած ստանալ։ Անպիտի օգնութիւն գտած եմ, այնչափ տեղեկութիւններ հաւաքած եմ Ցիտուսեան բարեկամէս...

«Ազէկ, բայց ինչ կարեւորութիւն ունին քու Ցիսուսեանդ՝ քու տեղեկութիւններդ, քու կարողութիւնդ և քու նիւթերդ, աղաղակեց հայրս, ձայնը բարձրացնելով։ Գիրքդ չինուած չէ, գիրքդ երբէք չը պիտի լմննայ, կամ շատ ուշ պիտի լմննայ, և մարդ զայն չը պիտի կարդայ, և այն ատեն զայն կրնաս կրակը նետել։ Հոս ունիս քու համբաւդ հաստատելու պատեհութիւն մը, և ինքզինքդ մէկէն ի մէկ մեծ հեղինակ մը հանդիսացնելու, և եթէ զայն ձեռքէ փախցնես, գիտցած ըլլաս, Բարսեղ, երբէք չը պիտի ներեմ քեզ։»

Հօրս խոստացայ աշխատանքս վաղն սկսելու, և զինքը խաղաղեցուցի ըսելով որ ամապարանոք տպագրութիւնն, որ ազդարարուեր էր, պարզապէս գրատական խնդիր մ'էր, և թէ աւելի պիտի ծառայէր գրգռելու ժողովրդին հետաքրքրութիւնը քան թէ զայն գոհացընելու։

«Իմ քառածալս, ըսի, պիտի՝ վերջը երեւան ելլէր և պիտի փնտռուէր ամէն գիտուն ճաշակաւոր և մտաւորական մարդերէն։»

Այս ապահովութեամբ ամրանալով, հայրս իւր զուարթամտութիւնը նորէն ձեռք առաւ, և իմ յաջորդ օրը մեծ աշխատութեանս ձեռնարկելու խոստմանս հաւատաց։ Փոխարքով լի էի։ Կատէ պարկիս դացի նիւթերս պատրաստելու

համար։ Աւա՜ղ, զանոնք սոսկալի վիճակի մը մէջ գտայ։ Ծովի ջուրը որեւէ կերպով մէջը մըտեր էր ճամբորդութեան առեն, և իմ ամենէն կարեւոր թղթերէս շատը բոլորովին անընթեռնելի եղած էին։

Յիշատակարանները՝ մատիտով գրուած՝ բոլորովին ապրուած էին և երբ յղկեցի եղծեալ կտորներն անոնցմէ իմաստ մը չ'էի կրնար հանել։ Շատ դժուարութեամբ կրցայ կարդալ մինչեւ իսկ մելանով գրուածներն, այնչափ շարաչար եղծուած և այնչափ սոսկալի կերպով քերուած էին։

Երբ բառերն երեւան կը հանէի, իմաստ մը կազմելու համար շատ անգամ կը շուարէի, որովհետեւ այնչափ վատահ էի իմ յիշողութեան ընտիր ըլլալուն որ յիշատակարաններս երբէք հարկ եղածին չափ ամբողջ կամ անվնաս չ'էին։ Այնպիսի գաղափարներ որ կործած էի թէ երբէք մոքէս չ'էին կրնար ապրուիլ՝ հիմա բոլորովին մուցուած էին և չ'էի կրնար ես ինքս հասկնալ իմ խորհրդաւոր զեղչեալ նշաններս և յիշատակարաններս։ Կը յիշեմ որ երկու ժամ անցուցի ջանալով գտնելու հեռեւեալ բառերուն նշանակութիւնը. fioj — ալլա — fiojա — fiojա — fioj — առ. ոչ fiojա։

Վերջապէս յիշեցի որ Զինացի նաւաստիներուն գործածած բառից ձայներն էին, որ-

բաններդը քարշած առեննին, և շատ բարկացայ առեն վառնելուս յիշել ջանալով բան մը որ յոգնութեան արժանի չ'էր։ Ուրիշ օր մը շըփոթած մնացի հետեւեալ յիշատակարանէն. «Ո. Զ. 30. ո. ր. 24 լ. 120 մ. — ի — մանտարին - Ս. աւանդութիւն — 2000 — 200 Բ. Զ. —» երեք քառորդ աշխատութենէ վերջը, գտայ որ նշանակութիւնն էր՝ Որմ Զինաստանի 30 ոտք բարձր, 24 ոտք լայնք, և 120 մղոն երկայնութիւն, մանտարին մը ինձ ըսեր էր թէ ըստ Զինական աւանդութեան, այս պատը շինուեր է 2000 տարի առաջ որ կ'ընէ 200 մեր Փրկչին ծննդենէն առաջ։

Ուրիշ թղթի կտորի մը վրայ, պարկին խորը, այս բառերը գտայ. «Հուխազու — Շանչին — Գուտպօդով — Գանգշիմֆօա — Գալլազօդուէն — Շանսին ելն.» որոց ամէնն ալ գտայ որ քաղաքներու և գիւղերու անուանք էին ուսկից անցեր էինք, կամ պալատներու զոր տեսեր էինք. բայց չէի գիտեր թէ ինչպէս զանոնք մէկ մէկէ զանազանելու էր, որովհետեւ անոնց ամէն յիշատակները մոքէս ելեր էին, և իրենց վրայ նշաններ ալ չը կրցայ գտնել։

Օրերով յոգնելէն վերջը պարտաւորուեցայ յիշատակարաններս կարդալու ամէն յոյս թողուլ նոյն իսկ ամենէն կարեւորներն, անոնք

զոր գաղղիացի Ցիսուսեանն ինձ հաղորդած էր։ Իմ քառածալիս համար պատրաստուած նիւթերը միայն պզտիկ տետրի մը վերածեցան։ Սակայն յուսացի որ իմ ոճիս գեղեցկութիւնն, և բարոյական և քաղաքական խորհրդածութիւններն որովք դիտաւորութիւն ունէի աշխատանքս գեղազարդելու, պիտի փոխարինեն նիւթոց նուազութեան՝ պատմութեանս մէջ։ Իմ բոլոր խնամքս տալու համար իմ գրութեանս, որոշեցի Լոնտոնէ հեռանալ, ուր այնչափ ծուլութեան փորձութիւններ ունէի, և գացի այցելութիւն մը տալու իմ Էօու հօրեղբօրս, որ կ՚ապրէր գիւղի մը մէջ, Անգլիոյ առանձին մէկ կողմը։

Նալուածատէր մ՚էր, պարզ, զգայուն, սիրելի մարդ մը, և որովհետեւ շատ անգամ զիս հրաւիրած էր զինք երթալ տեսնելու, ապահով էի, որ իրեն ախորժելի հիւր մը պիտի ըլլամ Մոքէս չ՚անցաւ գրելու քանի մը տող երթալէս շաբաթ մը առաջ՝ իմացնելու համար որ կուգայի, բայց վերջին վայրկենին ձգեցի, մինչեւ որ այլ եւս մոռացեցի որ անօգուտ պիտի ըլլար գրելն, որովհետեւ հոն պիտի հասնէի նամակիս հետ։

Բայց իսկոյն իրաւունք ունեցայ զղջալու այսչափ անհոգ ըլլալուս. որովհետեւ հօրեղբօրս ներկայանալս իմ կարծածիս պէս ընդհա-

նաւը ուրախութիւն պատճառելու տեղ, չիւ-
թութեան մէջ ձգեց բոլոր տունը։

Հանդիպեցաւ որ տան մէջ բազմութիւն
կար, և բոլոր անկողինները բռնուած էին, երբ
կոշիկներս կը հանէի, ոչ սակաւ տրտմութեամբ
լսեցի որ Լօու հօրաքոյրս կ'ըսէր այլայլած և
յանդիմանական ձայնով մը. «Եկա՞ծ, ի՞նչն,
— Ասուած իմ — Անկողին մը ո՞ւր գտնենք։
Ի՞նչպէս ալ մոքէն անցեր է հոս գալ տոպ մը
չը գրած — Տէր Ասուած — Ցիրուի կ'ուզէի
որ հարիւր մղոն հեռու ըլլար։»

Հօրեղբայրս ձեռքս թոթուեց, և ինձ շնոր-
հաւորեց իմ վերադարձս ի Հին Անգլիա և յիւր
տուն, որ՝ ըստ՝ ամէն առեն իւր բոլոր ազ-
գականաց բաց պիտի մնար։ Տեսայ որ սխորժած չ'էր, և որովհետև այնպիսի մարդ մ'էր
որ, Անգլիացի առաջին հանդիպումս, չ'էր կրնար
բան մը երկայն առեն պահել սրտին վրայ, իմ
կենացս առաջին գարեջրոյ գաւաթը պարպե-
լէն առաջ, ինձ խնդրուց թէ, իրեն տարօրի-
նակ բան մը կ'երեւէր որ իւր այնչափ անդամ
ըսելէն վերջն, որ նամակ մը գրեմ առեն ա-
ռեն, միայն ըսելու համար թէ ինչ ըրի և ինչ-
պէս գացեր էի, երբէք գրած չ'էի գրիչը թուղ-
թին վրայ պատասխանելու իւր նամակաց մի-
այն, առաջին օրէն յորում խոստացեր էի իրեն
գրելու, որ Էգրնի դպրոցը գացած օրս էր,

մինչեւ այս խօսելու միջոցին, ինքզինքս պաշտպանելու լաւ փաստ մը չ'ունէի բայց ամէն շքմեղանք փորձեցի, շատ մը ձեւեր բանեցուցի իրրեւ թէ օրէ՛ օր, և տարուէ տարի գրելս ծգծգեր էի, մինչեւ որ ամչցայ գրելու, թէ զանոնք չը սիրելիս չ'էր ելլն։

Հօրեղբայրս ծխափողն հանեց, մուխ մ'արձակեց խօսած ատենս, և երբ որ բոլոր գիտցածս արտաբերեցի, լուռ նստայ, որովհետեւ տեսայ իրենց երեսէն որ գործը չ'էի կրցած շտկել Հօրաքոյրս ալ բերանը բացաւ, և զարմացաւ, եթէ ճշմարտութիւնն ամբողջ ըսելու է, որ Պ. Բարսեղի պէս մեծ մանչ մը, չ'էր կրցած, երբ այնչափ դիւրաւ պիտի կարենար նամակ մը գրել, քանի մը տող գրել՝ հօրեղբօր մը որ այնչափ անգամ իրմէն խնդրած էր զայն, և մ,ինչ անոր արտագին բարեկամն եղած էր։»

«Անոր վրայ մ'երկարեր, ըսաւ հօրեղբայրս, կ'արհամարհեմ զայն հաշուին մէջ անցընելու։ Տղան կը սիրէի, և կրցածս ըրի։ յիրաւի, ատոր ըսելիք չը կայ, բայց հազար տարի ապրիմ, երբէք գինքը չը պիտի խռովեմ նամակ մ'իրմէ խնդրելով։ Որովհետեւ հիմա կը տեսնեմ որ մազի չափ փոյթ չը տանիր ինձ, և հարկաւ ես ալ մազի չափ իրեն հոգ չ'եմ ըներ։ Լիւսի, դլուխդ վեր առ, ապրիկ, և մի կենար իր-

բեւ թէ զքեզ կախելու տանէին։»

Լիւսի, հօրեղբօրաղջիկս, միակ ներկայ անձն էր որ ինձ կարեկցիլ կ՚երեւէր. և, երբ աչքերս վեր առի իրեն նայելու համար իւր հօրը խօսած առեն, ինձ բոլորովին գեղեցիկ երեւցաւ։

Ամէն առեն զինք սիրուն աղջիկ կարծած էի, բայց երբէք շատ տարօրինակ բանի մը պէս աչքիս զարկած չ՚էր մինչեւ այդ վայրկենին։ Շատ տրտմած էի հօրեղբայրս վշտացնելուս. սակայն որ տուգիւ առնուած էր, և իւր դառնութիւնն, որ շատ մեծ էր, վրան ունեցած գորովն յաղթահարեր էր։

«Աւելի դիւրին է կորանցնել բարեկամ մը քան վատակիլ, ողոյ, ըսաւ նա, և խօսքս նայէ, խենդ բան է կորանցուցնել բարեկամ մը իրեն նամակ գրել չ՚ուզելով։ Եօթը տարի կ՚ըլլայ որ քեզմէ նամակ մը խնդրած եմ առեն առեն, և չը կրցայ հատ մը ստանալ։ Երբէք ինձ չը գրեցիր տող մը Զինատան երթալէդ առաջ, և ատոր վրայ բան մը չը պիտի դիտնայի, եթէ կինս որ քեզ դիպուածով Լոնտոն տեսեր էր, և քանի մը փոքր յանձնարարութիւններ ըրած էր ողոցը համար՝ ինձ ըսած չ՚ըլլար. ատոնք ալ կ՚երեւնայ թէ մոռցեր ես մինչեւ որ ալ շատ ուշ էր։ Վերջն երբ վերադարձար, երբէք ինձ բան մը չը գրեցիր։»

«Եւ մինչեւ իսկ չը գրե՞լ տող մը իւր այս երեկոյեան հաս գալը մեզ իմացնելու համար, շարունակեց հօրաքոյրս։»

«Ո՜հ, անոր համար, պատասխանեց հօրեղբայրս, երբէք մեր շտեմարանը դատարկ չը կրնար գտնել։ Զինական ոճով կերակուրներ չ'ունինք իրեն համար՝ բայց հին Անգլիոյ բոսպիֆին գալով աշխարհիս բոլոր օտար կերակուրները կ'արժէ, բարով եկաւ զայն ճաշակելու, և ուզածին չափ։ Ամէն առեն ուրախ պիտի ըլլամ գինքն իրր ազգական և այլն տեսնելու, ինչպէս բարի քրիստոնէի մը կը վայլէ, բայց ոչ առաջուան պէս իրր սիրական, անոր տարակոյս չը կայ, որովհետեւ բան մը չը կրնար թէ՛ շինուիլ թէ քակուիլ, և ժամանակն որ անցած է չը կրնար վերադառնալ, այդ յայտնի է, և պաղ ջուր նետուած տաք սրտի մը վրայ զայն կը մարէ, և ամէն բաներն ալ վերջ մը կայ։ Լիւսի, գիշերնոցս բեր։»

Լիւսի կարծեմ անգամ մը հառաչեց, և ապահով եմ որ ես ատաներկու անգամի չափ հառաչեցի։ բայց հօրեղբայրս դրաւ իւր կարմիր գիշերնոցն, և ալ մեզ փոյթ չ'ընար։ Կը յուսայի որ յաջորդ առաւօտուն, աւելի ազէկ տրամադիր պիտի ըլլար ինձ նկատմամբ, իւր բարկութեան վրայ գիշեր մը անցած ըլլալով։ Այն վայրկենին որ երեւցայ առաւօտուն, որ-

զայք՝ որ առջի երեկոյին եկած ատենս պատկած էին, բոլորովքս գիշուեցան և մէկը պոռաց. «Հօրեղբօրորդիս Բարսեղ, քու խոստացած գլանիկդ ինձ բերի՞ր Զինատանէն»։

«Հօրեղբօրորդիս Բարսեղ, ո՞ւր է նաւակս».

«Ա՜հ, Բարսեղ, քու ինձ խոստացած սընտուկդ բերի՞ր».

«Եւ կ՚ապաշեմ, ապաղաղեց հօրաքոյրս, Էլիսիս բերի՞ր իւր ապապրած հովահարը»։

«Ոչ, ապահով, բաւ հօրեղբայրս, ան որ եօթը տարուց մէջ իւր բարեկամաց չը կրնար նամակ մը գրել, չը պիտի կարող ըլլայ իւր գլուխը տաղտկացնել անոնց այսպիսի խենդ պատուէրներով, երբ որ դուրսն է։» Թէև ա-

մութ ահար և զայրացած էի, որովհետև մէջ բաւական քաջութիւն գտայ պատասխանելու համար որ բարեկամացս յանձնարարութիւններն հոգացեր էի. բայց տարտարոզ դիպուածով մը, այն կողովն՝ որուն մէջ այս բոլոր առարկայները դրեր էի, ձուլ ինկեր էր։

«Հը՛մ, մելրաց հօրեղբայրս։

«Կ՚ապաշեմ, բաւ հօրաքոյրս, ինչո՞ւ համար ամէնը կողովի մը մէջ դրուած էին։ Ինչո՞ւ համար քու անուանդերուդ մէջ չ՚էին, որ անվնաս մնային։»

Պատրաստուեցայ խոստովանելու թէ մեր Բէքին ձգելն վերջը զանոնք գներ էի. և արդէն անուանները շոգենաւը դրուած էին իմ զանոնք Քանդօն գնելէս առաջ։

Իմ յապաղման չա՛ր ունակութիւնս։ Այդ վայրկենին՝ անոր համար որչափ նեղուեցայ։ Լիւսի սկսաւ զիս արդարացնելու փորձել, որով ինքզինքս աւելի մեղադրեցի. — բաւ որ իւր հոխհարն իրեն շատ քիչ կամ բնաւ իսկ օգտակար պիտի չ՚ըլլար. և թէ ապահով էր որ զայն պիտի կտրէր շարաթ մը գործածելէն յետոյ, ուստի և գոհ էր զայն չ՚ունենալուն։

Տղայք իրենց պահանջմունքն ամբակայոյզ կը շարունակէին նաւուն, գլանիկի և անուակին կորստեան համար, բայց Լիւսի յաջողեցաւ զանոնք հանդարտեցնել, և զիս հաշտեցնելու ըն-

տանեաց ամենէն դեռահասակ մասին հետ։

Հօրեղբօրս աչքը մոռնել անկարելի էր, անընդհատ կը կրկնէր «Մա ուղան իմ համարումս կորանցուց, երբէք ազէկ բան մը ընելիք չ'ունի։ Իւր ուղայութենէն ի վեր ամէն ընելիք գործը կը ձգձգէ յաջորդ օրուան։ Երբէք ազէկ բան մը չը պիտի ընէ, երբէք բան մը ըլլալիք ալ չունի։»

Հօրաքոյրս ինձ բարեկամ չ'էր, որովհետեւ կը խիթար որ Լիւսի գիս կը սիրէր։ և մտածեց որ իւր աղջիկն աւելի ազէկ բան կրնար ընել քան այնպիսի մարդու մը հետ ամուսնանալ որ իրեն վիճակեալ արհեստը ձգեր էր, և շատ ալ երես չ'ունէր ուրիշ ասպարիզի մը մէջ թեւակոխելու։

Իմ հանճարոյս պահանջուհիներն և իմ մտոնագրական ձիրքերս ինձ օգտակար չ'էին, ո՛չ հօրեղբօրս և ոչ հօրաքրոջս առջեւ, մին ազէկ մշակ մը միայն ըլլալուն և միւսը պարզապէս ազէկ տանտիկին մը։

Բաւականացան միայն ինձ պաղ արեամբ հարցնելու, թէ ի՞նչ գործ տեսեր էի մատենագիր ըլլալով։ Եւ երբ պարտաւորուեցայ պատասխանելու թէ ոչինչ, գիս ծաղրելով մը ժըպտեցան։ Գուռզութիւնս զայրացաւ և պարծենցայ թէ առ նուազն վեց հարիւր ոսկի առնուլ կը յուսայի, «Զինատանի ճամբորդու-

թեան» համար զոր կը յուսայի լմնցունել քանի մը շաբաթէ։ Հօրաքոյրս զարմանօք երեսս նայեցաւ, և իրեն ցուցնելու համար որ ճշմարտութեան սահմաններէն անդին չ'էի անցներ, աւելցուցի որ ուղեկցաց մին, ինչպէս որ հաւատեաւ տեղեկացեր էի, ընդուներ էր հազար ոսկի. իւր շարագրածին համար, քան զոր իմ գերազանց պիտի ըլլար։

«Երբ որ ըլլայ, և երբ ունենաս ոսկը ձեռքիդ մէջ մեզ ցուցնելու համար, այն ատեն քեզ կը հաւատամ, ըսաւ հօրաքոյրս, և այն ատեն, և ոչ անկից առաջ՝ կրնաս Լիւսիին մը տածել։»

«Երբէք զայն պիտի չ'առնէ, ըսաւ հօրեղբայրս, դարձի գալիք չ'ունի նա, երբէք։ Երբէք զայն պիտի չ'առնէ։»

Այն ժամանակը զոր քառասնամեայ խմբագրութեան նուիրելու էի, հիմա կ'անցընէի ապարդիւն յոգնութեամբ հօրեղբօրս աչքը մըտնելու համար։ Սէրը, հակառակութեամբ արծարծեալ՝ սրտիս տիրացաւ. և ի՞նչպէս մարդ մը սիրոյ մէջ կրնայ գրել ուրիշ ատենէ աւելի։ Յոյլ եղայ, որովհետեւ ինքզինքս համոզեցի որ ոչ մէկ ջանք պիտի չը յաջողին եղծելու հօրեղբօրս նախապաշարումն ինձ դէմ, և առանց իւր հաւանութեան, անկարելի էի ընդունելու Լիւսիին ձեռքը։

Հօրեղբօրս քով կեցած ատենս, քանի մը նամակ ընդունեցայ հօրմէս յոյս կը հարցնէր ինձ թէ ի՞նչպէս ուխտաւորքս յառաջ կ'երթար. և ինձ կը պատուիրէր կարելի եղածին չափ շուտ գործել, որովհետև ուրիշ «Ուղեւորութիւն ի Չինաստան» մը պատրաստուելու վրայ էր, մեծ արժանեաց տէր անձի մը կողմէ և անյապաղ պիտի տպագրուէր և իմս բոլորովին պիտի խափանէր։ Խենդութիւնս չ'եմ կրնար պատմել. ունակութեան մը զօրութիւնն աննշմարելի է անոնց որ անդգայացեալ կը հընազանդին անոր բռնակալութեան։

Օրէ օր շարունակեցի յապաղել և ոչնչալ, մինչեւ որ վերջապէս ապիտարեր լուրն հասաւ որ Պ. Դէորք Ագաունդը «Պատմութիւն Դեսպանութեան ի Չին» մակագրով երկհատոր մը կը հրատարակէր։

Բոլոր յոյսերուս վերջ տուաւ այս։

Յուսահատութեամբ ձգեցի հօրեղբօրս տունը. հայրս տեսնելու կը դողայի։

Չիս պէտք եղածին չափ նախատանօք ծածկեց։ Իւր բոլոր ակնկալութիւնքն իմ աշխարհիս մէջ յաջողելուս ի դերեւ ելեր էին, հիմա ապտոով էր որ երբէք հանձարս ինձ կամ ընտանեաց պատակար չէր պիտի ըլլար. խորին թաղծութիւն մը տիրեց իւր կերպարանքին վրայ։ Այլեւս գադրեցաւ զիս ատիպել, որ և է

գործոյ մը, և ծուլութեամբ կ'անցուցնէի ա-
ռանց, որպէսզի որ Լիւսիին հետ չէի կրնար
ամուսնանալ և միաքս դնելով յառաջ երթալու
համար հարար միջոցներ բայց միշտ վաղուան
ձգձգելով անոնց գործադրութիւնը։

ԳԼՈՒԽ Գ.

Երկու տարի այսպէս անցան յորմէ վերջը
խեղճ հայրս մեռաւ։ Չ'եմ կրնար պատմել այն
կսկիծի և անձնական կշտամբանաց խառն զգա-
մունքն զոր խնայեց իւր մահուան առթիւ։ Գի-
տէի որ երբէք չէի կատարած իւր սրտարուխ
մարգարէութիւնքն, և թէ, անյուսութիւնն իւր
մոռաց վրայ շատ առեն տիրեր էր։ Այս խիստ
հարուած մը եղաւ ինձ համար։ Այշութեան
վիճակէս սթափեց զիս իրրեւ հօրս ժառանգ
գործելու հարկը։ Իւր հրխառակին խնդրուա-
ծոց մէջ հատ մը կար որ մանաւորապէս սրբ-
ոյս գալու, որովհետեւ զգայի որ ինձ հա-
մար ունեցած գորովէն գրգռեալ գրած էր.
«Կուսամ և կը կատարեմ իմ Բարեկ որդւոյս
այն պատկերը, զոր չինել տուած էի երբ ար-
ղայ մ'էր (շատ յուսատու ոգայ մը) էգբն
գոլրոցն, իմ Լօտ եղբօրս։ ըսելու էի մանա-

ւանդ իմ քաղցր եղբօրաղջկանս, Լիւսի Լօուի, բայց զինք վշտացնելէ կը վախնամ։»

Պատկերը Լօու հօրեղբօրս ղրկեցի, կտակին բառից մէկ օրինակաւն, և նամակով մը որ գրուած էր կսկծանաց դառնութեամբ։ Հօրեղբայրս, որ գորովալիր բայց դրական բնութեան տէր մարդ մ'էր, հետեւեալ պատասխանն ինձ ղրկեց.

Միրելի եղբօրորդիս Բարսեղ,

Ապահով գիտնալով որ ինձ չափ կ'զգաս, և բնական է՝ թերեւս ալ աւելի՝ չը պիտի արգիլեմ Լիւսիին իմ բարի եղբօրս կտակած պատկերն առնուլ. նա չ'էր կրնար դիս վշտացնել մեռած ատենն, երբէք ապրած ատենը դիս վշտացուցած չ'ըլլալով։ Քեզի գալով, Բարսեղ, հիմա յանդիմանութեանց ատենը չ'է, որ խիստ պիտի ըլլան. բայց առանց անցելոյն ակնարկել ուզելու կը յաւելում թէ ուրիշ միտք չ'ունիմ պատկերը Լիւսիին տալով՝ բայց միայն եղբօրս յիշատակին յարգանք մը մատուցանել։ Կարծիքս անփոփոխ մնալով աղջկանս նկատմամբ՝ պարտք մը կը համարիմ իմ որոշմանս վրայ հաստատ մնալ, ապահով ըլլալով թէ ո՛չ ոք (մանաւորապէս քեզի համար չ'է) այն մարդիկներէն՝ զոր ձգձգող կը կոչեմ՝ կրնայ զինք երջանկացնել, իմ աղջիկս իւր հեզութեամբ անկարող ըլլալով բարկանալու և կանչուրտելու

և ընտանեաց մէջ այր մարդու մը գործերը կատարելու։ Անհատական բայց ի բաց մնաքս առանց չարակամութեան, որովհետև ի՞նչպէս կրնայի, եթէ չարեացակամ իսկ ըլլայի, որ չ'եմ ալ, խորամանկութիւն բանեցնել, և այսպիսի ժամու մը մէջ, իմ հարազատ եղբօրորդւոյս դէմ։ Բարկութեանս գալով, իմ բարկութիւնս շուտ կ'անցնի, և թէպէտ ըսի որ երբէք քեզի չը պիտի ներեմ, Բարսեղ, ինձ եօթը տարի չը գրելուդ համար, հիմա քեզ բոլորով սրտիս կը ներեմ։ Թող այդ բեռը քու խղճիդ հեռու ըլլայ։ Եւ հիմա կը յուսամ որ շատ ազէկ բարեկամ կ'ըլլանք մինչև մեր կեանց վախճանն, այսինքն, Լիւսիին խօսքը չ'ընելով, որովհետև ըստ իս, առաքորժ բան մ'է մօտ ազգականաց հետ խօսքի տեղի տալ։ Այսպէս, սիրելի եղբօրորդիս, քեզ մաղթելով առողջութիւն և երջանկութիւն, հիմա կը յուսամ որ ալ աշխատելու կ'ակսիս։

Կինս ինձ կ'ըսէ որ լսածին նայելով ազէկ վիճակի մէջ կը գտնուիս լուսահոգի եղբօրս խնամոց և ճարտարութեան շնորհիւ, և իւր սիրոյ ողջոյնները քեզ կը ղրկէ, յորում բոլոր ընտանիքը կը միաբանին, և յուսալով որ երբեմն կը գրես, մնամ

սիրելի եղբօրորդիս Բարսեղ

քու գորովալիր հօրեղբայրդ

ԹՈՎՄԱՍ ԼՕՌԻ

Լաու հարաքոյրս յեւ գրութիւն մը աւելցուցած էր, աւելի մանաւորապէս հարցուփորձելով գործոցս վիճակը։

Պառասխանեցի սուրհանդակին վերադարձին, որ բարի հայրս պիտ ակնկալածէս և արժանի եղածէս շատ աւելի հարուստ թողած էր։ Իւր վարկը գրավաճառաց դասուն մէջ ընդարձակ և քաջ հաստատուած էր։ Իւր խանութն ազէկ լեցուած էր և մեծ գումար մը ունէր Պանքային մէջ, առանց հաշուելու շատ մ՝առնելիքներ զանազան հեղինակներէ, որոց գրամ փոխ տուած էր։

Լաու հարաքոյրս իւր շահը միայն կը մտածէր, ինչպէս հարեզբ-ոյրս իւր քմաց և գրգռոյն համեմատ կը վարուէր, և, հարկաւ, աւելի նպաստաւոր եղաւ ինձ, երբ տեսաւ որ հարստութիւնս իւր սպասածէն աւելի էր։ Գրրեց ինձ յորդորելու համար որ գործերուս դրադիմ, և հարեզբօրս ցուցնեմ որ կարող եմ ինքզինքս ուղղելու անհոգութեան ունակութիւնէս։ Խոստացաւ մտերմանալ իմ հետս, և ամէն բան ընել իմ Լիւսիին հետ ամուսնութեանս համար հարեզբօրս հաւանութիւնն ըստանալու՝ այն պայմանաւ որ վեց ամսոյ չափ յապաստեւեմ, կամ՝ ինչպէս ինքը կը բացատրէր՝ ցուցնեմ որ կրնայի ինքզինքս ուղղել։

Զօրաւոր, բաւական զօրաւոր էր պատճառը

յաղթելու համար հնացեալ ունակութեանց ուժին։ Հաստատութեամբ գործելու ձեռնարկեցի և հօրս իւր ճշդութեամբն ստացած վարկը շարունակեցի։ Վեց ամբողջ ամսոյ չափ, չ'եմ յիշեր բնաւ անհոգացած կամ ձգձգած ըլլալ կարեւոր բան մը զոր ընելու էի, բաց ի ածելիս արելէն։ Լսու հօրաքոյրս ինձ տուած խօսքը պահեց ամէն պարագայէ օգուտ քաղելով զիս ամենէն նպաստաւոր երանգներով հօրեղբօրս ներկայացնելու համար և սիրոյ իմ վրաս բերած բարեփոխութիւններն իրեն բացատրելու համար։

Լիայոյս գիւղ գացի վեց փորձութեան ամիսներէն վերջը։ Սակայն հօրեղբայրս յամառութեամբ խառն լրջմտութեամբ մը, պատասխանեց հօրաքրոջս իմ ներկայութեանս. «Այդ բարեփոխութիւնն որուն վրայ կը խօսիս, կին, տեւողական չ'է։ Սիրով ակաւ, ինչպէս որ դու կ'ըսես, և սիրոյն հետ պիտի լմննայ, ինչպէս որ ես կ'ըսեմ։ Դու և ես գիտենք, սիրելիս, թէ ոկրը քիչ աւելի կը տեւէ քան գմեղրալաւսին և Լիւսին չ'է, կամ ըլլալու չ'է այնչափ պարզամիտ որ միայն իւր կենաց կարճ մի ամսոյ չափ ըլլալիքը միայն ի նկատի առնու, մինչդեռ իրեն հետ պիտի ապրի քսան, երեսուն, թերեւս քառասուն երկար տարիներ։ և անոր օգուտ մը չը կայ, ինչ որ ալ ըլլայ։

Ներէ՛, Բարսեղ եղբօրորդիս, բայց երբ խընդիրը Լիւսիին երջանկութեան վրայ է, միտքս որոշ բացատրելու եմ ինչպէս հոր մը կը վայլէ որ ընէ։ Կարծիքս, Լիւսի, այս է որ ամենեւին փոխուած չ'է նա, և այդ քեզի խմացնեմ որ եթէ այդ մարդուն հետ ամուսնանաս, առանց իմ հաւանութեանս պիտի ըլլայ։»

Լիւսի բոլորովին գունատեցաւ, և ես սաստիկ զայրացայ։ Հօրեղբայրս, սովորականին համեմատ իւր ծխափողին դիմեց, և բոլոր այն պերճախօսութեան զոր սէրս և որտմտութիւնս կրնային ազդել ինձ միայն կը պատասխանէր իւր ծխոյն փչումներով. «Եթէ աղջիկս հետդ կարգուի, Բարսեղ եղբօրորդիս, կ'ըսեմ քեզ որ առանց իմ հաւանութեանս պիտի ընէ։»

Լիւսիին վրաս ունեցած սէրը մրցեցաւ քանի մը առեն իւր առ հայրն ունեցած պարտուց գգացման դէմ. իւր մայրը շատ տաքութեամբ ջատագովեց իմ դատս. անդամ մը ինձ կուսակից երևցած ըլլալուն, ինքզինքը պարտաւոր համարեցաւ այս խնդրոյն մէջ զիս պաշտպանելու։ Հօրեղբօրս և հօրաքրոջս մէջ վէճի նիւթ մ'եղաւ այս, և իրենց կիրք այնչափ յուզուեցան՝ միմեանց ընդհարելով՝ որ Լիւսի հեռուանքներէն կը դողար։

Օր մ'առիթ գտաւ գալոնի ինձ հետ խօսելու. «Սիրելի Բարսեղս, ըսաւ, պատուելու

ենք։ Կը տեսնէք որ երբեք ձերը չեմ կրնար ըլլալ հօրս հաւանութեամբն, և առանց անոր երբեք երջանիկ չեմ կրնար ըլլալ, նոյն իսկ ձեր հետ միացած ըլլալով։

Ազատից պատճառ չեմ ուզեր ըլլալ անոնց զոր ամենէն աւելի կը սիրեմ աշխարհիս վրայ։

Լիւսի

Հայրս և մայրս իրարու հետ ձգել չեմ ուզեր։ Չեմ կրնար հանդուրժել կռիւներ տեսնելու որ օրէ օր աւելի կը զայրանան իրենց մէջ։ Զատուինք, և ամէն բան կարգի մտնէ նորէն։»

Պարապ տեղ իւր որոշման դէմ ոգևորեցաւ· փոփոխակի կըզգաւուէի և կ՝ողբայի Լիւսիին տկարութեան վրայ որով կ՝ստիպուէր զո-

հելու իր բուն երջանկութիւնն և իմն՝ հոր մը յամառ կարծեաց, այլ և այնու հանդերձ չէի կրնար աւելի ևս չյարգել զինք տեսնելով որ կը յարէր այնպիսի բանի մը զոր իւր պարտքն ըլլալ կը կարծէր։ Բնաւորութեան քաղցրութիւնը, բնութեան սիրութիւնն, և որդիական գութը, զոր ցուցուց այդ տագնապալից պարագային մէջ, զոյն ինձ անբացատրելի չափով սիրելի ընծայեցին։ Իւր հայրն ապառաժի մը պէս անյողդողդ մնալու դիտաւորութեամբն հանդերձ. սկսաւ ցուցնել ներքին յուզման նշաններ. և գիշեր մը իւր ծխափողը կոտրելէն, և ունելիքն և ցուպն երկու անգամ գետինը նետելէն վերջը, զոր Լիւսի երկու անգամ տեղը դրաւ, գոչեց. «Լիւսի, աղջիկ, խենդ ես, և ինչ որ աւելի գէշ է, կմախք դարձար. սիրտս կտոր կտոր կ'ընես. խօսք չես հասկնար, այս մարդն, այս Բարսեղը, —ես գիտեմ— այս իմ անիծեալ եղբօրորդիս, մարդ ըլլալիք չունի։ Բայց առանց իմ հաւանութեանս չե՞ս կրնար զինք առնել։»

Այս ակնարկութիւնէն վերջը, Լիւսիի խղճի խայթերը լուցին՝, և քանի մ'օր վերջը կարդուեցանք։

Խոհեմութիւն, տատրինութիւն, հպարտութիւն, սէր, ամէն զօրաւոր պատճառ որ կրնայ ներգործել մարդկային մտաց վրայ, որոա-

պնդեցին զիս որ ջանամ ցուցնելու թէ արժանի էի այս ամենասիրուն կնոջ։ Տարի մ'անցաւ, և Լիւսիս կ'ըսէր որ պատճառ մը չունէր իւր ըրած ընտրութեան վրայ գղջալու։ Ամենէն գողտր յոգնութիւնները կ'ստանձնէր հայրն ապահովցնելու համար թէ բոլորովին երջանիկ էր, և թէ վրաս ունեցած կարծիքը սխալ էր։

Իւր աղջիկն երջանիկ տեսնելուն բերկրութիւնը յաղթեց իւր կարծիքը ձոխած ըլլալը խոստովանելու դժկամակութեան։ Երբէք չպիտի մոռնամ այն հաճոյքն որ զգացի լսելով որ կը խոստովանէր թէ չափազանց խստութիւն վարած էր, և թէ իւր Լիւսին իրեն համար ալէկ ամուսին մ'ըրեր էր։

Աւա՜ղ, անգամ մ'որ ստացայ այս վկայութիւնն ի նպաստ իմ, երբ հրահանգած էի ճըգանց և խնամատարութեան վարժութեան, սկսայ նորէն թուլանալ զայն շարունակելու ջանիցս մէջ. ինքզինքս իմ հին յապաղման սովորութեանցս թուլատրեցի։ Ցաճախորդներս և գաւառացի թղթակիցներս սկսան արտնջալ որ իրենց նամակք անպատասխան կը մնային, և իրենց հրամանք բարձի թողի կ'ըլլային։ Իրենց նամակաց ժամագրութիւնն տեսնելով կըրնայի ատոյգ գիտնալ թէ իրաւունք ունէին և թէ սխալ ճամբով կ'երթայի։ Հօրս հին բարեկամաց մին, հարուստ պարոն մը, որ գիրք կը

սիրէր, և կը գնէր այն ամէնքն որ արժանի էին գնուելու, Մարտին ինձ հրաման մը գրկեց, մեծաքանակ գրոց համար Ապրիլին, ինձ գրեց յիշեցնելու համար իւր նախընթաց նամակն.

Սիրելի պարոնս, Ապրիլ 3

Անցեալ ամիս գրեցի խնդրելով որ գրկեսս ինձ հետուեալ գրքերն.—շատ ցաւեցայ զանոնք չ՝ընդունելուս. և կը խնդրեմ որ բարեհաճիք զանոնք անմիջապէս ինձ գրկելու.

Մնամ՝ սիրելի պարոնս՝
ձեր հաւատարիմ
Ժ. Գ.

Մայիսին նորէն ինձ գրեց.

Սիրելի պարոն,

Շատ զարմացած եմ չընդունելուս այն գրքերն որոց համար գրեցի ձեզ մարտին. կը փափագիմ գիտնալ թէ ի՞նչ է այս երկարաձգութեան պատճառն, և եմ

Սիրելի պարոն
ձերդ ես
Ժ. Գ.

Տասնեւհինգ օր վերջն, երբ գրեանը կը ծըրարէի այս պարոնին համար՝ հետեւեալն ընդունեցայ.

Պարոն,

Որովհետեւ տարուոյ քառորդի մը չափ է-

զաւ իմ ձեզ գրելս գրոց համար (զոր դեռ ինձ չղրկեցիք) պարտաւորեցայ ուրիշ գրավաճառի մը դիմել։

Շատ վշտացած եմ որ դիս սխալեցիք այս բանս ընելու։ Համարում ունէի ձեր հօր վրայ, և յոժար կամօք չէ որ կը խզեմ իմ յարաբերութիւններս իւր որդւոյն հետ։ բայց յիրաւի չափազանց փորձեցիք համբերութիւնս։ Անցած տարի բնաւ ձեզմէ նոր տպագրութիւն մը չըստացայ, մինչեւ որ բոլոր գրացիներուս ձեռքն հասնէին։ և շատ անգամ պէտք եղաւ ինձ փոխառնուլ այնպիսի գրքեր զոր ձեզմէ խնդրեր էի ամիսներով յառաջ։ Կը յուսամ որ այս բանս դաս մը կ'ըլլայ ձեզ, և չես վարուիր ուրիշ բարեկամներու հետ ինչպէս վարուեցաք հետս։

Պարոն

Ձեր խոնարհ ծառան

Ժ. Գ.

Այս յանդիմանութիւնն իմ վրաս քիչ ապաւորութիւն ըրաւ, որովհետեւ այն ժամանակն յորում զայն ընդունեցայ, այնպիսի առարկայի մը կ'աշխատէի, որուն բաղդատելով՝ գրավաճառի մը արհեստը աչքիս բնաւ կարեւորութիւն մը չունէր։

Տրոց նոր գրութիւն մը հնարելու հետամուտ էի նախատարին համար, և առատորէն

փարձառիլ կ՚ակնկալէի։ Շատ մը համբաւաւոր հանճարներու ն պէս՝ քաղցր էր ինձ յուսալ թէ, բաղդս տարաբերիս մէկ տարօրինակ գործովը պիտի չինէի, և ոչ թէ ամենօրեայ աշխատութեան հասարակ միջոցներով։ Միշտ ճամբայ մը փնտռելու ետեւէ էի որ կարճ ի կարճոյ հասցնէ զիս համբաւոյ տաճարը փոխանակ հոն երթալու սովորական ճամբէն անցնելով։ Այս բարձրատրման անձանց հետ մտերմաբար ծանօթութիւն ունեցողներէն շատ քաջալերուած էի թէ, իմ նոր հարկադրութիւնս պիտի ընդունուի, և ժամանակաւ կ՚ըլլայի պաշտպաններուս վայրագութիւններուն մէջ, գործոյս յանձնանքը ձգելով խանթիս վերակացուին, երիտասարդ մարդ մ՚որուն խելքն ու միտքը բոլոր շաբաթ կիրակի աւուր ձի հեծնելիքն էր։

Այսպիսի տերոյմով և այսպիսի գործակատարով մը գործերս ապէկ չէին կրնար երթալ։ Լիւսիս որչափ ալ մեծ համարում ունէր կարողութեանցս վրայ, և իմ խոստմանցս վստահ էր՝ շատ անգամ յայտնեց որ կը վախնար թէ նախարարք չպիտի վերջապէս ինձ հաստատում մ՚ընէին իմ վառնած ժամանակիս համար. բայց ես յարատեւեցի։ Անպատասխան մնացած նամակաց կոյտը կը գիրուէր մինչեւ գարակին բերանն. առկախ հաշիւներու բազմութիւն մը ինձ ի խորոց սրտի հառաչել կուտար, երբոր

գիպուածով աշքս վրան էյնար։ Փիշ առնել, գործէ պժգանք զգայի, և բանեցուցի արդարացուցման, բարբարանաց ճարտարութիւններն անուռս մնալու պէս, և ասոնց նման այն ամէն վարպետութիւնները, որոնց վաղ կամ անագան յեռաձգութիւնը զմարդ կը պարտաւորէ գիմելու։ Խիզճս հեռագիտէ, կարծրացաւ թանձրացաւ և կրցայ առանց զեղջ զգալու խոսանալ, ճշմարտութեան կերպարանօք, հաշիւ մը կարգադրելու վասն, առանց դոյզն իսկ յոյս մ'ունենալու խօսքս պահել կարենալու։

Տարագրոյ էի ինչպէս և դրամաճառ, և հարուստ և ապքաստ հեղինակք խմբովին վրան կը յարձակէին հարուստք մինչև վերջը կը գանգատէին այնպիսի ձեռնարկողէ մը որ իրենց համբաւոյն արատ կը բերէր,— ապքատներք՝ ձեռնարկողէ մ՝ որ իրենց շահուն կը դպչէր, և երբեմն իրենց բուն իսկ ապրուստին։

Գիտարար և միանգամայն յապաղատ էի բնութեամբ, շատ անգամ խեղճ հեղինակներու տակ կը կանխէի, իրենց հաշիւները կարգադրելու մտին ցցուցած անհոգութիւնս փոխարինելու համար, և ինքզինքս անոնց վայնասունէն և տաղտապանքէն ազատելու համար։

Անոնք անմիջապէս տրմեցան երկպառիկ առաւելութիւն քաղել թէ իմ յատկութիւններէս և թէ թերութիւններէս։ Իմ խեղճ հեղի-

նակներուս ցանկը օրէ օր կ'աւելնար, որովհետեւ հանձարի քաջալերող մ'էի։ Իմ խելքիս կը վստահէի ամէն գործի նկատմամբ որ ինձ կը մատուցուէր։ Եւ ասէպ պարտաւորուած էի վճռարելու՝ կարդալու անհոգութեանս համար, կամ շատ մը ձեռագրեր տպագրութեան պըրկելու։ Խեղճ հեղինակ մը, ակնկալութեամբք որոնելէն վերջը չը գիտեմ որչափ տեսն՝ իրեն չ'էի կրնար ըսել։ «Պարոն, երբէք ձեր ձեռագիրները չը բացի, հոս է, նետուած թղթոց մէջ, զայն առ Աստուծոյ սիրուն»։ Ո՛չ, յանդգնութիւն առնլով՝ երբէք չ'էի պակսեր քաղաքավարութիւն մը ընելէ, կամ տրիտուր մը տալէ, և վերջապէս յարգանքներս ասէպ տեսակ մը ամենանուաստ տրիտուրներ էին։

Հարուստ հեղինակներս քիչ առնէն գիս ձգեցին, և իրենց աղաղակներով համբաւս աղարտեցին գիտնական ակմբոց մէջ։ Մեծ փորձարութիւն ունէի՝ սակայն դեռ չ'էի կարողացած որոշել թէ ո՛րն աւելի նախամեծար պէտք էր համարիլ, սովալուկ հրապարակագրի մը «յուսահատական ազքատութիւնը» թէ հարուստ հեղինակի մը զայրոյթը։

Ամէն մէկ հեղինակս համոզուած կ'երեւնար որ Եւրոպայի ճակատագիրը կամ աշխարհին փրկութիւնն իրենց դրքին այս ինչ օրը հրատարակուելէն կախում ունէր։ Մինչդեռ ես

կատարելապէս ապահովված էի որ իրենց գործերը պարզապէս բանդագուշանք էին, բաղդատմամբ իմ նոր հարկադրութեանս, ուստի իրենց գործերը կը ձգձգէի և շարունակեցի իմ սիրական տրոցս վրայ խոկալու։

Պատիւ և հաճոյքն ունիմ ըսելու որ բոլոր հարկերս հաճոյ թուեցան և ընդունուեցան, և տէրութեան անդին եկամուտի յաւելում մը պատճառեցին, բայց ցաւով սրտի պարտաւորեալ եմ աւելցունելու, որ երբէք, ուղղակի կամ անուղղակի կերպով, ընդունած չ'եմ ամենէն պզտիկ վարձքն, և իմ բոլոր համբաւս գոգցու սինլքոր մը, որ ուրիշ արժէք չ'ունէր բայց միայն ինձմէ աւելի կանուխ ածիլուած ըլլալուն առաւօտ մը։ Եթէ ածելիս սրելը ետ ձգած չ'ըլլայի յաջորդ օրուան, այս բանս չը պիտի պատահէր։

Իմ տարաբաղդ յապաղման ատիրութեանս այսպիսի չնչին մէկ դէպքին վերադրելու եմ կենացս ամենէն դժպհի ձախորդութեանց մին։ Հակառակորդ դրամատէր մը, որ պահանջեր էր թէ ինքն էր առաջին հնարողն և թելադրող իմ հարկերուս, կոչուած էր հետս տեսակցելու մեծ մարդուս տունն առաւօտեան ժամ տասնին։ Հակառակորդս փութաջան էր, ես կէս ժամ ուշ էի մնացեր, իր պահանջմունքն հաստատուեցան, իմիններս հերքուեցան, որոմհե-

ուս. ներկայ չ'էի իմ ապացոյցներս յայտնելու համար։ Երբ պաշտպանիս առնն եկայ, անպիտան դոնապանը դուռն երեսիս գոցեց, և այսպէս վերջացուց հարկերուս նոր դրութեան վերայ ունեցած բոլոր յոյսերս։

Տուն գացի և սենեկիս մէջ փակուեցայ, ցաւիս ելք տալու համար. բայց ժամանակ չ'ունեցայ շատ առեն տրտմութիւնս հանդարտութեամբ դուրս թափելու։ Կրպակի ապառաւորը կանչեց զիս որ վար երթամ գիւրագրիս հեղինակներէս մին տեսնելու համար, որ բացարձակապէս կը մերժէր խառնութէն հեռանալ՝ զիս չը տեսած։ Դիւրարարքս ցեղին *) ամենէն բուռն էր այն մարդն որ զիս տեսնելու կ'ըսպասէր։ Բուսական հանճարեղ և գիտուն մարդ մ'էր, մեծամեծ պահանջմամբ և քինախնդիր բնաւորութեամբ։ Աղքատ էր և տակաւին հարուստներուն մէջ կ'ապրէր, և իր ամբարտաւանութիւնը միայն կրնար հատուցանել իր դիւրապաշտութեան։

Մեր տան մէջ ճանչցուած էր Հրաշագործի անուամբ, որովհետև ինձ այս անուամբ ձեռագիր մը գրկած էր, և մէկ երկու անգամ շարաթը նամակ կամ հեռագիր կ'ընդունէինք իրմէ, հարցուցնելու համար թէ ե՞րբ պիտի տրամ-

---

*) Ա.յսինքն հեղինակաց՝ բառ Արտաքոսի։

ուի գործը։ Տարաբաղդաբար կորսնցուցած էի այս թանկագին ձեռագիրն։ Այս պարագային մէջ, հեղինակը տեսնել տարճանակի մը բերնին առջեւ կենալու շատ վտանգաւոր էր։ Վար ինչայ չքմեղանք մը չը պատրաստած։

«Պարոն, գոչեց բարկացայտ մարդս, իւր կիրքը զսպելով, որովհետեւ ձեզ արժանի չէք համարիր Հրաշագործը տպագրելու, պիտի չը-նորք ընէք ինձ ձեռագիրս եւս տալու։»

«Ներեցէք ինձ, սիրելի պարոնս, ընդմիջե-ցի, անպատճառ այս գործնան պիտի հրատա-րակուի։»

«Փարո՛ն. ցնո՛ւք, պարոն, ինձ գարնան վրայ մի խօսիք. ասեր էիք թէ ծննդին պիտի ելլէ, ասիք թէ անցած յունիս պիտի իլլէ, ինձ խոստացաք որ տպագրութեան պիտի ղրկուի անցեալ ամառուընէն առաջ. այս է ինձ հետ վարուելու կերպը։»

«Ներեցէք ինձ, սիրելի պարոնս։ Կը խոստմանիմ որ ձեզ և ուրիշներուն հետ չարաչար վարուեցայ. բայց գործերուն յաճախութիւնը զիս արդարացնելու է։»

«Ինձ մոռիկ ըրէք, Պ. Բարսեղ Լ.օս, հոս եկած չ'եմ հատարակ չքմեղանք մոռիկ ընելու։ Հետս գէշ վարուեցաք, ես գիտեմ և ուշխարհ ալ պիտի գիտնայ։ Իմ թշնամեացս գիտութեանց անգէտ չ'եմ, բայց ո՛չ մէկ գաւ կըրնայ ինձ գէմ յաջողիլ։ Հրաշագործը չը պիտի ջնջուի։ Հրաշագործը պիտի հրատարակուի։ Հրաշագործն արդարութիւն պիտի գտնէ, ամէն դատապրութեանց հակառակ։ Պարոն, ձեռագիրս կը խնդրեմ։»

«Պարոն, ձեզի վաղը պիտի ղրկուի։»

«Վաղը, պարոն, չ'ըլլար։ Տասներկու ամիս է որ վաղը բառը ձեզմէ կը լսեմ։ Ձեռագիրս այսօր կուզեմ։ Հրաշագործը չ'առած խոնութիւն չ'եմ ձգեր։»

Այսպէս չարաչար նեղը մնալով, պարտաւորուեցայ խոստմանելու որ անմիջապէս չ'էլ

կրնար զայն գտնել, բայց յարեցի որ այդ վայրկենին բոլոր տունը վեր վար պիտի խուզարկուի։ Անկարելի է նկարագրել հեղինակին յայտնած բարկութիւնը. վազեցի զայն տանը մէջ փնտռելու։ Ետեւէս եկաւ, և քովս կեցաւ մինչդեռ տակնուվրայ կ'ընէի թղթով լեցուած դարակներուն և անտուկներուն մէջ ձեռագրի բարդ ի բարդ դէզերը։ Հրաշագործ չը կրցաւ գտնուիլ։ Հեղինակը յայտարարեց որ ձեռագրին օրինակը չ'ունէր, և թէ իրեն հինգ հարիւր ոսկի առաջարկեր էր անոր համար ուրիշ գրավաճառ մը, իսկ ինք այդ գումարին կը-կինումն անգամ չը պիտի գոհանար։

Ձեռագիրը կորսուած էր. տունէս դուրս վազեց, խմացնելով ինձ որ պատրաստուելու էի ըրածիս հետեւանքին հանդուրժելու։

Պարապ տեղն յիշողութիւնս շարշարեցի, գտնելու համար թէ ինչ ըրեր էի այս զարմանալեաց ծրարն։ Մեծն կրնայի յիշել որ շաբաթը զայն կրեցի մեծ վերարկուիս գրպանին մէջ, ամէն օր մտքս դնելով զայն կղզանքի տակ պահելու, և թէ տունը գացի քանի մը անգամ այս վերարկուով։ Այս յիշատակութիւններն ինձ օգտակար չ'եղան։

Ինձ դէմ Հրաշագործին արժէքին վրայ դատ մը բացուեցաւ և հեղինակէն համեստարար ութն հարիւր ոսկւոյ արժէք կը պուտէր եղած

միասուն։ — առեան ելանք։ գործը մեծապէս հետաքրքրական էր բոլոր գրավաճառաց և հեղինակաց խմբին համար։

Կանուխ առեանը լեցուեցաւ, քանի մը շընորհքով մարդիկ, որ բոլոքարկուին կաւակից էին, սրահին մէջ երեւցան, անկից աւելի շատերն, որ իւր թշնամիներն էին, կ՚ապասէին որ իմ փաստաբանս ծաղրէ և նշաւակէ շքեղ Հրաշագործը։

Մեծ յոյսեր ունէի ես ալ, որ այն օրը պիտի կրնանք յաղթել, մանաւանդ որ հակառակ կողմի փաստաբանն իմ հին հակառակորդս էր յէդրն, այն ճօնարնն որ ամեն առեն իրր պարզ աշխատասէր վարձկան մը և շատ դանդաղ մարդ մը նկատած էի։

Ի՞նչպէս այս դանդաղ մարդն աշխարհի մէջ առաջ գնաց, և ինչպէս կրցաւ աշխատանաց շնորհիւ բնական հանճարոյ թերութիւնը ծածկել, չ՚եմ կրնար ըսել, բայց այս կը վերկայեմ ամօթով, որ իւր յաճախորդաց գործն այնչափ յաջողութեամբ կը պաշտպանէր, և այնչափ օրինաց հմտութեամբ և յստակ բացատրութեամբ ճառախօսեց, որ դատս կորուսի։ Դատապարտուեցայ վճարելու հինգ հարիւր ոսկի վնաս և հեռուանաց ծախք։ Հինգ հարի՞ւր ոսկի կորսնցնել՝ յապաղելուս համար կղզելու թուղթ մը, ծրար մը։

Ամեն մարդ մեղքցաւ ինձ, որովհետեւ պատիժը յանցանքէն անհամեմատ կ'երեւար։ Սակայն ամէն մարդու ցաւակցութիւնն սակայն կորանցնելուս չը մխիթարեց զիս։

ԳԼՈՒԽ Դ.

Լրագրաց մէջ տպագրուեցաւ դատը, Լօու հօրեղբայրս զայն կարդաց, և բոլոր վարիս իրեն քով խոսաւ ջնջուեցաւ։ Լիւսի յանդիմանական արտունջի խօսք մ'իսկ չ'ըրաւ։ բայց իւր բոլոր քնքոյշ ազդեցութիւնը գործածեց զիս համոզելու համար մէկ կողմ ձգելու այն զանազան յաւակագծերն զոր կազմեր էի սակայն, հարստութիւն գիտելու համար, և ինձ ազատեց բոլոր խնամքս գործերուս տալու։

Կրած կորուստս թէ և մեծ՝ սակայն անգարմանելի չ'էր։ Աւելի յուզուած էի կնոջս հեզութենէն, քան եթէ չարաչար կշտամբէր զիս։ Բայց ի՞նչ է հեզութիւն, ի՞նչ է սէր, ի՞նչ են ամենէն ազնիւ գիտաւորութիւնք ամենակարող սոսկութեան դէմ։ Գործերս ձգեցի մինչեւ որ լմնցնեմ սեռոյ մը սէրութեան պաշտօնէից դէմ։ բարեկամքս և գրագտներ ապահովցուցին զիս որ հարստութեանս ազ-

բիւր պիտի ըլլայ այն տեսրը, որովհետեւ խառնութիւն պիտի վարժեցնէ պաշտօնէից բոլոր հակառակորդ կուսակցութիւնը։

Տեսրս յաջողեցաւ, մեծապէս գրուատեցաւ, և չարաչար գործածութեանց ալ տեղի տուաւ. պատասխանք երեւցան և հրաւիրուեցայ համախոհներ գտնելու։ Այսպէսով տեսնը կ'անցնէր, և մինչդեռ համբաւ կը վաստակէի, ամէն ժամ դրամս կը վատնուէր։ Անանկութիւնը մօտալուտ էր։ Մէկ կողմ նետեցի տեսրերս, և սակայն վախով և շփոթութեամբ սկսայ՝ շա՜տ ուշ՝ գործերուս պարապիլ։ Հիմա չափէն աւելի ընել փորձեցի։ Կը յուսայի աշխատանօքս դարմանել յապաղմանս հետեւանքն։ Մոքիս ջղային անձկութիւնն արգիլեց ինձ ազէկ բան մը ընելէ. ինչ որ կ'ընէի ինձ նուազ կարեւոր կ'երեւար քան հարիւր ուրիշ ըլլալիք բաներ։ Գրած նամակս, կամ տեսած հաշիւս, բազմաթիւ գործոց մէջէն մին էր միայն, որոց ամէնն ալ անմիջապէս շտապու տեսնուելու էին։ Քաջութիւնս թերացաւ, յուսահատութենէ գործերս ձգեցի։ Ինձ դէմ անանկութեան հրաման մը ելաւ. բոլոր գոյքս գրաւուեցան, և Քրինկապէնչի բանտը դատապարտուեցայ։

Կնոջս ազգականք ջլացան ինձ օգնութիւն մը ընել. բայց իւր հայրը խստացաւ զինքն և իւր պզտիկ մանչը տունն ընդունիլ, այն պայ-

մանաւ որ ինձմէ զատուի, և անցունէ իրեն մնացեալ օրերն իրենց հետ։ Կինս մերժեց այս առաջարկն, և երբէք չը պիտի մտնամ իւր մերժելուն կերպն։

Իւր բնութիւնը դժբաղդութեան մէջ կը բարձրանար։ Ամենէն մեծ իգական գորովով և փափկութեամբ հանդերձ, քաջութեան և զօրութեան չափ մը ունէր, զոր հազիւ տեսած եմ իմ սեռիս մէջ։ Հետս եկաւ բանտն, և ամէն օր կը զօրացնէր հոգիս հազար բարութեան ցոյցերով։

Տասնեւութ ամսու միջոցին զոր ինձ հետ բանտն անցուց և զոր այն տեղն ամբողջ կենացս համար ինձ սահմանեալ բնակարան մը կը կարծէինք, երբէք խօսքով մը կամ նայուածքով մը, ինձ չ՚ակնարկեց որ ես էի մեր տարաբաղդութեանց պատճառն. ընդ հակառակն այս գաղափարը մտքէս հանեց իգական սեռին յատուկ բոլոր ճարտարութեամբը։ Չ՚եմ կրնար, մինչեւ հիմա այսչափ տեղն անցնելէն վերջն իսկ, յիշել այս բաներն առանց լալու։

Ի՞նչպիսի կին մը, ո՞րպիսի ամուսին ազէ-տից ենթարկած էի։ Երբէք զինքը չը տեսայ, մեր ամուսնութեան առջի ամսոց մէջ, այս ժամանակին չափ զուարթ և խանդաղակաթ։ Ուրիշ կեանք չ՚ունէր կարծես քան իմ և մեր

պզտիկ ոսկուս խնամքը, զոր գորովանոք կը սիրէր։ Այն ատեն ճիշդ ոտք կ'ելլէր և խօսիլ կ'սկսէր. իւր ազապատանք, իւր անխոհ ուրախութիւնն, և երբեմն տեսակ մը կարեկցութիւնը խեղճ հիպրիկին համար, շատ յուզիչ էին։ Աւա՜ղ, ինք բնաւ չ'էր նախատեսէր... բայց պատմութիւնս շարունակեմ՝ եթէ կըրնամ՝ առնց կանխելու,

Պարտատէրներուս մէջ Պ. Ներն անունով մէկը կար թուղթ չինող որ, իւր ինձ հետ զանազան գործերուն պատճառաւ առիթ ունեցեր էր թէ՛ իմ և թէ կնոջս բնութիւնը քիչ շատ ճանչնալու. իրեն վրայ կը զարմանար, և զիս կը մեղքնար։ Դիւրակեցիկ մարդ մ'էր, և փափաքող իւր կարողութեան չափ բարիք գործելու։ Առաւօտ մը Լիւսիս սենեակս մտաւ՝ ուրախութեամբ լուսաւորեալ երեսով մը.

«Սիրելիս, ըսաւ, տհաւատիկ հոս վարն է Պ. Ներն, որ քեզ տեսնելու համար կ'սպասէ, բայց կ'ըսէ որ քեզ չը պիտի տեսնէ մինչեւ որ բարի լուրը քեզ չ'աւետեմ։ Մեր բոլոր պարտատէրները համաձայնութեան մը բերաւ, որ քեզ արձակեն։»

Ուրախութեամբ և երախտագիտութեամբ լեցուեցայ. մեր բարի բարեկամը կատրով մը կ'սպասէր զմեզ բանտէն հանելու համար։ Երբ սկսայ իրեն շնորհակալ ըլլալ, զիս լռեցուց բա-

ցարձակապէս յայտարարելով, որ ամենեւին իրեն չնորհակալ ըլլալու չ'էի· որովհետեւ, եթէ յարդէ մարդ մ'ալ ըլլայի, ճիշդ մի և նոյնը պիտի ըսէր կնոջս սիրոյն համար, զոր կը նկատէր իբր ամենաբարի կին որոյ նմանն երբէք տեսած էր, ի բաց առեալ Տիկին Ներնը։

Ինկաւ ինձ բացատրել թէ ինչպէս գործերս կարգի դրեր էր և պարտատէրներէս ստացեր էր փոքր գումար մը իմ ընտանեացս սննդեան համար։

Ինքը զանց կ'ընէր ահագին գումարի մը մէկ երրորդն որ իրեն կը պատկանէր Իմ բուն տունս գոց ըլլալուն՝ վրայ տուաւ որ իրեն հետ իւր տունն երթանք· «Տիկին Ներն, ըսաւ, ուղէկ կերակուր մը պատրաստեց, և չը վայլեր որ իւր բաղերն և թարմ ոլոռունքը սեղանին վրայ ըլլան, առանց բարեկամաց որ զանոնք ճաշակեն իրեն հետ։»

Երբէք բաղք և թարմ ոլոռունք աւելի ըն դունելի եղած չ'էին, երբէք ճաշ մը աւելի ախորժակով չը կերուեցաւ կամ աւելի բարեսրտութեամբ չը մատուցուեցաւ։

Ստէպ այս ճաշին վրայ մտածեցի, և բաղդատեցի այս պարզասիրտ մարդուն ընդունելութիւնը մեծամեծաց ցոյցերուն հետ որ ըսքանչելի ճաշեր կուտան այնպիսեաց որ անոնց պէտք չ'ունին։

թէ՛ անուանաց և թէ կարեւոր գործոց մէջ այս Պ. Նընը, իմ ճանչցած մարդերուս մէջ ամենէն առատաձեռն և անարուեստ վեհանձն մարդկանց մէկն էր, բայց միջակ կեանաց մէջ՝ մարդկանց վեհանձն գործերը անցայտ կը կորուին։ Վնաս չ'ունի. այնպիսիք համբաւի սիրոյն համար չ'են գործեր, աւելի աղէկ պատճառի մը համար կը գործեն, և իրենց վարձքը իրենց սրտերուն մէջ կ'ընդունին։

Պ. Նընին կրպակէն անցած ատենս, կը մըտածէի բան մը գրել ասոր վրայ, բայց դեռ մտքիս մէջ որոշած չ'էի թէ արդեօք բանաստեղծական արտայայտութիւն մը պիտի ըլլար «Երգ մ'ալ առ այն որ ամենէն քիչ երգի կ'սպասէի» կամ թէ Պլուտարքոսի պէս, արձակ գործ մը «Այժմու զուգակշիռք» անուամբ, երբ մըտածութիւններէս սթափեց զիս կինս ինձ ցուցնելով մեծ թղթի հակ մը, ուղղեալ առ «Եղեկիէլ Քրօֆիդ, վաճառական ի Ֆիլատէլֆիա» և ինձ հարցուց թէ գիտէի՞ արդեօք այս պարոնին իւր մօր մերձաւոր ազգական ըլլալը։

«Իրա՜ւ, ըսաւ Պ. Նընը։ Եթէ այդ այդպէս է ձեզ կրնամ ապահովցունել որ ազգական մը ունիք յորմէ ամչնալու տեղի չ'ունիք. Ֆիլատէլֆիոյ ամենէն պատուաւոր վաճառականաց մին է։»

«Շատ հարուստ չ'էր երբ այս երկիրը ձգեց

վեց տարուց չափ առաջ, ըսաւ Լիւսի։»

«Հիմա շատ մեծ հարստութեան տէր է», պատասխանեց Պ. Ներն։

«Եւ այդչափ մեծ հարստութիւնը վեց տարուց մէջ գիտցեց, գուշեցի. Սիրելի Լիւսիս, չ'էի գիտեր որ Ամերիկայի մէջ ոսկեղան մ'ունէիր։ Ես ալ գիտաւորութիւն ունիմ հոն երթալու։»

«Մեր բոլոր բարեկամներէն հեռու», ըսաւ Լիւսի։

«Կ'ամչնամ, պատասխանեցի, այս դէպքէն վերջն անոնց երեսը նայելու։ Անանկացեալ մարդ մը շատ բարեկամ չ'կրնար ունենալ։ Ամենէն ազէկ բանը որ կրնամ ընել, նոր աշխարհ մ'երթալն է, ուր նոր բնութիւն մը կ'սառնամ, եւ նոր հարստութիւն մը կը գտնեմ։»

Իրա՞ւ արդեօք, մտածեցի, երբ այդ վայրկենին յիշեցի տարտարոսի համբորդութիւնս ի Զինաստան. բայց հիմա որ Ամերիկա երթալու գաղափարը գլխուս մէջ մտեր էր, շատ մը յաջողութեան փատեր տեսայ ի նպաստ իմ ենթադրութեանս, եւ այնչափ ապահոված կ'ըլլայի ինքզինքս թէ իմ նախկին սխալմանցս մէջ չպիտի իյնամ, որ չ'էի կրնար այն գաղափարէն զատուիլ։ Լիւսիս իսկ ընկերակցելու հաճութիւն տուաւ։

Գիւղը շաբաթ մ'անցուց իւր բարեկամաց և իւր հօր քով, իմ մասնաւոր փափաքովս, եւ կրցածնին ըրին զինքն իրենց քով պահելու հաւանեցուցնելու համար, խոստանալով կարելի եղածին չափ իրեն եւ իւր պզտիկ տղուն հոգ տանիլ իմ բացակայութեանս առեն. բայց հանապազորդեց նա իւր ամուսնին ընկերակցելու դիտաւորութեան մէջ։

Այս անգամ շոգենաւին երթալու ուշ չմնացի, եւ բոլոր ճամբորդութեան առեն գործիներէս բան մը չկորսնցուցի, որովհետեւ, շատ բան չունէի կորսնցունելու, եւ կինս ալ այս քիչին խնամ կը տանէր։—

Եւ հիմա անվնաս Ֆիլատելֆիա հասած եմ, գրպանիս մէջ հարիւր ոսկւոյ տասկի պզտիկ գումար մը. բայց շատեր Ամերիկայի մէջ հարբուստացած են աւելի չնչին սկզբնաւորութեամբ։

Կնոջս ալգականը, Պ. Քրոֆիդ, այսչափ ալ չունէր, ինչպէս որ ինձ ըսին, երբ Անգլիայէն հեռացաւ։ Ճամբորդներուն շատն ալ, որ ինձ հետ շոգենաւին մէջն էին, այս չափին կէսը չունէին։ Անոնցմէ ոմանք բոլորովին ալքատ էին։

Առնց մէջը Իւլանուացի մը կար որ Պարնի անունով ճանչցուած էր, կարծեմ Պառնապէի մէկ համաւոտութիւնը։ Իւր մտքանուան

գալով, չ'էր կրցած զայն կապել, բայց զիս ապահովցուց որ ագկից պատուականը չ'էի գլուխնուէր։ Այս մարդն, իւր մէկ քանի ազգականներուն հետ, Անգլիա եկեր էր, իրենց սովորութեան համեմատ հնձոց եղանակին քաղաքութիւն օգնելու համար, որովհետեւ աւելի բարձր թոշակ հոն կ'ընդունին քան իրենց ընիկ երկիրը։ Պատնի խմացաւ որ դեռ աւելի բարձր թոշակ պիտի ընդունի Ամերիկայի մէջ աշխատելով, եւ ատոր համար ինքն եւ իւր երկու որդիք, տատնութը եւ քսան տարեկան երիտասարդ մարդեր, դէպի Ֆիլատելֆիա ճամբայ ելան։ Աւելի զուարթ մարդ մը երբէք տեսած չ'էի Զինքը նաւուն տախտակամածին վրայ ը տեսնէինք որ մինչեւ վերջը կ'երգէր կամ կը սուլէր իւր իսլանտացի երգերը, եւ երբէք չ'էի կրնար մոքէս անցունել որ այս մարդուն կեանքն վշտի եւ տարտարգութեան շարք մ'էր։

Երբ շոգենաւէն կ'ելլէինք, զարմանօք տեսայ որ բարձրաձայն կուլար, և երբ պատճառն հարցուցի, պատասխանեց որ իրեն համար չէր տրտմեր, այլ իւր որդւոց համար, որովհետև փլորկուեթեան մարդ պիտի ըլլային, այսինքն բռնի պիտի գործէին որոշեալ ժամանակ մը նաւատերն, կամ որուն համար որ ուզէր, մինչև որ իրենց անցքին գինը վճարուի թէև զարմացայ որ

ինչպէս մարդ մը կրնայ մոքէն անցընել շոգենաւով տեղ մ՚երթալու, առանց սոսկ մը ունենալու իւր գրպանին մէջ՝ այսու հանդերձ խեղճ մարդուն ճամբու ծախքը վճարեցի։ Երկու ծնգաց վրայ ինկաւ, նաւուն տախտակամածին վրայ, հրացանէ զարնուածի պէս, եւ իւր ձեռքերը դէպ ի երկինք վերցնելով, աղօթեց առաջ խալանաերէն, եւ վերջն Անգղիերէն, խանդաղ եռանդեամբ, որ «ես եւ իմիններս երբէք բանի մը կարօտ չըլլանք, որ ոնոնց իշխելու համար շատ ապրիմ, որ ուր երթամ յաջողիմ, եւ ժառանգեմ ամէն տեսակ օրհնութիւն եւ փառաց թագեր։»

Որովհետեւ իրրեւ Անգլիացի նախապաշարում մ՚ունէի թէ անիսս երախտագիտութիւնը միայն ճշմարիտ է՝ այս ճոխաբանութենէն նեղուեցայ, յեղակարծ ետ դարձայ, եւ մտայ նաւակին մէջ որ մեզ ցամաք պիտի տանէր։

Երբ կը հեռանայի՝ կնոջս եւ տղուս երեսը նայեցայ, եւ ինքզինքս կշտամբեցի, այնչափ առատ վեհանձնութիւն մ՚ընելուս համար, թերեւս իրենց ի վնաս։

Կնոջս ազգականը Պ. Քրոֆիդ զմեզ կնոջս կարծածէն աւելի ազէկ ընդունեց, եւ իմ յուսացածէս աւելի գէշ։ Իւր սոսկն իւր ձեռօք շահած մարդու մ՚երեսն ունէր՝ իւր կերպերը

պաղ եւ կանոնաւոր էին, զգուշութիւնն աչքին մէջն էր, եւ խոհեմութիւնն իւր բոլոր ընթաց մէջ։ Մեր առջի կէս ժամուան խօսակցութեան միջոցին ապահովցայ որ իւր բոլոր գործոց մէջ ուղիղ եւ ճիշդ մէկն էր։ Իւր գաղափարներու մասին ստացած համբաւոյն արժանի էր՝ բայց միայն իւր գործերուն անմիջապէս վերաբերեալ առարկայից վրայ։ սրբոյն դալով, մարդասիրութեան վրայ գաղափար ունենալ չէր ցուցներ, բայց սորված էր իւր պարտքն առ նմանս իւր։

Ողորմութեան եւ բարեսրտութեան վերաբերեալ գործերը միայն պատճառաւ մը պատրաստ կ'երեւէր ընելու ոչ թէ զգացման համար, որովհետեւ պէտք էին, եւ ոչ թէ որովհետեւ հաճելի էին։ Զգայի որ գինքը կրնայի յարգել, բայց սիրել զայն՝ երբէք, եւ նա երբէք գիս չ'էր կրնար ա՛չ սիրել եւ ոչ յարգել, որովհետեւ այն առաքինութիւնը որ մեծապէս ՝ի՛ը պատուէր, այն խակ էր որուն մէջ ամենէն թերի էի—ճշդութիւնը։

Ասեմ, կրցածիս չափ, իմ իրեն հետ ունեցած առաջին խօսակցութիւնս, եւ անով ուելի ապէկ գաղափար մը իւր բնութեան վրայ կըրնայ ստացուիլ քան նկարագրութիւններէս։

Իրեն տուի Պ. Ներնին ընծայութեան նամակին եւ ըսի որ պատիւ ունէի իրեն ապրակոն

ըլլալու։ Շատ կամաց կարդաց Պ. Ներնին նամակը։ Որոշած էի որ գինքը տարակոյսի մէջ չը ձգեմ իմ ինչ եւ ով ըլլալուս վրայով. եւ իրեն համառօտ կերպով պատմութիւնս ըսի, մանիկ ըրաւ անշարժ ուշադրութեամբ, և երբ լմնցայ՝ ըսաւ, «ինձ դեռ չ'ըսիր ի՞նչ են դիտաւորութիւնդ Ամերիկա գալով.»

Պատասխանեցի որ ընելիքս դեռ որոշած չէի։

«Բայց հարկաւ, պատասխանեց, չես կրցած տունդ տեղդ ձգել առանց ապագային համար յատակագիծ մը կազմելու։

Ձեզ հարցուցածս այս է թէ ի՞նչ ասպարիզի մէջ թեւակոխել կ'ուզէք։

Պատասխանեցի «թէ տակաւին վարանման մէջ էի, եւ թէ որոշումս պարագայներէն կախու�մն ունէր։»

«Պարա՛գայ, ըսաւ. հաճեցէք ուրեմն որոշ բացատրել ձեր միտքն։ Որովհետեւ չ'եմ գիտեր ինչ պարագայի վրայ կը խօսիք։» Իրեն դէմ բարկացայ որ այնչափ դժուարաւ կը հասկնար միտքս, բայց երբ բացատրելու հարկադրուեցայ, գտայ որ ես ալ հասկցած չ'էի թէ ինչ կ'ուզէի ընել։

Ճամբաս փոխեցի, եւ, վստահութեան եղանակ մը ցուցնելով, ըսի որ բոլորովին երկրին անգէտ էի, կը փափաքէի ուրիշ տեղ-

եակ մարդերէ առաջնորդուիլ եւ թոյլատուութիւն կը խնդրէի իրեն դիմելու։ Որովհետեւ իրեն պարտք մը կը սեպէր իւր ազգականաց օգնել, ինձ բոլոր կրցած խրատները պիտի տար։

Կոնարհութիւն մ'ըրի, եւ առաջ մնացի իւր ձեւէն։

«Եւ ոչ միայն խրատներս, շարունակեց, այլ եւ օգնութիւնս»

«Ձեզի շատ շնորհապարտ եմ, ըսի։»

«Ամենեւին ոչ, երիտասարդ, ամենեւին ոչ, ինձ շնորհակալ ըլլալու չ'է տակաւին։ Ձեզ համար դեռ բան մ'ըրած չ'եմ։»

«Եւ ինչ որ պիտի կարող ըլլամ ընել ձեզի համար ապագային՝ ձեզմէ կը կախի որչափ ինձմէ։ Ամենէն առաջ ձեզ խրատ մը չեմ կրնար տալ աշխարհին մէջ ձեր վարկը չգիտնալով։»

Տակի վարկս՝ իրեն ըսի բռնանրատեալ ժրպիտով մը, յիրաւի շատ չնչին էր։»

«Եւ կին մը եւ զաւակ մ'ունի՞ս ապրեցնելու՝ ըսաւ նա գլուխը շարժելով։ Եւ զաւակդ շատ պզտիկ է եւ կինդ շատ քնքուշ՝ այնպէս որ չկրնար աշխատիլ։ Տխուր բան պիտի ըլլան ձեռքերուդ վրայ, ասոնք Ամերիկայի համար բան չ'են։ Անոնք ինչո՞ւ քեզի հետ մէկտեղ բերիր։ Բայց որովհետեւ եղածն եղած է, եւ

կարելի չէ նորէն ընել, շարունակեց, ամենէն ապէկ միջոցը գտնելու եւ գործադրելու է։ Ի՛նչպէս որ այս երկրին անտեղեակ ես։ Քեզ բացատրելու եմ թէ ինչպէս սատակը հոս կը վաստակուի, եւ որմէն։ Մշակք շատ շուտ սատակ կը վաստակին, եթէ հանճարեղ ըլլան, որովհետեւ բարձր թոչակ ունին, և անդադար գործ. արուեստագէտներն և մեքենա չինողները, նաւաշէններն, երկաթագործներն, որմնադիրք, որմնածուք, հոս կը հարստանան առանց դժուարութեան, մի և նոյն պատճառներուն համար։ բայց այս բոլոր բաները քեզի համար չ'են։ Դու գլուխ ունիս և ոչ ձեռք։ Արդ միայն գլուխը՝ կամ մատենագրութիւնն և գրավաճառութիւնը քիչ վաստակ կը բերեն այս երկրիս մէջ։

Ներածեալ գրոց առեւտուրը շատ ընդարձակ է, և լաւ նայելով՝ մեր տպագրիչք ատարագրութիւն բան մը բանալու վրայ են հոս, ի Ֆիլատէլֆիա, և ի Նիւեօրք. բայց Լոնտոն ապէկ գրավաճառի մը առաջ երթալու տեղն է. և դու Լոնտոնէն կուգաս ուր ինձ ըսիր թէ անտնկացար։ Քեզի չ'եմ խրատեր նորէն գիրք ծախելու և գիրք չինելու պարապիլ։ Գանք մշակ ըլլալու մասին. մեր մշակներն, եթէ խելացի և աշխատասէր ըլլան, ապէկ կը յառաջանան, բայց բաւական սատակ չ'ունիս հոդ գնե-

լու և տուն մը շինելու ։ կամ մշակ բռնելու որ գործը կատարեն. բաւական ուժ չ'ունիս։ Անկից զատ, չ'եմ կարծեր շատ բան գիտնաս մը-շակութեան գործերու վերաբերեալ, կամ գիւղի աշխատութեանց նկատմամբ. գալով ուրիշները կառավարելու և առաջնորդելու մասին, փորձառութիւն պէտք է։ Գաղթականի մը կեանքը քեզ չ'եմ խրատեր, որովհետև ո՛չ դու ոչ կինդ անոր ձեռնհաս էք։

Արձիթի մը մէջ ապրելու վարժուած չ'էք, և կամ ճագարով և սկիւռով կերակրուելու. առանց հաշուելու անդադար երկիւղը, ձեր անկողնոց մէջ այրուելու մերձակայ վտանգը, կամ ձեր գագաթնամաշկը մորթեղերծ տեսնելու հնդիկներէն որոնցմէ պիտի պաշարուիք։ Այս բոլոր բաներուն մէջ ուրիշ ասպարէզ չ'եմ տեսներ որ քեզի համար յաջող ելլայ քան վաճառական ելլալ, և ուրիշ կերպ չ'եմ տեսներ այս գծին մէջ ալ մտնելու համար՝ ստացուածք և անուն չունենալովդ՝ բայց միայն հաստատուած տուն մը մտնել իբրեւ գրագիր։ Աղէկ գրիչ մը ունիս, և ալէկ հաշիւ գիտես, կարծեմ ինձ ըսիր, և կարծեմ բաւական գիտութիւն ունիս գիրք բռնելու համար. շափաւորութեամբ, աշխատութեամբ և պատուով կրնաս առաջ երթալ այս ճամբուն մէջ, և կրնաս յուսալ իսկ ընկերանալու տիրոջդ, և հարուստ վիճակ մը

ունենալու քանի մը տարիէն։ Ես այսպէս լրի, և տարիճանու տեսած կէտդ հասայ։

Իրաւ, առաջ կնոջ մը եւ երախայի մը բեռը չ'ունէի։ Քանի մ'ատեն վերջը տիրոջս աղջկանը հետ կարգուեցայ, որ ինձ համար մեծ յառաջադիմութիւն մ'էր։ բայց, միւս կողմէն, կինդ ազգականս է, և կարգուած ըլլալ հարուստ վաճառականի մը ազգականին հետ աւելի աղէկ է քան ամենեւին ամուսնացած չ'ըլլալ՝ քու վիճակիդ մէջ։

Քեզ ըսի որ պարտքս կը համարիմ քեզի օգնութիւն և խրատ տալ. անոր համար մեզի կեցիր տասն և հինգ օրուան չափ։ այս միջոցին պիտի տեսնեմ թէ կարո՞ղ ես գրագիր ըլլալ թէ ոչ, և այն ատեն աւելի մանրամասնաբար կը խօսինք։

Կը հասկնաս որ քեզի նկատմամբ բանի մը յանձնառու չ'եմ ըլլար, և խոստում մը չ'եմ ըներ։ բայց գոհ պիտի ըլլամ քեզ, կինդ և պզտիկ մանչդ տասն և հինգ օրուան համար հիւրընկալելու, և պակասութիւնը քուկդ պիտի ըլլայ, նթէ այս այցելութիւնն ապարդիւն մնայ։ — Չ'եմ կրնար կենալ քեզի հետ հիմա աւելի երկար խօսելու, շարունակեց, ժամացոյցն հանելով. որովհետեւ գործերը մարդու չ'են սպասեր։

Պանդոկդ գնա՛ կնոջդ և զաւկիդ քով։ ճիլդ

երկուքին կերակուր կ'ուտենք։» —

Պ. Քրոֆիդին տունը ձգեցի անորոշ, աննկարագրելի դժգոհութեան և անյաջողութեան զգացմամբ մը, բայց երբ պանդոկս հասայ և եղածը կնոջս պատմեցի, բոլորովին զարմացած և ուրախ երևցաւ Պ. Քրոֆիդին ինձ ցուցուցած քաղաքավար և բարեկամական ձևէն։ Ջանաց գործն ինձ հետ քննելու. բայց երևակայութեան հետ խելքը գործ չ'ունի։ Ճշմարիտ էր որ Պ. Քրոֆիդ ջնջեր էր քանի մը անորոշ և երազային գաղափարներս, զոր յղացեր էի, և զոր անծանօթ ճամբով մը գործադրելու որամադիր էի։ Ամերիկայի մէջ արագ հարստութիւն մը դիզել, և իրական կենաց ստիպուիլ, գրագիր ըլլալ վաճառատան մը մէջ... մահացուցուցիչ և թշուառութիւն մ'էր։

Լիւսի պարապ տեղը խօսեցաւ թէ որչափ առաւելութիւն էր, Ֆիլատէլֆիա հասնելու պէս, տեսակ մը գործ գտնելս, և հաւանականութիւն ունենալ առաջին վաճառական տուներուն մէկուն մէջ ընկեր ըլլալու, եթէ ոչէկ յարատեւէի քանի մը տարի։ Պարտաւորուած էի վկայելու որ իւր ազգականը շատ բարի էր, որ անտարակոյս շատ բաղդաւոր էի, և ինքզինքս շատ շնորհապարտ դատանելու էի տու Պ. Քրոֆիդ։

Բայց այս բոլորը ճանչնալով հանդերձ, սե-

նեկին մէջ վեր վար պտըտեցայ թաղուութեան մէջ երկայն ատեն դեգերելով։

Կինս քանի մը անգամ յիշեցուց որ Պ. Քըրոֆիդն ըսեր էր թէ ճիշդ երկուքին կերակուր կ'ուտէր, թէ շատ ճիշդ մարդ մ'էր, թէ երկայն ճամբայ մ'էր, ինչպէս ես ալ գիտէի, պանդոկէն մինչեւ իւր տունը, թէ հասնելու էի կերակուրին, և թէ մաքուր շապիկս և փողկապս ինձ համար պատրաստ էին։ Սենեկին մէջ վեր վար երազատանջ պտըտեցայ, մինչեւ որ կինս բոլորովին պատրաստուեցաւ, ոտան հագուեցուց, և ժամացոյցն աչքիս առաջը բերաւ ցուցնելու համար որ երկուքին տասը կար։ Այն ատեն սկսայ հագուիլ· բայց երեւակայեցէք թէ ինչ ամենամեծ անապարանոք· և, տարաբաղդաբար, մինչդեռ, մեռաքսէ գուլպայ կը դնէի, ծակ մը բացի սրուանց վրայ, կամ կնոջս ըսածին պէս, ասեղ մը փախաւ, և պարտաւորուեցայ սպասել մինչեւ որ պառուածը կարկտէ։ Անտարակոյս փախած ասեղ մը շտկելու գործողութիւնն, ինչպէս սորվեցուց ինձ ըսել, ամենէն դանդաղ գործողութեանց մին է, կամ ամենէն ձանձրանալի և նեղելի գործերէն մին։

Թէեւ ամենէն եռանդուն եւ ամենէն արագ մատներն որ երբէք ասեղ մը բանեցուցած ըլլան՝ իմ ծառայութեանս գործածուեցան, ինձ

այնպէս կուգար որ երբէք գործը լմննալիք չ՚ունէր։

Վերջապէս հագուեցայ ագուեցայ, եւ դուրս ելանք։ երկուքը քառորդ անցած էր երբ առունէն ելան։

Պ. Բրօֆիդին հասանք կերակուրին միջոցը։ Սեղանի վրայ մեծ բազմութիւն կար, ամէն մարդ շփոթեցաւ։ Լիւսիա Տ. Բրօֆիդին անծանօթ էր, իրեն ներկայացուցաւ, և բան մ՚ուելի նեղելի եւ ձանձրանալի չ՚կրնար ըլլալ քան մեր մուտքն եւ ներկայութիւնը։

Այնչափ մեծարանքներ եւ յարգանքներ եղան, այնչափ տեղի փոփոխմունք, այնչափ աթոռի երերմունք, այնչափ ապառաւորաց երթեւեկք, որ կարծեցի թէ երբէք չպիտի նստինք։

Կերակրոյ միջոցը, պղտիկ տղաս սկսաւ ամենաբարձր ձայնով ճչել կը ջանար սև ապառաւուն մը ազատիլ որ զայն իւր աթոռին վրայ կը բռնէր։ Անկարելի եղաւ տղուն վախն արգելուլ հնդիկին մօտենալուն՝ ինչպէս կերպով մը հանգարտեցուցնելու։ Տ. Բօֆիդ, վերջապէս հրամայեց որ հնդիկը սենեկէն դուրս ելլէ։ պուալը դադրեցաւ, եւ տղուն հեծեծանքներէն զատ քանի մը վայրկեան բան չլսուեցաւ։ Հրաւիրեալք բոլոր լուռ էին, եւ գագրեր էին ուտելէ։ Տ. Բրօֆիդ բարկացած էր որովհետեւ

ամէն բան պաղած էր, Պ. Բրոֆիզ շատ սրտաբեկ էր, եւ բառ մ'աւելի չարտասանեց քան որչափ անպատճառ պէտք էր ըսել տանտէր մը. երբէք աւելի անախորժ սեղան մը չգտնուեցաւ։ Թէ Լիւսին եւ թէ գիս կը մեղքնային. շատ կարմիրած էր. հարիւր անգամ ինքզինքս անիծեցի ժամանակին հագուելու գացած չըլլալուս համար։

Վերջապէս փա՛ռք Աստուծոյ ծածկոյթը վերցուեցաւ. բայց երբ Գինեոյն եկանք կերակրէն վերջը, հրաւիրուղիս պաղ կերպարանքը շարունակեց, եւ սկսայ վախնալ որ գիս անդարձ կերպով չ'սիրէր, եւ պիտի կորանցունեմ բոլոր այն առաւելութիւններն զոր իւր օգնութենէն եւ իւր պաշտպանութենէն կ'ակնկալէի, որ իմ կարծեօքս շատ բարձրացան, երբ սկսայ վախնալ որ զանոնք կորանցնելու վտանգի մէջ եմ։

Կերակրէն անմիջապէս վերջը, երիտասարդ պարոն մը, Հիւսքն կոչուած՝ ընկերութեան մէջ երեւցաւ։ Իւր ձեւերն եւ երեւոյթն համակրական էին, եւ իւր քաղաքավարութեան ոգեղեղութիւնն անմիջապէս զգալի եղաւ, իբրեւ թէ մոգութեամբ՝ որովհետեւ ամէն մարդ հանգստացաւ։ Իւր կերպարանքը կեանքով ու աշխուժով լի էր, եւ թէպէտ բան մը չ'բաւ որ մեծ հանճար մը ցուցնէր, ինչ որ բաւ ա-

խորժելի էր։ Երբ հասկցան որ օտարական մ'էի, իւր խօսակցութիւնը մասնաւորապէս ինձ ուղղեց։ Ուշադրութիւնս ամփոփեցի, Ջանացի գինքը գլուցնել, եւ յաջողեցայ։ Շատ ուրախ էր Անգլիայէն լուր առնելուն եւ մասնաւորապէս Լօնտոնէն, քաղաք մը, կ'ըսէր, զոր մեծ փափաք ունէր տեսնելու։ Երբ երեկոյին ինձմէ զատուեցաւ, Ջերմագին ինձ փափաք յայտնեց զիս աւելի ապէկ ճանչնալու, եւ իրեն շատ շնորհակալ եղայ։ Աւելի ախորժեցայ մանաւանդ իւր քաղաքավարութենէ՝ որովհետեւ ապահով էի որ իմ վիճակս եւ պարագայներս ճշդիւ գիտէր, Տ. Ֆրոֆիդ իրեն մանրամասնաբար բացատրած ըլլալով իմ ներկայութեանս իսկ։

ԳԼՈՒԽ Ե.

Յաջորդ շաբթուն, երիտասարդ Պ. Հիւդսըն եւ ես ամէն օր տեսնուեցանք, եւ մեր իրարու ընկերութեան համար զգացած ոյժն աւելցաւ։ Զիս իւր հօրը ներկայացուց, որ մշակ եղեր էր, եւ մեծ հարստութիւն մը գիրկնէն վերջն եկեր էր Ֆիլատելֆիա ապրելու, զբօսնելու համար, լուծին պէս, իւր մնացեալ օրերը։ Ֆիլատելֆիոյ ընարելագոյն ընկերու-

թիւնն իւր տունը կը յաճախէր, եւ մասնաւորապէս կը փափաքէր ճանչնալ զանոնք որ ընկերական տաղանդներ ունէին, եւ որ իրեն չ՚ունեցած սրամտութիւնն եւ զուարթութիւնը տային ընկերութեան

Առաջին այցելութեանս, տեսայ որ իւր որդին իմ վրաս խօսեր էր իրրեւ աղնուագոյն ընկերի մը որ գտնուի աշխարհիս մէջ. եւ միտքս գրի որ պահեմ իմ վրայովս տրուած նկարագիրն. երկու կամ երեք համեղ պատմութիւններ ըրի, եւ երգեցի երկու երեք ազգէկ երգեր. ընկերութիւնը սքանչացած մնաց. ծեր Պ. Հիւսոնն մասնաւորապէս ուրախ էր, ինձ ընդհանուր սոխպոդական հրաւէր մը տուաւ իւր տան համար, եւ հրաւիրեալներուն շատը իւր օրինակին հետեւեցան։ Այս յաջողութեան վրայ քիչ հպարտութիւն չըզգացի։ Պ. Փրոֆիդ այս ներկայութեան օրը ինձ հետ էր, եւ շատ գոհ էի մէկէն այնպէս նշանաւոր ըլլալուս, իմ հանճարովս, ընկերութեան մը մէջ ուր ինքը նշանակութիւն մը չունէր, իւր գործոց բոլոր յաջողութեամբ եւ խոհեմութեամբն հանդերձ։

Երբ միատեղ տուն կը վերադառնայինք, ինձ ըսաւ «Ձեզ չեմ խրատեր Պ. Բարսեղ Լ՚օս, այս բոլոր հրաւէրներն ընդունել կամ երխտասարդ Հիւսոնի հետ մտերմանալ։ Պ. Հիւս-

սընին ընկերութիւնը շատ ազէկ է անոնց համար որ հարստութիւն գիւղած են և զայն կուզեն սպառել, բայց անոնց համար որ հարստութիւն մը ժողվելու հետամուտ են, կարծիքս այս է՝ ոչ միայն անօգուտ այլ եւ վտանգաւոր իսկ է։»

Այս վայրկենիս պատրաստականութիւն չ'ունենի այս խոհեմ խրատէն օգուտ քաղելու, մանաւորապէս անոր համար որ կը կարծէի թէ թելադրուած էր մինչեւ մէկ ատենման մը, իմ աւելի բարձր տաղանդէս եւ կատարելութեանցս նախանձէն։ Կինս սակայն հաստատեց իւր խրատը շատ մ'ազէկ եւ ընտիր պատճառներով։

Դիտեց որ այն մարդիկները որ զիս իրր եւ զուարթ ընկեր մը իրենց տունը կը հրաւիրէին, իրենց անձնական հաճոյքին համար էր, և թէ ինձ անկէ իրական առաւելութիւն մը չ'սիտի գար թէ Պ. Ֆրօֆիդ՝ ընդհակառակն՝ յայտնեց առաջին ժամուն որ իրեն գիմեցի ինձ օգնելու փափաք մը, թէ ինձ ցուցեր էր տեղաւորուելու միջոցները, թէ ինձ տուած խրատը միայն ինձ օգտակար ելլալու համար էր, թէ աւելի կը տրամէր քան կը նախանձէր այն տաղանդներուն որ ատակ մը չ'են վաստակցներ։

Ողջմտութիւնը, մարդուն սիրած կնոջ մը շրթունքներէն, մեծ ազատութիւն կ'ընէ իւր

գաղութեան վրայ մասնաւորապէս երբ համոզուած է որ վրան իշխելու համար չ'բաւէր։ Այսպիսի էր իմ եզակեան պարագան, Լիւսիին խոստացայ որ յաջորդ տասն եւ հինգ օրուան համար բոլոր հրաւէրները պիտի մերժեմ, եւ ինքզինքս բոլորովին պիտի նուիրեմ ինչ գործի որ Պ. Ֆրոֆիդ տայ ինձ։ Ոչ ոք ինձմէ աւելի աշխատասէր կրնար ըլլալ տասն օրուան համար, եւ Պ. Ֆրոֆիդ, որ գովելու սովորութիւն չ'ունէր՝ աշխատանքէս գոհ մնաց։

Դժբաղդաբար, տասն եւ մէկերորդ օրը առաւօտուն վոյժ չբրի ցուցակ մը պատրաստելու, զոր ինձի յանձներ էր ընելու համար, եւ երեկոյին երիտասարդ Պ. Հիւսբընին երթալու խօսք տուի։ Իրեն հետ խօսակցութեանս առեն, հետաքրքրութիւն յայտնած էր Ամերիկայի Գոլտի Նուագախմբէս մը*) լսելու, որոյ վը-

---

*) Կը խոստովանիմ որ առաջին անգամ Ամերիկայի մէջ Գոլտի Նուագախմբի մը գտնուելուս՝ այնչափ այս կենդանեաց կարգութենէն վեր բան էր լսածս որ զարմացած մնացի։ Այս Ներկայացումը տեղի ունեցաւ ապրիլ 18ի մէկ գիշերը՝ բաց տեղ՝ մեծ ճահճի մը մէջ՝ ուր առ նուազն տասն հազար երգիչք հոլին որոյ և ոչ իսկ երկուքը նոյն ձայնով կը նուագէին։

Վերջն իմացայ՝ երկար առեն է վե այս երկրիս մէջ բնակող և այս տեսակ ներգաշնակութենէն վերջին աստիճան տխրժող անձ մը — թէ այս պարագայիս մէջ սուր ձայն հանողները ծառաբնակ գօրաներն են՝ որ այս

բայով կարդացեր էի, նոր Համբուրգութեան գրքերուն մէջ, զարմանալի ստորագրութիւններ։

Պ. Հիւսալն զիս համոզեց որ երթամ իրեն հետ ճաշի մը, Ֆիլատելֆիայէն քանի մը մղոն հեռու, այս նուագահանդէսներէն մին լսելու։

Հանդէսը շատ սեւեց, եւ ուշ էր երբ քաղաքը վերադարձանք։ Յոգնած անկողին մտայ, եւ առաւօտուն արթնցայ հարբուխով մը զոր տակեր էի այնչափ ժամանակ բացօթեայ կենալէ։ Պառկած կեցայ ժամ մը զիս արթնցնելնէն վերջը, հարբուխս անցնելու յուսովը։ Երբ վերջապէս ելայ եւ հագուեցայ, ցուցակս յիշեցի, եւ որոշեցի զայն ճաշէն վերջն անմիջապէս ընել։ բայց զ-ժբազդաբար, զայն ընելս ձգեցի

կենդանեաց ամենէն փոքր և սիրուն տեսակն է։ Անոնց գոյնը միշտ իրենց բնակած ծառին գոյնին յար և նմանն է՝ և իրենց ձայնին շեշտը ծղրիտի ձայնին տեսակէն է։ Քիչ մը աւելի մեծերն հակասուր (cortralto) ձայներն են. անոնց ձայնին շեշտը սղոցի խռնաման կը նմանի։ Ասոնք ալ մեծ տեսակ մը թէնօրի մասերը կ'երգէ։ Իսկ բամբը երգեցողք տեսակ մի ատուար գորտեր են «եղնագորտ» կոչուած՝ որ մարդու մը տարին չափ մեծ են՝ և երգած ժամանակնին եղան մը մռնչման հասաստութեամբ ձայն կը հանեն։

(Աղեւորութիւնք ի Մ. Հնդանգս Ամերիկոյ)

ՄԵԼՔԻՍԵԹԱՔ ԳՐԻՉ

մինչեւ որ աչք մը նետեմ Հոմերոսի մէջ քանի մը տող «գորտնամինամարտին» վրայ։ Ինչպէս որ կրնաք հասկնալ, Պ. Քրօֆիդին տան մէջ Հոմերոս չ'կար, եւ գրավաճառի մը գացի հատ մ'առնելու։ Քաղքին կէսը պտտեցայ զայն փընտռելու համար, վերջապէս գտայ եւ ուրախութեամբ տուն կը վերադառնայի, մէյմէկ Հոմերոս իւրաքանչիւր գրպանիս մէջ, երբ Պ. Քրօֆիդին դրան առջեւ վեց բեռնակիր տեսայ, իրենց կոնակներուն վրայ ծանր բեռներով։

«Ո՞ւր կ'երթաք, բարի տղաք», ըսի

«Ժոմեզրը, պարոն, Պեռզիին բեռովը։»

«Ատո՛ւած իմ, գոչեցի։ Կեցէք։ Վայրկեան մը չ'է՞ք կրնար կենալ։ Կարծեցի թէ Պեռզիսին մինչեւ վաղը չ'պիտի մեկնի։ Վայրկեան մը կեցէք։»

«Ոչ պարոն, ըսին, այդ կարելի չէ որովհետեւ նաւապետը մեզ պատուիրեց կարելի եղածին չափ աճապարել զայն ժոմեզրը տանելու համար։» Տուն վազեցի, Պեռզիին նաւապետը սրահին մէջն էր, իւր գլխարկը գլխուն եւոին. Պ. Քրօֆիդ մթերանոցի տանդիսին վրայ՝ ձեռքը բաց նամակներով, և երկու կամ երեք գրագիրներ կը վազէին ասդիս անդին գրիչը բերանին։

«Պ. Բարեզ, ցուցակը» գոչեցին բոլոր գրագիրները միաբերան՝ երեցած վայրկենիս։

«Պ. Բարսեղ Լօռ, ցուցակն և օրինակը, կ'աղաչեմ, կրկնեց Պ. Քրօֆիդ, եռեւէդ երեք անգամ դրկեցինք. շատ զարմանալի բան ցերեկուան այս ժամանակը դուրս ելլել, և բառ մ'իսկ չ'ձգել ուր գտնուելուդ վրայով։

Ահաւասիկ Պեդդիին նաւապետն որ կէս ժամէ ի'վեր ցուցակին համար կ'սպասէ։ Տեսնենք, պա՛րոն։ Անոր համար կ'երթա՞ս հիմայ։ Միասեղ բեր ինձ նաև օրինակը՝ զայն այս նամակին մէջ դնելու և մեր թղթակցին դրկելու համար։» Քարոցեալ մնացի.

«Պարոն, ցուցա՛կը, պարոն. ո՛վ երկինք, զայն բոլորովին մոռցայ։»

«Հիմայ կը յիշեմ, պարոն. Ասուած իմ։ Տան հազար ներումն կը խնդրեմ։

Գրուած չ'է՞։ Անկարելի բան, ըսաւ Պ. Քրօֆիդ։

«Եթէ այդպէս է՝ ես կ'երթամ, պուսոյ նաւապետն, ալ չ'եմ կրնար սպասել գրագրի մը ծուլութեան համար։»

«Բեռնաւորները ես դրկէ, կ'աղաչեմ, նաւապետ, ըսաւ Պ. Քրօֆիդ պաղութեամբ բոլոր հակերը քակուելով։ Ապահով կարծեցի, Պ. Բարսեղ, որ ցուցակը գրեր ես, ինչպէս քեզ հրամայեցի երէկ առաւօտուն, և հարկաւ ապրանքները կապուեցան երեկոյին։

Սէնալեցոյ ոներկրայ կարծելով որ ճշգրիտ

պիտի ելլաս։ Գործի մարդ մը բան մ՚ապահով կարծելու չէ։

Այս բանս ինձ ա՛լ չ՚պիտի պատահի որչափ երկար որ ապրիմ։» Շատ տրտմութեան ցոյցեր ըրի բայց անոնցմէն յուզուած չ՚երևցաւ նա, և բարկութիւնը կամ անհամբերութիւնը չ՚ցուցնելով ինձմէ հեռացաւ, երբ բեռնաւորնակիրք վերադարձան. և հրամայեց որ անոնք մթերանոցին մէջ դնեն։

«Կը կարծեմ որ երեկուան երեկոյթն երիտասարդ Պ. Հիւսբնին հետ անցուցիր» բաւ դէպ ի ինձ դառնալով։

«Այո, պարոն, որոշ մտօք կը ցաւիմ . . .»

«Ցաւն, այսպիսի պարագայից մէջ, բան մը չ՚արժէր, պարոն, ընդմիջեց։ Կարծեցի որ բաւական քեզ հասկցուցեր էի այս մտերմութիւնը հատատելու վտանգը։

Կէս գիշերոյ զբօսանք գործի մարդու մը չեն վայլեր։»

«Զբօսա՞նք, պարոն, ըսի։ Թոյլ տուք ինձ ձեզ ըսել որ կերուխումի չէի։ Մխայն Գորոմ նուագահանդէսի մը գացի։»

Պ. Փրոֆիզ, որ իւր տհաճութիւնը մինչև այն առեն չ՚էր յայտնած, բոլորովին բարկացած երևցաւ, կարծեց որ զինք կը ծաղրէի։

Երբ զինքն ապահովցուցի թէ իրաւը կը խօսէի, բարկութիւնը զարմանքի փոխուեցաւ,

մեծ արհամարհական ձեւով մը անգամ մէջէն։

«Գորտի նուագահանդէս մը, կրկնեց։

Եւ կարելի՞ է որ մարդ մը ցուցակ մը գրելը թողու՝ միայն դաշտի մը մէջ գորտերու կանչուռելն իմանալու համար։ Պարոն, երբէք վաճառականի տան մը մէջ չ'պիտի յաջողիք։» Դէպ 'ի մթերանոց գնաց, և դիս ձգեց կէս վշտացած և կէս զայրացած։

Այն առենէն բոլոր յոյսերս Պ. Քրոֆիդին բարեկամութեան վրայ վերջացան։ Պտղ քաղաքավարութիւն մը կը ցուցնէր ինձ իւր տունը մնացած տասն և հինգ օրերս։ Մինչեւ իսկ խնամ տարու ուժան և հանգիստ բնակարան մը գտնելու կնոջս և զաւկիս համար և տնտկանը կտրեց՝ զոր կ'ուզէր վճարել ապգականին համար, ըստ որչափ տուն Ֆիլատելֆիա կենամ, կամ մինչեւ որ ապէկ վիճակի մը մէջ գտնուիմ։

Էլուսիէն գոհ երեւցաւ, և ըստ թէ շատ մտացի՝ զգօն և խոհեմ երիտասարդուհի մ'էր, զոր չ'էր ամչնար իրեն ապգական անուանելու։ Կրկնեց, մեկնելու ժամանակ, որ երջանիկ պիտի ըլլար ինձ տալու կարելի եղածին չափ օգնութիւն, բայց թէ իւր վերջնական որոշումն էր որ չ'պիտի յաջողիմ վաճառական տան մը մէջ։ Երբէք Պ. Քրոֆիդը սիրած չ'էի, չափազանց ճիշդ էր ինձ համար՝ այսու հանդերձ

աւելի ցաւ պիտի զգայի զինքը ձգելուս և իւր բարեկամութիւնը կորսնցուցնելուս և աւելի երախտագիտութիւն յայտնած պիտի ըլլայի՝ Լիւսիին և զաւկիս ցուցած ազնուութեանն համար՝ եթէ գլուխս երիտասարդ Հիւսքնով լեցուած չ՝ըլլար։

Ամենաջերմ գորով ցուցուց ինձ, շնորհաւորեց զիս Քրոֆիդին վաճառատունէն ազատելուս. և զիս ապահովցուց որ իմ տաղանդներս ունեցող մարդ մ՝անպատճառ կը յաջողի բարեկամաց և անծանօթից օգնութեամբը։

Հիմա ամէն օր իւր հօրը տունն էի, հարուստ և զուարթ մարդոց ընկերութեան մէջ, որոց ամէնն ալ բարեկամներս էին։ Ընկերութեան հոգին էի, ամէն տեղ հրաւիրուած էի, և ամէն հրաւէրները կ՝ընդունէի, որովհետև չ՝էի կրնար վշտացնել Պ. Հիւսքնին մտերիմ բարեկամները։

Օրէ օր, շաբթէ շաբաթ, ամսէ ամիս այս կերպով շարունակեցի։ Ծեր Հիւսքնի բարեկամն էի, և ամէն մարդ ինձ կ՝ըսէր թէ՝ ինձ ուզածը կրնար ընել։ Մեծ, յանդուգն գաղափար մը յղացած էի, այն է տէրութենէն Լուիզիանայի մէջ ընդարձակ հող մը ձեռք բերել՝ հանգանակութիւն մ՝ընելով ի Ֆիլատէլֆիա բարեկամներէս հոն մեծ ագարակ մը պատրաստելու համար։ Բաժանորդք մաս

առ մեռան պիտի վճարէին, այսչափ առաջին տարին, այսչափ երկրորդն, և այնպէս հետզհետէ մինչեւ ամբողջին վճարումը։ Եւ մշակ պիտի գտնէի Իւլանտայէն և Սկոտիայէն գաղթականներով լցուած նաւերէն՝ որոց կ'ոպատէինք։ Քիչ առնէն ստորագրողաց մեծ ցուցակ մը ունեցայ որք իրենց անուանքն ինձ միշտ ճաշէն կամ ընթրիքէն վերջը կուտային։ Ցանկին գլուխը Հիւսարն իւր անունը գրեց, դիմացը մեծ և աչքի զարնող գումար մ'ալ դրնելով։

Որովհետեւ բան մը չ'էր կրնար ըլլալ մինչեւ յաջորդ գարուն, ուր նաւերը պիտի հասնէին, միւնոյն կերպով առնս անցուցի։ Գարուն եկաւ և պատասխան չ'ընդունեցաւ տէրութենէն. քանի մ'ամիս սպասել պէտք էր։ Պ. Հիւսարն, հայրն ինքնին, յանձն առած էր այս խնդրոյն համար տէրութեան դիմել, և ամէն առն իւր առաջադրութեան և այս առաջադրութիւնը կատարելու համար ունեցած իւր մեծ կարողութեանցը վրայ կը խօսէր, ամենայն վստահութեամբ։ Իւր խօսակցութենէն մարդ մը կրնար կարծել թէ Պերուի հանքերն իւր հողին վրայ էին, և թէ իւր ազդեցութեան քով Միացեալ Նահանգաց Նախագահը բան մը չ'էր։ Տարի մ'անցաւ մինչեւ որ իմացայ թէ ամէնն անձնասէր, ծոյլ մարդն էր

ինք։ Շատ ուրախ էր դիս իրեն սեղանակից տեսնելու՝ զինքը, և իր բարեկամները զուարճացնելու համար, բայց ամենաշնչին նրկատողութիւնը չ՝ունէր ինձ համար, և ոչ իմ շահերուս փոյթ կը տանէր բնաւ։ Ուզածիս չափ ինձ կը խօսէր իր տասցուածքներուն վրայ և այլն, բայց այն վայրկենին որ գործերուս վրայ բերանս կը բանայի, աթոռի մը վրայ կը նստուէր և քնանալ կը ձևացնէր։ Երբ իր հանդանակութիւնը կը յիշեցնէի, կը պատասխանէր։ «Ասոր վրայ, վաղը կը խօսինք, Բարեկ։»

Իմ բոլոր բաժանորդներուս ցուցակին մէջն ոչ ոք երբէք ինձ չ՝վճարեց հինգնոց մը։ Իրենց արդարացումն ամէն առեն այս էր թէ «Երբ տէրութիւնը պատասխանէ իր տալիք հոգին վրայ՝ հանդանակութիւնը կը վճարենք։» և տէրութեան պատասխանն էր «Երբ հանդանակութիւններն հաւաքուին, պիտի տանք հոգի մաս մը։» Ձ՝էի գիտեր ո՛ր կողմը դառնալ, ինչ ընել։ բայց մտածեցի որ բոլոր յոյսս յարատեւելու վրայ էր, և բարեկամներս զուարթ պահելու։ այնպէս որ ամեն առեն ինքզինքս մի և նոյն զուարթատատ մարդը կը պարտաւորէի ցուցնել, խնդալով, երգելով, խմելով երբ Աստուած գիտէ սիրտս որչափ ծանրաբեռն էր։

Խոսումանց, ակնկալութեանց և ձախորդութեանց երկրորդ տարին անցնելէն վերջը, Լիսիա, որ ամէն առեն գուշակած էր թէ գործերն ինչ վախճան պիտի ունենային, ինձ աղաչեց այս պղերգ բեկերութենէն հեռանալ, ցնորքներս մէկդի ձգել, և ընկերանալ Պ. Բրոֆիլին եղբօրն հետ արտ մը մշակելու համար. կնոջս նկատմամբ ունեցած հոգն, որ իւր բարեսրտութեամբը բոլոր այն ընտանեաց հաճելի եղած էր, յորդորեց զնա ինձ այս առաջարկութիւնն ընելու. բայց այնչափ ժամանակ մտածեցի, և այնչափ վարանեցայ թէ հեռւիմ կամ ոչ այս խորհրդին որ ընդունելու ժամանակն անցաւ։

Դեռ յոյս ունէի որ բարեկամս, երիտասարդ Հիւտոլին, պիտի օգնէ ինձ մեծ ծրագիրս գործադրելու համար որ ժամայիքայի մէջ ընդարձակ մշակութիւն մ'ունէր, իւր մայրենի պապուն կողմանէ. յաջորդ տարին զայն առնելու հասակը պիտի մտնէր, և դիտաւորութիւն ունէր զայն ծախելու, և դրամին մեծ մասովը մեր երազն իրականացնելու, որուն յաջողութեան վրայ մեծ յոյսեր դրած էր՝ ինձ պէս։ Եռաս աշխոյժ վեհանձնութիւն մ'ունէր։ Ամենամեծ ազդեցութիւն ստացած էի իւր վրայ, և մինչև հիմայ ապահով եմ որ ինձ հաճելի ելլալու համար ամէն բան կը զոհէր։ Ինձ-

մէջ խնդրածն իրեն ընկեր ելլալ էր։ Շատ կը սիրէր դաշտային զբօսանքն, և ես թէպէտ բընիկ Լօնտօնցի՝ սակայն երբ Լիւսին կը սիրէի, հարկ համարած էի ինքզինքս այս տեսակ հրահանգաց մարզել, իւր եղբարց հաճելի ելլալու համար։ Այս բոլոր կատարելութեամբք ազդեցութիւնս մեծ էր բարեկամացս վրայ։ Ամէն օր կ'երթայինք ձուկ բռնելու կամ թըռչուն որսալու, և ճաշ ժամանակ զանազան գործեր ունէինք, այսինքն զանազան ծուլութեան համար չքմեղանք։

Հիւսաքն մեծ Աքէյթըր*) մ'էր և շատ կը սիրէր ինձ սահիլ սովրեցնել։ Կը փափաքէր նաև ինձն սովրեցնել Ամերիկացի սայթաքման արհեստը։ Շատ անգամ ձմեռուան չարաչար ցուրտ օրերուն իրեն հետը կը սահէի, մինչդեռ ուսելի աղէկ երած կ'ելլայի, կը խոստովանիմ, անմասնագ կենալ կրակարանին մօտ, կնոջս հետ։

Խեղճ Լիւսին թաղծեալ և անհաճոյ կերպով անցուց իւր ժամանակն այս երեք տարուան միջոցին, որովհետև, երբ դուրսն էի՝ բոլոր օրը եւ բոլոր գիշերը միանակ կը մնար իւր բընակարանին մէջ։ Երբէք չ'էր տրտնջէր, եւ ա-

---

*) Մասնաւոր հոգաթափներով սառոյցի վրայ սահելու վարժ մարդկանց կը տրուի այս անունը։

մէն առեն զիս քաղցրութեամբ կ՚ընդունէր թէեւ ինձ սպասած ըլլար մինչեւ կէս գիշեր Հիւսրնին խնջոյքներէն վերադառնալուս։

Սրտիս մեծ ցաւ էր ամեն առեն զինք մինակ ձգել, բայց ինքզինքս կը մխիթարէի մտածելով թէ այս տեսակ կեանքը երկար պիտի չտեւէ, թէ բարեկամս քիչ առենէն տարիքը պիտի հասնի, և կարող պիտի ըլլայ իւր բոլոր խոստումները կատարելու, և այն առեն ամենքնիս ուրախ զուարթ պիտի ապրինք։ Լիւսին ապահովցուցի որ հիմակուան պէս ծոյլ ծոյլ ժամավաճառ ըլլալս ինձ հաճելի չէր. թէ ստէպ շատ սրտաբեկ էի, թէպէտ եւ պարտաւորուած էի ամենազուարթ երեւալ, և ստէպ կը փափաքէի հանդարտ իւր քովն մնալ երբ պարտաւորած էի առենս բարեկամաց զոհելու։

Անկարելի եղած պիտի ըլլար կնոջս և զաւակիս այս միջոցին հանդիստ ապրիլ եթէ կնոջս հոգածութիւնն և աշխատանքը չ՚ըլլային. ոչ մէկէ չէր ուզեր ընդունիլ որ եւ է դրամական օգնութիւն, միայն իւր ազգական Պ. Քրօֆիդէն որ կանոնաւորապէս իւր բնակարանին վարձքը կը վճարէր։

Սկսաւ դաս տալ քանի մը դեռատի օրիորդաց զոր Տ. Քրօֆիդ իրեն ներկայացուցած էր, դեղեցիկ ձեռագործներու զոր սքանչելապէս ապէկ կը բանէր, և ասոր համար ապէկ վճար-

ուած էր։ Այսչափ գիտեմ որ դրամ մը դրրպանէս չվճարեցի երեք տարի և երեք ամսոյ մէջ զոր Ֆիլատէլֆիա անցուցինք։ Բայց այս բան մը չէ իւր անուշ բնութեանը բաղդատելով այն ամեն դժբաղդութեանց առեն, և իւր ամէն բանի հանդուրժելն առանց հետս կըռուելու։ Շատ կանայք որ շատ ալէկ տանտիկին կը կոչուին՝ իրենց ամուսնոյն տասնապատիկ վճարել կուտան, զանոնք չարչարելով, ինչ որ իրենց խնայութեամբ կը վատնին։ Այսպէս չէր Լիւսիս, և իմ յարգանքս և ամենամեծ սէրս կը վայելէր։

Կը յուսայի թէ մօտ էր ժամը յորում կարող պիտի ըլլայի այս զգացմանցս վրայ դինք տպահովցնելու, և թէ ալ այսպէս չէինք անցուներ օրերնիս։ Բայց առաջ իւր դատողութիւնն իմինէս ալէկ էր։ Հիւսսըն բարեկամս միայն վեց շաբաթ ունէր չափահաս տարիքն մտնելու, երբ դժբաղդաբար, Ֆիլատէլֆիա եկաւ Անգլիացի գերասանական խումբ մը։ Հիւսսըն, որ անմիջապէս կ'իմանար հոգոյից վերաբերեալ ամէն լուր, ուզեց ինձ հետ միասին երթալ առաջին ներկայացման։

Գերասանուհեաց մէջ Մարիոն կոչուած աղջիկ մը կար որ բաւական գրեհիկ կ'երեւար, ճիշդ արժանի այսպիսի խմբի մը, բայց բաւա-

կան աղէկ կը պարէր, և այն օրը շատ պարեց արարուածներուն վերջը։ Հիւսոսն այնչափ զայն ծափահարեց որ համբերութիւնս հատաւ և որչափ ես աղջիկը վար կը զարնէի՝ ինք այնչափ կը դրուատէր։ Երանի թէ Նոր Զէմլիա գտնուէր, որովհետև տեսայ որ զայն կը սիրէր, և տեսակ մը նախատեսութիւն ունէի անոր հետեւանաց վրայ։ Հանդիպածը համբուրելու համար (որովհետև ի՞նչ պէտք է անցած դժբաղդութեանց վրայ երկարել) որչափ որ երիտասարդ Հիւսոսնին սէրը կ'աւելնար այս պարաւոր աղջկան վրայ, այնչափ իւր բարեկամութիւնն ինձ համար կը քիչնար, որովհետև ոտէպ վէճ ունէի իրեն հետ այս բանին և կրցածս ըրի իւր աչքը բանալու համար։ Տեսայ որ գուսանուհին ճարտար էր, իւր ազդեցութեան սատկութիւնը կը հասկըներ, եւ այնպէս պիտի ընէր որ իւր խեղճ սիրականը զինք կնութեան առնու։ Հիւսոսն իւր բոլոր կրից մէջ յամառ եւ բուռն էր, ինձ հետ կռուեցաւ, ժամանակ տարաւ աղջիկը, իրեն հետ կարգուեցաւ տարին հասած օրն և իւր ոգարակը քաշուեցաւ։ Այսպէս բոլոր յոյսերս ի դերեւ ելան։

Լիւսի, որ ամէն տեսն դժբաղդութեանց միջոցիս օժանդակս էր, դիս ուրախացուց ըսելով որ պարտքս ըրած էի բարեկամիս խնդրու-

թեանը դէմ դնելով՝ իմ անձնական շահուս հակառակ, և թէպէտ և ինձ հետ կռուեր էր. զիս ասոր համար ինք աւելի կը սիրէր։

Իմ պատմութեանս և բնութեանս վրայ մըտածելով, ստէպ խորհած եմ թէ ինչ խեղճութիւն էր իմս որ քանի մը աղէկ յատկութիւններովս՝ եւ մինչեւ իսկ տաղանդներովս ըսեմ բնաւ բանի մը մէջ յաջողած չըլլամ, որովհետեւ կարող չեղայ ամէն բան յեռաձգելու դէշ սովորութիւնս ջնջել որ ունակութիւն դարձեր էր եւ զոր չնչին բան մը կը համարէի։

Լիւսիին խրատներուն ազդեցութեամբ վերջնական կերպով որոշած էի Պ. Ֆրոֆիդին գրել, իրեն ազաչելու համար որ նոր փորձ մ՚ալ ընէ. յաջորդ օրուան ձգեցի նամակը յըղելս և ճիշդ նոյն առաւօտուն Պ. Ֆրոֆիդ գացեր էր քաղքէն բաւական հեռաւոր մը տեսնելու համար իւր նոր ամուսնացեալ մէկ աղջիկը։

Շատ նեղացայ, և աւելի աղէկ ընելիք գործ մը չունենալուս որսի գացի։ Քանի մը փասիան զարկի եւ սովորութեանս համեմատ զանոնք տարի ծեր Հիւսընին խոհանոցը, և խոհարարին տուի։ Այսպէս հանդիպեցաւ որ խոհանոցը կեցայ սիրական մէկ շանս ուտեստ ջամբելու համար, մինչ խոհարարը փասիանները կը պատրաստէր։ Դիտեցի փասիաններուն մոյն գա-

ւակը քանի մը վայրուն կանաչ տերեւներ, և երկիւղի մէջ էի որ մի գուցէ Քալիալաֆիոլիա կոչուած թունաւոր բոյսի մը տերեւներն ըլլան։ Բոլորովին ապահով չ'էի, որովհետեւ գրեթէ մոռցած էի Զինաստան երթալէս առաջ գիտցած քիչ մը բուսաբանութիւնս։ Տերեւներն ինձ հետ տուն տարի զանոնք ապէկ մը զննելու համար և բաղդատելու համար բուսաբանից ստորագրածին հետ, և իրեն ապաշնչի որ այն թռչունները չ'պատրաստէ մինչեւ որ իրեն լուր չխրկեմ. խոստացայ գինքը տեսնել, կամ իրեն լուր ղրկել միւս օրը։ Բայց երբ գրավաճառի մը խանութը մտայ բուսաբանութեան գիրք մ'առնելու համար, ուշադրութիւնս գնաց քանի մը նոր ելած լրագրաց, որ Լոնտոնէն եկած էին։ Քալիա Լադիֆոլիային գործը յաջորդ օրուան ճգնցի։ Վաղը, մտածեցի, այն կրնամ տեսնել, որովհետեւ ապէկ գիտեմ որ խոհարարը փոսիաններն այս օր չ'պատրաստեր. ծեր Հիւս
նը զանոնք չսիրէր՝ երբ ինչ կամ էրկ-ը ոչ պահուած չ'ըլլան։

Վաղորդայնը հասաւ, և տերեւները մոռցայ մինչեւ երեկոյ, երբ զանոնք սեղանիս վրայ տեսայ և անկէ նետեցի՝ վախնալով որ պզտիկ ապաս զանոնք կը գտնէ և կ'ուտէ։

Կը ցաւէի այն օրը զանոնք քննած չըլլալուս

բայց ինքզինքս համոզեցի՝ ինչպէս մինչեւ այն ատեն ըրեր էի թէ վաղն ալ նոյն գործը կրնայ ըլլալ. խոհարարը փասխանները այսօր չ՚պատրաստեր, կ՚ըսէի, ծեր Հիւսանը կը կարծէ որ աւելի հաւեղ կ՚ըլլան երբ Երկու կամ երեք օր պահուին։

Վաղն եկաւ՝ բայց որովհետեւ Քալմիա Լատիֆոլիային տերեւները աչքէս հեռու էին, մոքէս ալ ելան։

Զբօսանքի մը հրաւիրուած էի այն օրը, մեծ ընկերութիւն մը կար և կերակրէն վերջը ըստ սովորութեան ինձ աղաչեցին երգել՝ ամենուն սիրած երգն.

Օ՛ն պար եւ նուագ
Ամէն ժամանակ,
Չի գարուն կենաց
Չ՚ունի վերադարձ։

Պարոն մը գոյնը նեռած ներս մտաւ մեզ ըսելու որ Պ. Հիւսանը և երեք ուրիշ պարոնայք հիւանդացեր էին փասխան *) մ՚ուտելով,

---

*) 1790–91ին սոսկալի ձմեռուան միջոցին՝ անտարակուսելի ապացոյցներ կային թէ շատ մարդիկ՝ Ֆիլատէլֆիոյ մէջ՝ փասխան ուտելով մեռած էին։ Այս փասխաններուն գաւակին մէջ calmia latiolia անկոյն տերեւներէն և ընկուզներէն գտնուեցան, այնպէս որ քաղաքապետն հարկ և խոհեմ դատեց ապդաւ արել ժողովրդ-

եւ թէ յոյս չկար որ ապրին։ Արիւնս պաղեցաւ, «Ասուած իմ, աղաղակեցի, ասոր պատասխանատու եմ։»

Այս աղաղակն արձակելուս՝ անմիջապէս լռութիւն մը տիրեց, և բոլոր աչուքները իմ կողմն դարձան զարմանօք և սոսկմամբ։ Ամենուրեք վրայ ինկայ, և ինչ որ վերջը հանդիպեցաւ չ՚եմ գիտեր, բայց երբ ուշաբերեցի, տեսայ սենեկին մէջ երկու մարդ որ վրաս հսկելու համար քովս կեցած էին։ Գաւաթներն և չիչերը դեռ սեղանին վրայ էին, բայց ընկերութիւնը ցրուեր էր, և տէրութեան պաշտօնեայ մը, ինչպէս պահապաններս ինձ ըսին՝ գացեր է Պ. Հիւսընին, իւր կատիին համար։

Այս պարագայիս մէջ՝ ինչպէս ամէն յանկարծապէս արկածից մէջ կը պատահի՝ տարուածայնութեամբ եղած չարիք չափազանցուեր էր, և Պ. Հիւսընն թէպէտև շատ հիւանդ սակայն մեռնելու վիճակի մէջ չ՚էր և իւր երեք բարեկամք մը ժամ հիւանդութենէ վերջն աղէկցեր էին։ քանի Պ. Հիւսընն, որ ամենէն աւելի փասխանէն

դեան որ այս թուչնէն զգուշանայ՝ և ասոր համար յոյսարարութիւն մ՚ալ ըրաւ։ Այս բանս շատերէ լսեցի՝ մանաւանդ քանի մը փասիանի միաբ սիրողներէ որ անհիմն կը համարէին վերոյիշեալ ենթադրութիւնը։ բայց եղելութիւնն իրօք մեր դրածին պէս տեղի ունեցած է։

(Սմիթ Պաւթըն։ Ամերիկեան Գործք։ Հատոր Ա.

կերած էր, միայն երկու օր հիւանդ մնաց ետերորդ օրը կարող եղաւ սեղանը բազմիլ բազմաթիւ ընկերներով, սովորականին պէս, և միտքս հանդարտեցաւ անտանելի անձկութենէ մը։

Յետ քննութեան, պաշտօնեայն համոզուեցաւ որ անմեղ էի, խոհարարը ճշմարիտը խոստովանեցաւ, ինքզինքը մեղադրեց մարդ մը ինծի չը զրկելուն թռչուններն ուտելէ առաջ, բայց ըսաւ թէ կարծեր էր որ տերեւները բոլորովին անվնաս գտեր էի, իրեն հակառակը չ՝ըսելուս։

Արձակուեցայ և տուն դարձի կնոջս։ Զիս գրկացը մէջ առաւ, բայց բառ մը կարող չ՝էր արտասանելու։ Իւր ուրախութենէն զիս տեսնելուն, կրցայ մակաբերել թէ որչափ տանջուեր էր այն սարսափելի միջոցին։

Այս դժբաղդ դիպուածը ժամանակ մը վերջը տակաւին խօսակցութեան նիւթն էր ի Ֆիլատէլֆիա։ Պատմութիւնն հազար զանազան կերպով զրուցուեցաւ և ամէն մեկնութիւնք ինձ նկատմամբ նախատալից էին։ Ոմանք զիս պարսաւեցին ճիշդ այն թերութեանս համար որով արժանի էի պարսաւանաց, փասիանին մէջ գտնուած տերեւները քննելն յետաձգելուս համար. ուրիշներ կարծել կեղծեցին թէ անկարելի բան էր որ մարդ մը այսչափ անհոգ լինի, և այս խօսքն ըսողներն անոնք էին որ

զիս ամենամեծ հիւրասիրութեամբ պատուած էին, քանի մը տարիէ ի վեր։ Ուրիշներն՝ ա՛լ աւելի խորամանկ՝ կը յարէին թէ, թէպէտեւ պաշտօնեայն զիս պաշտպանած էր, և կարելի է խեղճ Պ. Հիւսարն ալ բարեսրտութեամբ միջամտեր էր, այս գործին մէջ գաղտնիք մը կար որ երեւան չ'էր եկած։ Այլք դարձեալ թելադրեցին որ քալմիա լադիֆոլիայի տերեւոց պատմութիւնը բոլորովին կեղծիք մ'էր, որովհետեւ փասիանք կարող չ'էին այս կերպով թունաւորուելու։

Այս մարդասպանութեանը պատճառ մը գտնելու համար, ըսուեցաւ որ ծեր Պ. Հիւսարն խոստացեր էր ինձ մեծ ժառանգութիւն մը ձգելու, զոր անհամբեր էի ստանալու, ասոր համար այս բանս ըրած էի։ Զարմացայ և ա՛լ աւելի տրտմեցայ տեսնելով յանկարծակի բոլոր ծանօթիցս դէմքին վրայ եղած փոփոխութիւնը։ Ժողովրդականութիւնս կը նուազէր և հետզհետէ տառնձնացած կը մնայի։

Հաւատալիքս չ'էր գար թէ անոնք որ ինձ հետ այնչափ մտերմաբար ապրեր էին, անոնք որ շողոքորթեր էին զիս, անոնք որ այնչափ ատեն զիրենք բարեկամներս կոչեր էին, ՝մէկէն ի մէկ կարող ըլլան զիս ամենասոսկալի մարդասպանութեան մը կարող ենթադրելու։ Ցիրաւի, շատերը հոգ տարած չ'էին և ոչ իսկ

մասնելու առոր վրայ, բայց գոհ էին մարդ մը խնդրելու, որուն երգերէն և պատմութիւններէն կ՚սկսէին տպագրանալ, և որ իրենց անունները ցուցակի մը վրայ արձանագրեր էր զոր չ՚էին փափաքեր վճարելու։

Այսպէս է աշխարհ։ Այսպէս է բոլոր բարեմիտ մարդկան եւ պատուական գինուոյ բաժակի ընկերներուն ճակատագիրն։ Ապահով են երեսի վրայ ձգուելու իրենց սիրելի բարեկամներէն, բաղդին ամենափոքր ինչ փոփոխելուն։

ԳԼՈՒԽ Զ.

Ֆիլատելֆիոյ մէջ ներկայ վիճակս այնքան անախորժ էր, և զայրոյթս ու զղուանքս այնչափ մեծ՝ որ որոշեցի այն երկրէն հեռանալ։ Իմ ճշմարիտ բարեկամս, Պ. Ֆրոֆիդ, բոլոր այս ժամանակը քաղքէն հեռու էր։

Ապահով եմ որ եթէ տունն եղած ըլլար, ինձ իրաւունք պիտի տար, որովհետեւ, թէպէտեւ զիս երբէք չ՚էր սիրած, արդար մարդ մ՚էր որ ժողովրդեան բաժին չ՚էր հաւատար։ Ուրիշ պատճառներ ալ ունէի իւր բացակայութեան վրայ տրտմելու։ կարող չ՚էի Ամերիկան ձգել, տակ չունենալով, և միայն իրմէ կը հա-

մարձակէն օգնութիւն խնդրել։ Շատ պարտք չ'ունէինք, որուն համար բարի կնոջս շնորհակալ ըլլալու եմ, բայց երբ ամէն բան վճարուեցաւ, պարտաւորուեցայ ժամացոյցս և քանի մը ուրիշ բան ծախել ճամբորդութեան դրամ հայթայթելու համար։ Այսպիսի բաներու վարժուած չ'էի և կ'ամչնայի վաշխառուի մը դիմել, որովհետեւ կարելի էր բարեկամաց մին դէս դիմաւորէր և ճանչնար։ Հին հագուստի մը մէջ փաթթուեցայ և գլխարկս մինչեւ աչքս ինջուցի։

Երբ ծովեզերքէն կ'անցնէի, դիմաւորեցի քանի մը պարոնայք որ թեւ թեւի կը պտըտէին։ Արագութեամբ մը անոնց քովէն սողոսկեցայ, բայց անոնցմէ մին կեցաւ և ինձ նայեցաւ. և թէպէտեւ ուրիշ փողոց մը մտայ փախչելու համար, ինձ հետեւեցաւ նա առանց տեսնուելու։ Ճիշդ երբ վաշխառուի խանութէն դուրս կ'ելլէի գինքը առջեւս կանգնած տեսայ. եթէ ձեռքէս գար զայն գետինը կը նետէի իւր անկրթութեանը համար։ Դեռ փողոցին անկիւնը հասած չ'էի՝ երբ իմացայ որ ոստիկան մը որ զիս կը կանչէր։ Կեցայ, և պզտիկ մանչ մը ձեռացս մէջ ժամացոյցս դրաւ ըսելով.

«Տէր իմ, պարոնը կ'ըսէ որ այս ժամացոյցը սխալմամբ ձգեր էք.»

«Ո՞ր պարոնը։»

«Չեմ գիտեր, բայց նա էր որ ըսաւ թէ բարի տղայ մը կ'երեւամ, ինծի յանձնեց ժամացոյցը ձեզ տալու համար։ Կապոյտ հագուստ մը հագուած ծովեզերքին կողմը գնաց. միայն այսչափ գիտեմ։»

Երբ Թուզթը բացի այցատոմս գտայ այս բառերով։

Պարնի, շատ շատ շնորհակալութեամբ։

Պա՛րնի։ Ինչ՞ Պարնի։ Այն իտալնատացին որուն անցքը վճարեցի Ամերիկա գալու համար երեք տարի առաջ։ Կարե՞լի բան է։։

Իւր եռեւէն վազեցի տղուն ցուցած ճամբէն, եւ բարեբաղդութեամբ իւր հագուստին մէկ ծայրը նշմարեցի երբ կը մտնէր, մաքուր բարեշէն տուն մը։ Բաւական ատեն վեր վար պտտեցայ, յուսալով որ նորէն դուրս կ'ելլէ, որովհետեւ կարող չ'էի կարծել թէ իրենց ըլլար այս տունը։ Դեղավաճառի մը հարցուցի որ իւր դրան առջեւ կեցած էր, թէ արդեօք գիտէր ո՞վ կը բնակէր քովի տունը։

«Իտալնատացի պարոն մը, Օ' Կրատի անուամբ։»

«Իւր մկրտութեան անո՞ւնը։»

«Ամաւասիկ դրքերուս մէջ գրուած է։

Պարոն Պարնապէ Օ' Կրատի։

Պ. Օ. Կրատիի տունը գարիի եւ սրահը

մոայ ուր գոայ գինքը, կինն եւ իւր մանչերը թէյի նստած։ Ինքն եւ երկու երիտասարդներն անմիջապէս որք ելան ինձ աթոռ մը հրամցնելու համար։

«Բարի եկար, Պարոն, հազար բարի, ըսաւ այս պատիւ մ'է զոր երբէք չ'էի սպասեր ընդունիլ։ Կ'աղաչեմ կրակի քովի աթոռին վրայ նստէ։ Զվայլեր որ դու ամենէն աղէկ աթոռը չ'առնես մեր տանը մէջ, երբ ոչ մէկիրնիս կարող պիտի ըլլայինք նստիլ, եթէ դու չ'ըլլայիր։

Մանչերը վերարկուս եւ գլխարկս առին և կինը կրակն արծարծեց։ Այնպիսի բան մը կար իրենց ամեն շարժուածոյ մէջ որ մեծ դժուարութեամբ կարող եղայ արցունքս բռնել։

Այս բանը տեսան, եւ Պարնին (երբէք անոր ուրիշ անուն մը չ'եմ տար) կարծելով թէ ինձ աւելի հաճելի կ'ըլլար հասարակաց գործերուն վրայ խօսիլ քան իրեններուն, հարցոոց մանչերուն թէ արդեօք այն օրուան լրագիրները կարդացե՞ր էին եւ թէ ի՞նչ լուր կար։

—Երբ կրցայ ձայնս զսպել, իւր ընտանիքը շնորհաւորեցի այն բարեբաստ վիճակին համար յորում զանոնք կը դանէի, եւ հարցուցի թէ ինչպէս, ի՞նչ բաղդաւոր դիպուածով այսպէս աղէկ յաջողեր էին։

«Ամենէն բաղդաւոր դիպուածն որ ինձ հանդիպած է Ամերիկա գալէս առաջ կամ վեր-

ջը, ըսաւ Պարնի, քեզի նման մարդու մը հետ միւնոյն նաւին վրայ գտնուելս է։ Եթէ առջի օգնութիւնն ինձ ըրած չըլլայիր՝ շատոնց ոտքի տակ պիտի երթայի։ Բայց այդ առջի օգնութենէն վերջը, ամէն բան ինքնիրեն առաջ գնաց։ Երկու մանչերս ձեռքէս չ'առին։

«Աստուա՛ծ օրհնէ դքեզ. որովհետեւ երբէք ասոր համար ես քեզ բաւական չ'եմ կրնար օրհնել.

«Մանչերը մնացին ինձ հետ աշխատելու համար, եւ երբէք ոչ սրտով եւ ոչ ձեռօք պատուեցանք, այլ միշտ միատեղ աշխատեցանք, եւ դրինք բոլոր վաստակածներս այս բարի կնոջ ձեռքը. առաջ դժուարաւ ապրեցանք բայց հետզհետէ գործն աղէկցաւ. փառք Աստուծոյ։ Դիպուածով որմնադրի քով ծառայած ըլլալուս երբ մշակ մ'էի Տիւպլինի կոմսութեան մէջ, բաւական կը հասկնայի այդ գործէն, ուստի հոս ալ նոյն գործին գացի, եւ ակնկալութեանս աւելի շատ ամսական ունեցայ։

«Միւնոյն բանն եղաւ երկու մանչերուն համար, մին դարբին եւ միւսը փայտագործ. մին գործ գտաւ դարբնոցի մը մէջ, եւ միւսը ժթերանոցայ մէջ՝ երբ նաւային փայտագործ։

«Այսպէս կանուխ եւ ուշ, առաւօտ և երեկոյ, ամենին ալ գործի էինք. այսպէս անցաւ տարի մը եւ գտանք որ մեր ընդունած

մեծ ամուսիններով շատ աւելի ազէգ կրնայինք ապրիլ աշխարհիս մէջ։ Սակէ զատ կինը ծոյլ չ'էր։ երբ ազջիկ էր տեսեր էր եմիլ, եւ կերպը գիտեր, եւ ջանաց ձեռքն անոր վարժեցունել։ յաճախորդք ալ եկան։ այս ալ մեծ օգնութիւն մ'եղաւ։ Վերջը որմնադիր վարպետ եղայ, եւ բանուորներ ունեցայ իշխանութեանս տակ, տուն մը շինեցի եւ յետոյ հատ մը եւ հատ մ'ալ շինեցի։ Դրացիներուն համար շինելէս վերջը, հիմա կարգն ինծի եկաւ, ըսի, տուն մը շինելու եւ շինեցի։ Մանչերս ալ ճարտար մարդիկ եղան իրենց արուեստին մէջ եւ երբ մաքուր հագուեցան, ոչ ոք իրենց դէմ բան մը կարող էր ըսելու, որովհետեւ եղածնին իրենց ձեռօք ըրեր էին։ Այսպէս, ձեզ աւելի շնեղելու համար, ազէկէն աւելի ազէկ գացինք եւ աւելի ազէկէն ալ աւելի ազէկ եւ եթէ Աստուած ինձ հարցնէր թէ ինչպէս այսչափ յառաջացանք, պիտի պատասխանեմ «Ընկճիս վրայ ես ալ չ'եմ գիտեր։ բայց սա գիտեմ որ պարապ օր չանցուցինք։ Սուրբ երկուշաբթին ինչ է չենք գիտեր։ (*) եւ ինչ որ այս

(*) Սուրբ երկուշաբթի կամ Ընդ Քրիստոս —

Եւրոպացի զանազան ժողովրդոց մէջ սովորութիւն կայ որ դրծաւորք եւ մանաւանդ կօշկակարք՝ կիրակի օրը չարաչար գինովնալէ ետք՝ երկուշաբթի անկարող կ'ըլլան աշխատելու, եւ ասոր կ'ըսեն Ս. երկուշաբթի կամ Ս. Քրիստոսի տօնը կատարել։

օր կարող էինք ընել՝ վաղուան չ'ձգեցինք։»

Կարծեմ թէ ի խոր սրտէ հառաչեցի այս դիտողութեանց վրայ։ «Բայց այս բոլորը ազնուականի մը գործ չ'է, շարունակեց բարի Պարնին, ի պատասխանի կարծեմ, հառաչանքիս, եւ ամօթ չէ որ Ամերիկայի պէս տեղ մը չ'յառաջանայ, որովհետեւ փայտ կրելու վարժած չ'է, ինչպէս որ մենք ըրինք։ Մի թէ ներելի՞ է քեզմէ խնդրել որ մեզի հետ գաւաթ մը թէյ խմես եւ կնոջս պատրաստած հացէն եւ կարագէն կտոր մ'ուտես։ Երանի՛ այն օրուան որ զայն ուտելդ պիտի տեսնենք, մեր միակ փափաքն ուրիշ որ եւ է պարագայից մէջ ձեզ ծառայել կարենալ։»

Սրտի մտօք կը կարծեմ թէ այս վայրկենիս այդ վեհանձն մարդը մոռցեր էր որ ինձ հետ տուեր էր ժամացոյցս։ Զթողուց ինձ իրեն ուզածիս չափ շնորհակալ ըլլալ, բայց անդադար ծառայութեան առաջարկութիւններ կ'ընէր։ Երբ իմացաւ որ Ամերիկան պիտի ձգեմ ինձ հարցուց թէ ո՞ր շոգենաւով պիտի երթայինք։ Ճշմարիտը վախցայ իրենց ըսելու որովհետեւ կարելի էր որ ուզէր անցքս վճարել։

Բայց այս մասին, ինչպէս որ վերջը հասկցայ, շատ զգացմանց փափկութիւն մ'ունէր, Նաւապետներուն հարցունելով իմացաւ թէ ո՛ր շոգենաւով պիտի մեկնէինք, եւ երբ նաւ մը-

ատանք զինքն եւ իւր երկու մանչերն եւս զը-
ատանք որ եկեր էին մեզի հրաժարելու համար
ինչպէս որ ըրին ալ ամենասիրալիր կերպով եւ
երթալնէն վերջը դատանք մեր սեղեկին մէջ
ամէն ինչ որ կարեւոր եւ հաճելի է երկայն
ճամբորդութեան մը միջոցին։

Ո՛րքան անիրաւեր էի այս մարդուն դէմ,
կարծելով որ իւր երախտագիտութեան ցոյ-
ցերը ճշմարիտ չ'էին՝ որովհետեւ իմ հայրե-
նակցացս ըրածին չէին նմաններ։ Բնաւ մոքէս
անցած չէր թէ Պարնի եւ իւր որդիք պիտի
միակ անձինքն ըլլան որ մեզի բարեկամական
երթաս բարեաւ մը պիտի ըսեն Ամերիկան թո-
ղած առեններս։

Երբ Անգլիա հասանք դեռ մեր ճամբու պա-
շարներն սպառած չ'էինք։ Լիվերբրուլ ելանք և
չ'եմ կրնար նկարագրել այն թաղծագին զգա-
ցումները զոր զգացի երբ նաւեցայ պանդոկին
եռեւի որտեղը հարստութիւնս համրելու և հա-
շուելու համար թէ բաւական դրամ պիտի ու-
նենա՞նք Լօնտոն ուղեւորելու համար։

Այս է ուրեմն, մտածեցի, երբ նայեցայ
քանի մը ոսկիներն որ սեղանին վրայ սփռը-
ուած էին. այս է աշխարհի վրայ բոլոր ունե-
ցածս։ Ես, կինս և զաւակս։

Այս է հայրենիքէս երեք տարի մեկնելուս
արդիւնքն։ Ինչպէս խամիշիկք կ'ըսեն խենդի

մը համար որ պարապ տեղը ճամբորդութիւն մը կ'ընէ. «Եւ եկայ հազիւ գլխուս վրայի մազերէն քիչ մը աւելի բանով։» Ա՞յս է բոլոր յոյսերուս և հանճարիս վախճանը։ Կինս և զաւակս ի՞նչ պիտի ըլլան։ Պարտքս է զայն ղրրկել իւր ազգականաց որ հոն գոնէ կենաց պիտոյքն ունենայ մինչեւ որ կարող ըլլամ զայն ես պահելու։

Արցունքներ հոսեցին աչքերէս. հին լրագրի մը վրայ կաթեցան որ թեւիս տակն էր սեղանին վրայ։ Զայն առի երեսս ծածկելու համար Լիւսիէն և զաւկէս որ ճիշդ այդ վայրկենին ներս կը մտնէին. և երբ զայն կը կարդայի առանց ըրածս աղէկ գիտնալու՝ իմ վրաս գրուած բանի մը հանդիպեցայ. «Եթէ Պ. Բարոնեղ Լօս կամ իւր ժառանգը գիմէ Պ. Գրիգորի՝ փաստաբան՝ թիւ 34՝ Սէսիլ փողոց՝ իրեն օգտակար բան մը պիտի իմանայ։»

Կանգնեցայ ուրախութեան ճիչ մը արձակելով, արցունքներս լրագրով սրբեցի, զայն Լիւսիին ձեռքը տուի և վազեցի յաջորդ օրուան կառքին մէջ տեղ մը բռնելու։ Այս պարապայիս մէջ ձգձգութիւն չ'ըրի։ Ա՛չ ալ, երբ Լօնտօն եկանք, վայրկեան մը չը յապաղեցայ Պ. Գրիգոր փաստաբանին տունն երթալու թիւ 34՝ Սէսիլ փողոցին մէջ։

Իրեն գիմելով տեղեկացայ թէ ինձ շատ հե-

ուս ազգական մը, հարուստ ազատ մը, իւր բոլոր ստացուածքն ինձ ձգեր էր «որովհետեւ ես միայն իւր ազգականներէն իրեն ստակ մը ծախք ընել ստած չէի։»

Կան մարդիկ որ կը սրտնչան իրենց շար բաղդին դէմ, կարելի է ալ իրաւամբ. բայց այս մեծ գոհունակութիւն մ'է զոր ես երբէք չեմ վայելած, որովհետեւ հարկ է խոստովանիմ որ իմ բոլոր դժբաղդութիւններս իմ խենդութենէս յառաջ եկած են։ Բաղդը սովորականէն աւելի ինձ յաջող եղած է։ Բնաւ անձնական արժանիք մը չունենալով կամ մանաւանդ՝ ինչպէս կ'երեւայ՝ իրր հետեւանք իմ անհոգ բնութեանս իսկ որ զիս չը թողուց այցելել, հարուստ ազգական մը, մէկէն ի մէկ յուսեգոյն վիճակէն ամենաբաւ վիճակը բարձրացայ։

Բաղքին ախորժ մի թաղին մէջ գեղեցիկ տան մը տէր եղայ, և ինչ որ հարստութիւնը կրնայ տալ, բարի վայելեցի կնոջ մը հետ որ իմ օգնականս եղած էր դժբաղդութեան մէջ։ Ճշմարիտն ըսելով զրուցելու եմ թէ ո՛չ սարսրինակ և ոչ շռայլ եղայ. սէր և երախտագիտութիւն Լիւսիին համար լեցուցին բոլոր միտքս, և ինձ չը ձգեցին այն յանցանքները գործել զոր կ'ընեն անոնք որ մէկէն ի մէկ աղքատութիւն է հարուստ կ'ըլլան։ Բարի բարեկամս չը մոռցայ, Պ. Ներնը, որ զիս բռնէն ազատեր

էր։ բնականապէս վճարելի պարտքն զոր ինք մոռցած ալ էր, և ոչ ալ առիթ մը փախցուցի իրեն քաղցրութիւն և երախտագիտութիւն ցուցնելու։

Հիմա այնպիսի պայմանի մը մէջ էի որ բընութեանս ընտրելագոյն կողմերն երեւան կ'ելլէին և բնաբոյս ունակութեանս մեծ թերութիւնը կարեւոր հետեւանք մը չ'էր կրնար ունենալ։

Հիմա պարտաւորուած չ'էի ճիշդ ըլլալ գործի մարդու մը պէս, իսկ գրօսանաց մէջ յարաղելը պզտիկ բան մ'էր, և միայն գիս ծաղրելու պատճառ կուտար բարեկամաց։ Խօսակցութեան տաղանդս զարմանք կը պատճառէր, և երբ նամակաց պատասխան չը գրէի, թղթակիցներս կրթեալ կերպով մը ինձ կը հասկըցունէին անհոգութիւնս։

Կը զգայի թէ թերութիւններէս բժշկուած չ'էի բայց կուրախանայի այնու որ հիմայ պարտաւոր չ'էի ուզուելու կամ իմ անհոգութեամբս սիրածներս աղքատցնելու վտանգին մէջ չ'էի։

Տարուց մը չափ եղջանիկ էի և կ'ուրախանայի թէ ատենս չ'էի կորսնցուներ որովհետեւ պարապ ժամանակներուս խընամով կը կարդայի կրթութեան վրայ հին և նոր գործերը։ Որոշեցի ատենէ քաղել ինչ որ աւելի խոհեմ և գործադրելի երեւնայ ինձ և այնու ապուս օգ-

տակար գասասիարակութեան գիրգ մը յօրինել։ Միակ զաւակն էր։ ինձ հետ 18 ամիս բանտն տպրեր էր, իւր մօրը սիրելին էր, զայն կը պաշտէի և կըսէին թէ ճիշդ ինձ կը նմանէր բնութեամբ և դիմօք։

Ո՛րքան պատճառներ զայն սիրելու համար։ Անտարակոյս արթուն միտք մը կը ցուցնէր, և իւր հասակէն ակնկալուածին չափ հանճարոյ յոյսեր կուտար։ Մեծ յոյսեր ունէի իւր ապագայ յառաջադէմութեանը համար աշխարհիս մէջ՝ ինչպէս խեղճ հայրս ունեցեր եմ վրայովս։ Որոշեցի շատ զգուշանալ որ յետաձգելու ունակութիւնս չ'ունենայ՝ որ կեանքիս թշուառութեանը պատճառն եղած էր։

Օր մը երբ առանձին էի գրասենեակս՝ կինս հետս մտաւ և ըսաւ «Սիրելիս ճիշդ հիմայ իմացայ մեր բարեկամ, Պ. Ներ՛նէն, գէպք մ'որ պիտի շատ վրդովեց։

Գիտէք պզտիկ Հարիսըն մեր Բարսեղին հետ պետակեցաւ և միւսնոյն մարդէն։

Տին. Նէն և բոլոր ընտանիքը կարծեցին որ բաւական բիծ ունէր, ճիշդ մեր ազուն չափ և թէ այնչափը բաւական էր, բայց երկու տարի վերջը, երբ Ամերիկա էինք, Հարիսըն ծաղիկ հանեց և մեռաւ։ Հիմայ կ'երեւի թէ զայն պիտատոր մարդը ոչ մեր մէկն էր որովհետեւ երկու երեք ուրիշ ազայք ալ հիւան-

գացան, մինչդեռ վտահացուցած էր թէ վը-տանգէ ազատ էին։

Աղէկ չէ՞ր ըլլար որ մանչերնիս անմիջապէս պատուաստել տայինք նորէն ուրիշ բժշկի մը։

«Անտարակոյս, սիրելիս, անտարակոյս։ Բայց կը կարծեմ թէ աւելի աղէկ կ՚ընենք եթէ զայն պիտակէինք։ Ապահով չ՚եմ, բայց... Տ. Բ-ժիշկին կարծիքը պիտի խնդրեմ, ինձ խոստացաւ մեզի հետ այս երեկոյ ճաշելու։»

Դիպուած մը արգելք եղաւ իրեն և չ՚կրցաւ գալ. մոռացի անոր գրել յաջորդ օր բայց վերջը ձգձգեցի։ Լիւսի աշխատութեան անեակս եկաւ ուր ապահով էր զիս գտնելու առաւօտուն «Սիրելիս, ըսաւ, կը յիշես թէ զիս չ՚թողուցիր մեր պզտիկ մանչը պատուաստել տալ՝ ըսելով թէ դեռ որոշած չ՚էիր թէ ո՞րն աղէկ է պատուաստել թէ պիտակել (*)։»

«Այո, սիրելիս, կը յիշեմ, աւելի պատուաս-

---

*) Պիտակումը կը կոչուեար տարատիպիկ հիւանդութեան մը վտանգը նուազեցնելու զոբօրինակ կարմրուկի, ժանտախտի, ծաղիկի և այն, անոր նիւթական ակզբունքը մուծցնելով կենդանական ոտեսութեան մէջ։ Պիտակման գործածութիւնն՝ որ շատ հին էր ի Հնդիւ., ի Զիդասան, Աֆրիկէ, և Պարսկն Լանդրա անցաւ 1721 և անկէ ի Բարիզ 1755 թ։ Եամ՚ց կամաց անոր սովորութիւնը գրեթէ խպտաւ խափանեցաւ պատուաստին աւելի ապրաւ գործածութեան առջեւ որոյ թանկագին գիւտն ըրաւ հռչակաւոր Անգլիացի բժիշկ Ճէնները։

ոմ կոչմնակից եմ։ Բարեկամս Պ. Լ... իւր բոլոր զաւակները պատուաստել տուաւ և կ'ըսպասեմ անոնց ինչպէս ըլլալը տեսնելու համար։

«Ո՜հ, հոգիս, ըսաւ Լիւսի, ալ մ'ապասեր որովհետև դիտես որ ամեն օր՝ ամեն ժամիւր ծաղիկ ըլլալու վախն ունինք։»

«Վախն ունեցանք, և ապատեցանք այս երեք անցած տարեաց մէջ, ըսի, և իմ կարծիքս այս է որ տղան ծաղիկը հանած է։»

«Նոյնպէս կարծեցին Պ. և Տ. Ներնը և տեսար ինչ պատահեցաւ։ Թիչէ որ մեր տղան միւնոյն մարդէն պիտակեցաւ։ Ապահով եմ թէ Պ. Ներնին այս խօսքը ըսելէն ի վեր, երբէք Պզտիկ Բարսեղը պատելու չ'եմ տարած, երբէք զայն ինձ հետս կտաքը չեմ տուած տանց արտադրի։ Երեկ կին մ'եկաւ կտաքին դուռը իւր բազկաց մէջ տղայ մը բռնած, որ իւր երեսին վրայ հարուած մ'ունէր։ Կարծեցի թէ ծաղիկն էր և այնքան վախցայ որ հազիւ ուժ կամ խելք իմաց վրաս պատուհանը գոցելու։ Մեր պզտիկ մանչը գլուխը դռնէն դուրս հաներ էր տղան ողորմութիւն մը տալու համար։ Աստուա՜ծ իմ, եթէ այդ տղան ծաղիկ ունէր։»

«Հոգիս, ըսի, այնքան մի վախնար, տղան վարը պիտի պատուաստուի։»

«Վարը՜։ Ո՜հ ամենասիրելի հոգիս, վարուան մի ձգեր, ըսաւ Լիւսի, թող որ այսօր պատուաստուի։»

«Ակէկ, սիրելիս, միտքդ մի յոգնեցներ և եթէ կարելի է այսօր կը պատուաստուի. հարկաւ գիտնալու ես թէ ես ալ ոչան քեզ չափ կը սիրեմ, և վախցածիդ չափ ես ալ կը վախնամ։»

«Ապահով եմ, սիրելիս, ըսաւ Լիւսի։ Բայց քանի որ որոշած ես ոչան պատուաստել, ուրեմն անմիջապէս բժիշկին մարդ ղրկենք որ վերջը վտանգ մը չ'ելլայ։»

Զանգակաշուանն բռնեց ապատուր մը կանչելու համար, զոյն արդիլեցի։

«Ոչ, սիրելիս, մի զարներ ըսի, որովհետև երկու մարդիկս ալ դուրս են Մին գրատոնաւին ղրկեցի որ «Կրթութեան վրայ նոր նամակներն» գնէ, և միւսը խաղալիկի խանութը քանի մը բան առնելու որ ոչուն համար կ'ուզեմ։»

«Ուրեմն, եթէ ապատուրները դուրս են, ուրեմն ակէկ կ'ընեմ ես բժշկին երթամ և զոյն հետս բերեմ։»

«Ոչ, սիրելիս, ըսի, առաջ Պ. Լ. . . ին ոչաքները տեսնելու եմ։ Անմիջապէս դուրս պիտի ելլեմ, անոնց պիտի հանդիպիմ. առաջ ոչաքներ են. իրենցմէ կրնանք պատուաստ առնուլ և ես ոչան պիտի պատուաստեմ։»

Լիւսին խօսքիս անսաց։ Թաղծոտին հաճոյք մը կ'զգամ իրեն իրաւունք տալու, յիշելով ի-

բեն յառաջ բերած ամէն պատճառները, և ինձ ըսած ամէն համոզիչ խօսքերն այն առթիւ։ Անձիպագին կը բաղձամ ցուցնել թէ նա պարտաւորեալ չէր բնաւ։

Ես միայն յանցաւոր եմ։ Ես միայն տանջուելու էի։ Հապա թէ մարդ պիտի հաւատայ, եւ ես ինքնին անգամ հապա կրնամ հաւատալ, որ Լիւսիին բոլոր ըսածներէն վերջը, երկու ժամ ձգձգեցի, և կեցայ լսելու համար Լուսոյի Էմիլէն թարգմանութիւն մը. անկէ վերջը դուրս ելայ։

Երբ Պ. Լ... ին տունն հասայ, ոտքերը ճիշդ դուրս ելեր էին օդ առնելու, և զանոնք կարող չ'եղայ տեսնելու։ Քանի մը ժամ անջրպետը կրնայ երբեմն անհուն տարբերութիւն մ'ընել հիւանդութեան և առողջութեան մէջ, երջանկութեան և դժբաղդութեան մէջ. մ... չեւ միւս օրուան ձգեցի ուրուս պատուս տար։

Նոյն միջոցին կառապան մ'եկաւ զոր ինձ համար փարձելու միտք ունէի. ոչաս սենեակիս մէջ կը խաղար, և ինչպէս որ երջն յիշեցի՝ կայնեցաւ գիտելու համար մը, դուն կոճակները եմ խոսած միջոցիս։ Կառապ ինին շատ մը հարցմունքներ ըրի և ժամանակ մը սենեկին մէջ պահեցի։ Ճիշդ երբ զայն իմ ուսումնութեանս պիտի տանէի, լսաւ թէ չ'ուզեր կրնար քովս մնալ բնակելու մինչեւ յաջողիլ շա-

բախը, որովհետև իր զաւակներուն մին ծաղկէն հիւանդ էր։ Այս բառերը սիրտս խոցեցին, ահաւոր նախատեսութիւն մ'ունէի ասոր հետեւանքին վրայ։ Կը յիշեմ թէ կանգնեցայ, և մարդը արտաքսեցի սոսկալի բարկութեամբ։

Տղան, խեղճ անմեղ զոհ, եռեւէս եկաւ. ջանալով դիս հանգարտեցնելու զայն բազկաց մէջ առի։ Կարող չ'էի զայն համբուրել։ Այնպէս գգացի որ իրեն դահիճն էի. զինքը գեռինը դրի. իրաւ այնքան կը գոլայի որ զայն գրկելու կարողութիւն չունէի։ Տղան մօրը վազեց։

Այս բաներուն վրայ կարող չեմ երկարել։

Մեր ոգան հիւանդացաւ յանկարդ շաբաթը և մեռաւ շաբաթը մեռաւ իր մօր բազկաց մէջ։

Կնոջս առողջութիւնը շատ տկարացեր էր շնորհիւ բոլոր այն արկածից որ դլխէն անցէր էին մեր ամուսնութենէն ի վեր։

Իր հօրը դժկամակութիւնը, իր բոլոր բարեկամներէն զատուիլը, որ ինձ հետ բարկացած էին բանտարկուելուս պատճառաւ, և վերջապէս իր մէկ հատիկ որդւոյն մահը, իր կարողութենէ վեր էին. ալ չդիմացաւ։ Ջանաց ինձմէ պահելու իր վիճակը, բայց տեսայ որ իր առողջութիւնը շատ խախուտ էր։

Միշտ գիւղէն ախորժեր էր, և հիմայ որ կե-

նայս միակ փոխարէն էր ընել ինչ որ կարող էի գինքը միխիթարելու համար, ըսի թէ քաղքի տուներնիս ծախենք և գիւղին մէջ տեղ մը բնակինք։ Գեղեցիկ տեղ մը կոր փարձուելու իւր հօրը և մօրը բնակարանին մօտ, որոշեցի զայն գնել։ գազանի յոյսեր ունէի որ իւր բարեկամները պիտի գոհ ըլլան այսու՝ և թէ ինձ հետ ապէկ պիտի վարուին։ իւր մայրը, ինչպէս իւր նամակներէն կերևուար, աւելի ապէկ տրամադիր էր ինձ նկատմամբ, հարուստ ազգականս ժառանգութիւնն առանալէս ի վեր։ Լիւսի մեծ հաճոյք ցուցուց գիւղն ապրելու գիտնալուն՝ իւր ազգականաց մօտ։ և ուրախ եղայ զինքը նորէն ժպտիլ տեսնելուս։ Բնութիւնս արիւնային ըլլալուն յոյսը նորէն մտաւ սրտիս մէջ, ինքզինքս հանդարտեցի ըսելով թէ կարելի է նորէն երջանիկ ի՛ըլլանք։ Լիւսիս իւր առաջութիւնը նորէն կը գտնէ և կարելի է Աստուած մեզ ուրիշ զաւակով մը երջանկացնէ։

Առեն չը կրցանցուցի գիւղի տունն առնելու համար, և շուտ մը քաղքի տունս համար ապէկ գնող մը գտայ։ Բայց չար ոգիս յաղթեց գարձեալ։ Անհոգութիւն ըրեր էի տունս ապահովագրութիւնը նորոգելու։ ինն օրէ ի վեր, երբ հրդեհ մ՝ելաւ ապառաւորաց տեղերին մէջէն կէս գիշերուն և բոլոր տունն հրոյ ճարակ եղաւ *)։

---

*) Իրական պատմութենէն քաղեալ։

Ինչ մարած դուրս տարի և երբ զայն ապահովեցուցեր մը գրի՝ վերադարձայ թղթատանակ մը գնեալ որուն մէջ գրած էի գիւղի տանս վճռելիք գումարը։ Բայց զայն չ՚կրցայ գտնել, կամ այն է որ այրուեցաւ, եւ կամ թէ բաղմութեան մէջէն մէկը գողցաւ. չգիտեմ։

Քան զիս թշուառ մարդ մը աշխարհիս վրայ կրնալի չ՚է գտնել, և տարտղնութիւնս աւելցնելու համար կ՚զգայի որ այս բոլորն իմ չմարութեանս արդիւնքն են

Հիմայ կը հասնիմ կենացս ամենէն զարմանալի և հետաքրքրաշարժ դէպքին։ Նոր և անշեղի պատահար մը . . . . (*)։

---

*) Ամանաթուն (սպաղ ոսկին։ Այս վէպին ինչ ելք ունենալն երբէք հիմա չը պիտի գիտցուի, վասնզի Բարսեղ ձգձգեց վաղուան իւր պատմութիւնն աւարտելը։

Այս հատուածք գտնուեցան հին գրասեղանի մը մէջ՝ Սուօր փոգոցին մութ տան մը մ՚անկիւնը։ Օգոստոս 1803։

Վ. ԵՐՋ.

ԴԱԴԱՐՈՒՄՆ ԺԱՄԱՆԱԿԻ

(ՊԱՐՍԻԿ ՎԷՊ)

Ով ժամանակ ա՛լ դադրէ · դադրեցէք ժամք բաբէնահ,
Յաբշաւասոյր ընթացք ձեր ·
Թող մուք մեզի ճաշակել զարագասահ այն հաճոյս,
Զոր կ՚ընծայեն աւուրք մեր ·
Քանի՞ քանի՞ թշնաւառներ կը պաղատին հոս ձեզի,
Անոնց համար սահեցէք ·
Առէք իրենց աւուրց հետ զիրենք տանջող հոգերն ալ,
Այլ երջանկաց խնայեցէք ։

Նոյն մտածութիւնք, զոր մեծն Սաատի *) ո՞ւանուր բացատրած էր քանի մը դար առաջ, կ՚երգէր գեղեցիկն Մեսրուր կատ՚ուվ իւր երկայն ճերմակ ձեռօք կիւղային թ՚ելերը։ Իւր Հաֆիզս բարեկամին մեծ հառաչանք մը ընդմիջեց իւր նուագը։ «Աւա՜ղ, բ անատեղ-

*) Վերոդրեալ տողերը Լամարդինի են՝ թէպէտ նմանութեամբ Սաատին ալ քերթուած մը ունի։ Սաատի Պարսից ամենէն մեծ բանաստեղծն է, ծն. ալ 1184 ին և դար մը տարած է։ Իւր ամենէն հռչակաւոր երկասիրութիւնք են Նիւլիսթանը, Պօսթանը և Ղնա-Դամէն, ասոնց առաջինը գրեթէ ամէն Եւրոպական լեզուաց թարգմանուած է։

ծքն իրաւունք ունի։ Ո՞վ հարիւր անգամ չէ փոխուած որ կարենայ իւր կենաց ասաք ասրին տալ երջանիկ ժամ մը կեցնելու համար։ Բայց անգութ ժամանակն աւելի չը կենար վարդերուն քան նոճրներուն վրայ։ Մարդս շատ թշուառ արարած մ'է։»

Այս ըսելով Հաֆիզս իւր երկայն ծխախոտէն հատուէտ մը ամպ մ'արձակեց, և վերցուց թաղծութեամբ աչուքները դէպ յատակը որ կը փայլին երկնից մութ կապոյտին վրայ։ Ինչպէս թերեւս գիտեցիք, Հաֆիզս իմաստասիրելու միտում մ'ունէր, երբ հարկաւ՝ աւելի ազէք բան մը չ'ունէր ընելիք, որովհետեւ խրախճանութեանց մէջ գժուարաւ կարելի էր աւելի զուարթ ընկեր մը գտնել։ Այն երեկոյին եկեր էր գեղեցիկ գիշերը վայելելու իւր Նասրը հօրեղբօրորդւոյն ընկերակցութեամբ, իրենց Մեղուր բարեկամին տունն, որ Իսպահանի երիտասարդաց ամենէն հարուստն և ամենէն չքեղն էր։ Երեքն ալ տեղաւորուեր էին պատշգամին վրայ, գեղգիդէզ բարձերու վրայ ընկողմանեալ՝ և գիշերն այնչափ պայծառ էր, հոմն իրենց այնչափ քաղցր հոտեր կը բերէր, ասողերուն լոյսն այնչափ երազուտ բան մը ունէր որ իրենց խօսակցութիւնները կամաց կամաց թաղծութեամբ համակուեր էին։

Հարկաւ, ըսաւ Նասրը՝ հարուստ և պատուաւոր վաճառականն, երջանիկ կ՚ըլլար մարդ եթէ կարենար կենաց ընթացքին մէջ դ՚ուրիլ։ Այսպէս երբ իւր հարստութիւնը կատարեալ կը տեսնէ նա՝ ի՞նչ ուրախութեամբ, ի՞նչ ապահովութեամբ պիտի ըսէր. «Կը մնամ հոն ուր որ եմ՝ մինչեւ որ Ալլահ զիս իւր քով կանչէ, ունակութիւնք, նաւակոծութիւնք։ վաճառաց կորուստ, կարաւանի վնասներն ինձ չ՚են կրնար ոտանել, այլ եւս կործանելու վախ չ՚ունիմ, մինչդեռ ապագային խնդիրը կը պըղտորէ միշտ ամենէն գեղեցիկ ճակատագիրն իսկ։ Իրաւ չ՚է՞, Հասան էֆէնտի։» Նասրին այս անուամբ կոչածն այն աշխարհին շատ յարգելի ալեւոր տէրիշ մ՚էր։ Ի՞նչպէս կը գըտնուէր Մեսրուրին տան պատշգամին վրայ, մարդ չէր կրնար ըսել զայն։ Անոր գալը չէին տեսած, եւ Նասրը աչուքները վեր վերցնելով, զայն մէկէն ի մէկ առջեւը գտեր էր։ Զարմանք չէր տակայն, որովհետեւ Մեսրուրին գերիները կը ճանչնային տէրիշն, և անոնցմէ ոչ ոք կը յանդգնէր այսչափ արբակրօն մարդուն մը կամոցը գիմադրել։ «Մարդս կարող չէ բախտին դրքին մէջ կարդալ, պատասխանեց ծանրութեամբ խմաստունն, Ալլահ միայն գիտէ ինչ պէտք է մարդուն։»

—Հարկաւ, Ալլահ գիտէ, պատասխանեց

Հաֆիզս, բայց մարդս ալ կրնայ ունենալ իւր կարծիքն այս մասին, և ինձ համար կ'ուզէի որ կեանքս կատեցուներ կարենամ մէկ ընտրած ժամուս, և քայլ մ'անդին չ'անցնիմ ժամանակին ճամբուն մէջ։ Դու որ այնչափ ընտանեբար կը խօսիս Ալլահին հետ, առաքինիդ տէրմիշ, այս խնդիրն ընելու էիր իւր Հաֆիզս ծառային համար։

— Իրե՞ն պէս կը մտածես, Մեարուբ, դո՞ւ ալ, Նասըր։ Անխոհեմք, խնդրածնիդ չէք գիտեր։ Բայց ձեր փոխարքածին պէս թող ըլլայ. ձեր ընտրած ժամուն ձեր կեանքը պիտի կասի և այդ ժամը պիտի տեւէ մինչեւ Աստուծոյ ձեր կենաց փոխճանին համար նշանակած առենը։ Ձեզ անկէ աղէկ ընտրել ձեր ժամն։ Եւ դու, շարունակեց խմաստունը դառնալով Մեարուբի նարկիլէն բռնող գերուին, դո՞ւ ալ բաժնիդ կ'ուզես Ալլահին ընծայէն։»

— Ի՞նչ ընեմ, ըսաւ տխրութեամբ գերին, կենաց ոչ մէկ ժամը չ'արժէր որ կենամ։ Ազատ չեմ։» «Եւ եթէ ազատ ըլլայիր, ի՞նչ կ'ընէիր, հարցուց տէրմիշը»։— «Էէյլային հետ կ'ամուսնանայի, և իմ ու անոր օրապահիկը կը հայթայթէի պարկեշտ աշխատութեամբս։» — «Աղէկ, ազատ եղիր, ըսաւ Մեարուբ իւր գերուին։ Ահա քեզ քսակ մը Էէյլային հետ ամուսնութեանդ նպաստելու համար։ Աստուծոյ

իւր տուածին համար շնորհակալ ըլլանք, եղբարք, և իրարու խոստանանք իմացնելու թէ ե՞րբ ճակատագիրնիս պիտի կատեցուենք։ Նայինք մենք ո՞վ ամենէն առաջ պիտի երջանկութիւնն տանայ։»

«Կ՚երդնո՞ւնք», ըսին շորսն ալ միաբերան և զատուեցան։ Տէրմիշն անհերեւութացեր էր։ Ո՛չ Նասրը վահանականն, ո՛չ Մեսրուր բանաստեղծն, ո՛չ Հաֆիզ զուարթ ընկերն, ո՛չ Նուրլատին ազատագրեալ ստրուկն, Առաւծոյ պարգեւէն օգտուելու չ՚ուճապարեցին։ Անշա՛րժ ընել իւր կեանքը։ Զայն ժամո՞ւ մը յառել։ որչափ հեշտալի ալ ըլլայ, ծանր եւ քիչ մը տակալի որոշում մ՚է։ Նասրը իւր տուն վերադառնալով, բացաւ տետրին, եւ իւր հարստութեան հաշիւն ըրաւ։ Գեղեցիկ էր հարկաւ, և իրեն կրնար օգտել։ Միրուն տուն մը դեռ նոր շինել տուեր էր եւ իւր ճոխութենէն բան մը պակսած չ՚էր։ Բայց միթէ այս չափ գեղեցիկ ճանրուվրայ կենալո՞ւ էր։ Զորս նաւ ունէր դէպ յԱրաբիա առագաստով, չորս նաւ ընտիր նաւաստիօք եւ բարեջէն։ Երբ իւր ապատած խնկոց եւ թանկագին ապրանաց բերան ընդունէր, պիտի կրնար գնել այն մեծ պարտէզն որ իրենին կից էր, եւ որոյ այնչափ ատէպ, իւր պատշգամէն, հիացած էր գոմ հո-

վանեաց եւ կարկաջող ջուրց վրայ։ Կարտվանը գալու մօտ էր, անոր սպասելու չէ՞ր։ Մի այն քանի մը շաբաթ մնացեր էր։ Նասըր սպասեց, կարտվանն եկաւ, վաճառքներն ալէկ ծախուեցան, և Նասըր պարտէզը գնեց։ Բայց նաւերէն մին կորուած էր։ Այս կորուստը դարմանելու չէ՞ր։ Նասըր նոր գործոց մէջ նետուեցաւ։ Եւ վերջապէս դեռ շատ ալ երիտասարդ էր կենաց մէջ կասելու համար, եւ իւր հարստութիւնն, որչափ ալ գեղեցիկ ըլլար, հեռու էր հաւասարելէ իւր Ալի դրացւոյն, վաճառականին գոհարեղինաց։ Նասըր իւր ուրուեւաը շարունակեց։ Կը փափաքէր մարգարէին գերեզմանն այցելել- ինչպէս ամեն ճըշմարիտ հաւատացելոց պարտքն է, և այդ ուխտագնացութիւնը չէր կրնար ընել բայց եթէ իւր արժանեաց եւ կարեւորութեան վայելուչ ուղեկիցներով։ Ուստի վստակելու էր ճանրորդութեան ծախքն։ Երբեմն Նասըր կորուստ մը կ՚ընէր, այն ատեն կը ջանար զայն դարմանելու, չէր կրնար ինքզինքը դատապարտել իւր մնացեալ կենաց մէջ առաջուան եղածէն նուազ հարուստ ըլլալու։ Եթէ վաստակ մ՚ընէր, այս վաստակն անմիջապէս իւր գործածութիւնը կը գտնէր եւ իրեն նորէն վաստակելու փափաք կուտար։ Այսպէս որ տարիները կ՚անցնէին եւ Նասըր ամեն ատեն իւր կենաց ընթացքը կա-

սեցնելու ժամանակը փնտռելով գեռ եւս գըտած չէր։

Հաֆիզ՝ որ հաճոյքը կը սիրէր՝ անմիջապէս իւր ծրագիրը պատրաստեր էր. ամէն հաճոյք ճաշակել, և կենալ այն ատեն երբ ապահով թուէր իրեն որ լաւագոյնը գըտնել կարելի չէր։ Բայց միթէ այսպիսի ապահովութիւն մը հնա՞ր է ունենալ։ Հաֆիզ չը յաջողեցաւ. բաւական շուտ յափրանքն հատաւ եւ հաճոյքներէն ստղոկացած, փառասիրութեան տուաւ ինքզինքը։

Եթէ կայ կիրք մը որ մարդու չը ներէ կենալ եւ եռին նայիլ՝ անտարակոյս փառամոլութիւնն է։ Ի վաղուց անտի ունեցածը բան մը չէ, արդի ունեցածը քիչ է, ինչ որ փափաքելի է, ինչ որ մարդուս անզուսպ բաղձանք կ՚ապրէ՝ չ՚ունեցածն եւ իրմէ վեր եղածն է, ամէն ինչ որ դժուար է, ինչ որ անկարելի է ստանալ։

Հաֆիզ բարձ և պատիւներ խնդրեց և երբ զանոնք ստացաւ, աւելի մեծամեծաց կը ձըգտէր։ Կեցնե՞լ իւր կեանքն երբ այս ինչ, կամ այն ինչ մարդն՝ որ իրմէ աւելի արժանիք չ՚ունէր, իրմէ աւելի բարձրատիճան էր, երբ իւր անուան համբաւն իւր քաղքէն անդին չէր անցներ։ Պէտք էր որ բոլոր Պարսկաստան զայն կրկնէր, բոլոր արեւելք զայն ճանչէին, եւ

Հաֆըս Նասըրին պէս կը ձգէր որ տարիներն անցնին առանց Ալլահին պարգևէն օգտելու։

«Ո՛րչափ գեղեցիկ է կեանքս. ինքնիրեն ըսեր էր Մեսրուր։ Երիտասարդ եւ գեղեցիկ եմ, ո՛չ հիւանդութիւն եւ ոչ ցաւ կը ճանչեմ, հարուստ եւ անկախ եմ, կրնամ ձեռքս տարածելով ճամբուս վրայ աղքատութիւնն սրբել, և պալատս ամենէն գեղեցիկ սրահին մէջ, բաւ է որ բանամ քանի մը ձեռագրի թերթեր խօսակցելու համար ամեն ժամանակաց ամենէն վսեմ մտքերուն հետ։ Ո՞ր եր ջանկութիւնն իմինիս հետ բաղդատելի է, եւ ինչ ասկէ աւելի կրնամ ապասել»։ Գնաց իւր գրատունն եւ գիրք մ՝առաւ. նոր բան մը չը կայ արեւին տակ, ըսաւ Սողոմոն մեծն, բայց որովհետեւ բոլոր այն հնութիւնք որ հրեայ թագաւորին՝ արհամարհանքը կը գրգռէին, բոլորովին անծանօթ են ամեն մարդու որ այս աշխարհս կուգայ, հարկաւ պէտք է որ իրենց հետ ծանօթանալու հոգն և հաճոյքն ըստանձնէ մարդ, եւ այս ծանօթութիւնն ընելը շատ երկայն ըլլալով, վերջապէս չը կան մարդկային արարածներ որ ա՛լ նոր բան մը չը գտնեն արեւին տակ։

Մեսրուր շատ նոր բաներ գտաւ իւր գրքոց մէջ, որով փափաք զգաց ուրիշներ ալ հետազօտելու։ Վերջն որովհետեւ քնոյ պէտք

ունէր, գնաց հանգչելու, խոստանալով ինքնիրեն շարունակելու յաջորդ օրն իւր ընթերցումն, ալ աւելի բան սովրելու համար, եւ դեռ իւր կեանքը չը կասեցուց այն երեկոյին։

Գիտութեան ոեռնչը մեծութեանց փառասիրութենէն աւելի դիւրաւ շողոքիր, միայն աւելի ազնիւ եւ աւելի ողջամիտ է։ Մեսրուբ, անգամ, որ իւր միտքն հեռաքրքրութեան ասպարէզին մէջ ուղղեց, ինքզինքն սովրելու ծարաւով պապակեալ զգաց։

«Կարդալ միշտ միւնոյն բանաստեղծները, մինչեւ վերջը Սասունի կռիւներն յեղյեղել, գոց գիտնալ հին իմաստնոց պատմութիւններն եւ Պարսկաստանի տարեգրութիւնքն իմ մատենից մէջ պարունակեալ ամեն գիտութիւնները ճանչել, միթէ անհանդարտ հոգւոյս համար այնչափս բաւական է։ Զը կա՞յ արդեօք միւս երկիրներուն մէջ սիրուելու արժանի, ուրիշ բանաստեղծ՝ ուրիշ պատմութիւններ ճանչցուելու արժանի։ Գիտութիւնն ըրած չէ՞, չը՞ներ անդադար նոր յառաջադիմութիւններ ե՛ւ ուզեմ սորվիլ, կ՚ուզեմ ճանչնալ։ Ալլահին պարգեւէն օգտուելու ժամանակն եկած չէ տակաւին։»

Հապա Նուրէտտին, խեղճ տղուկը։ . . Լէյլային հետ ամուսնացեր էր, եւ երջանկութեան ծայրն հասնելով՝ ազատ եւ սիրուած

ըլլալուն, այն ներկայ ժամուն սիրով իւր կեանքը կը շղթայէր։ Բայց Էէյլային նայեցուստուար պատուառ մը հագած էր, եւ ճամբուն քարերն իւր փափուկ ոտքերը կը վիրաւորէին։ Ծպտելով տան դժուարին խնամքները կը կատարէր, եւ իւր անգօր հասակը շատ ծանր բեռերու տակ կը հակէր։ Շատ խիստ էր այն անկողինն ուր իւր յոգնած մարմինը կը հանգչէցուներ երեկոյին. շատ աղքատիկ էր տնակը զոր Նուրէտտին կրցեր էր իրեն նուիրել։ Եւ զինք պիտի գատապարտէ՞ր ամեն տեսն այսպէս ապրելու։ Ոչ, իրեն համար պիտի աշխատէր, եւ վերջն երբ իրեն կարենար հանգստութիւն եւ հարստութիւն տալ այն տեսն Ալլահին ընծայէն օգտելու ժամանակը կ՚ըլլար։

Երկու հոգւոյ աշխատակցութիւնը քաղցր բան է, եւ զգուշութեամբ եւ խնայողութեամբ, կրնայ մարդ տնանկութենէ ազատիլ։ Քանի մը տարիէն Նուրէտտին եւ Էէյլա հանգիստ կ՚ապրէին, մինչեւ իսկ ամենքն կ՚ըսէին նախկին գերին յարգել իրր Իսպահանու *) ամենէ պատուաւոր գործաւորներէն մին, եւ եթէ պահած ըլլար իւր առաջուան բաւակա-

---

*) Իսպահան՝ Իրաք — Լ.ճէմի մէջ Պարսկաստանի մայրաքաղաքն էր ժամանակու, հռչակաւոր իւր տուն եւ բամբակի գործարաններով. դեռ շատ վաճառաշահ քաղաք է։

նասիրութիւնն, այն ատեն պիտի կրնար կա-
սեցնել իւր կեանքը։ Բայց զաւակներն եկեր
էին։ Կարելի՞ է հրաժարիլ անոնց մեծնալը
տեսնելէ, տեսնելէ պզտիկ աղջիկը կամաց կա-
մաց գեղեցիկ կին մ՚ըլլալ իւր մօր նման, ման-
չըն ալ իւր նմանեաց օգտակար մարդ մ՚ընել։
Ոչ, շարունակելու էր աշխատիլ իրենց համար։
Եւ վերջը, երբ երիտասարդ աղջիկն իւր ընտ-
րած ամուսնոյն հետ գնաց, երբ երիտասարդ
մարդն եղաւ ընտանեաց տէր, հրաժարելո՞ւ էր
իւր թոռներն իւր ծնգաց վրայ օրօրելու բերկ-
րանքէն Ոչ, Նուրէտտին չէր կրնար Ալլահին
պարգեւէն օգտիլ։

Զորս երիտասարդք շորս գլխիկոր ծերեր
դարձած, գիրար գիտուրեցին որ մը գերեզ-
մանատան նոճեաց տակ։ Գիրար ճանչցան եւ
ողջունեցին։

«Մենէ ոչ ոք ուրեմն չը գտաքեցուց իւր
կեանքն, բոլոր Նասրը ընկերոջն։ Ես, Պարա-
կատանի ամենէն կարեւոր հարստութիւնն ըս-
տացայ։ Նաւերս ծովերը կը ծածկեն, եւ աշ-
խարհիս ամեն նաւահանգիստներուն մէջ գրա-
սենեակներ ունիմ։ Եթէ վերջին ձեռնարկնե-
րուս մէջ յաջողիմ, կ՚ուզեմ միայն ինձ համար
քաղաք մը հիմնարկել, հոն ապրելու պիտի
երթամ, եւ կարելի է այն ժամանակ ճակա-
տագիրս կատեցնեմ։

—Փոխարքայեմ, յանուն թագաւորին կը հրամայեմ, պատասխանեց Հաֆըզ, բայց բաւական չէ։ Ո՞վ գիտէ թէ ինչեր կը սահմանէ ինձ դեռ բազդը Սպասենք. տեսնեն թէ ե՛րբ է ժամանակը կեցնելու միջոցը։

—Գիտնալ, եւս քան զեւս սովրիլ, մարդկային գիտութեանց բաժակը պարպել, դեռ հեռացօտել, եւ ոմն ժամանակ, մինչեւ որ աշխարհիս վրայ ինձ անծանօթ մը չը մնայ։ Այս է ուխտս։ Մինչեւ այն ատեն, բարեկամք, չ'եմ կրնար հաւանիլ Ալլահին պարգեւէն օգտուելու։

Այսպէս խօսեցաւ Մեսրուբ։

«Թռուս կը թռիմ, կ'ուզեմ անոր խօսիլը լսել. ապչկանս զաւակը գեսինը կը տապլտըկի, դաշտերուն մէջ անոր վարվարելը տեսնել կ'երազեմ։ Ինչպէս որ զաւակներս մեծնալ տեսայ, այսպէս կ'ուզեմ որ թոռանցս մեծնալը տեսնեմ։ Միայն երբ մարդ հայր ըլլայ՝ ծերանալկ'ուզէ, եւ շատ պիտի վշտանար եթէ կը կեանքը կասեցնէին»։

Այսպէս խօսեցաւ Նուրէտտին։ Մերուկ մը, նոճիներուն մէջէն յանկարծ երեւան ելաւ։

— Ձիս կը ճանչէ՞ք, ըսաւ։ — Հասան տէրվիշը, գոչեցին շորսն ալ միաբերան։ Հայր իմ, մինթ մահուան հրեշտակն յարգե՞ց ձեր գըլուխն։ Երբ երիտասարդ էինք, դուք ծեր էիք,

և հիմա որ խորշամէալ և ալեւոր ենք, դուք փոխուած չէք։ Աստուած իւր սուրբերը կը պաշտպանէ։

Տէրվիշը ժպտեցաւ.

«Աստուած զիս ձեզ դաս մը տալու համար ընտրեց, բոլոր։ Վերջապէս հասկցէք որ ինքն միայն իմաստուն է, ինքն միայն գիտէ ինչ պէտք է մարդուն։ Երջանկութիւնը կ՚անցնի, և երբոլ մ՚է ուզել զայն յերկարաձգել այս աշխարհիս վրայ ուր ամէն բան անցաւոր է։

Հազիւ կարծեցիք կարող ըլլալ զայն ընելու, այլ եւս չ՚ուզեցիք։ Ոչ մէկ ժամ մարդուս կեանց մէջ, չ՚արժեր ամեն տեսն մնալու։ Երջանկութիւնը միայն Ալլահին քսմն է եւ բոլոր այն ուրախութիւնն որ լուսաւորեց ձեր երկրաւոր կեանքը միայն իւր ժպտին ցոլացումն է, զոր ձեր վրայ կը ծագեցնէր՝ ձեզ կանխաւ երկնից ճաշակ մը տալու համար և անոր փափաքն ի ձեզ արծարծելու համար։ Ոչ ոք կրնայ ժամանակը չդիմայել, և եթէ կարենար, բոլոր իւր ապագայն անծանօթին՝ և սրտակէզ կսկիծներու պիտի մատնէր։ Տարբեր ճամբայներ ընտրեցիք և ձեզմէ ո՛չ ոք չը գտաւ ժամ մը յորում յանձն առնուր ամէն տեսն մնալ։ Ճանչցէք ձեր երիտասարդութեան երջանիկ ոչընչութիւնն։ Ալլահ միայն իմաստուն է։ Ալլահ մեծ է, օրհնեալ ըլլայ Ալլահ։»

Այս խսաքերէս վերջը ամբիշը բարձրացաւ և կարծես թէ կը մեծնար։ Իւր դիմաց խորշոմները կը պարզէին, և երիտասարդութեան գոյները ծերութեան դժգունութեան տեղը կ'անցնէին։ Երկայն խարտեաշ մազերն իւր պարանոցին վրայ կը ծածանէին, և իւր ուսերէն դուրս ծաւալեցան երկու սպիտակ թեւեր։ Իսկոյն զանոնք պարզեց, կապուտակին մէջ հոլաթեւեց, և երկնից բարձրութեան մէջ անհետացաւ։ Զորս ծերերն ի ծունր իջեր էին. «Ալլահ իւր հրեշտակը մեզ ղրկեց, ըսաւ Մեսրուր յոտն կանգնելով, Ալլահ միայն իմաստուն է։ Օրհնեալ ըլլայ Ալլահ։»

ՎԵՐՋ

ԿԱՁՄԱՏՈՒՆ Ա. ԲԱՂԴԱՆՈՅՇ
ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni han 5-6
Չակմակճիլար Մեծ Նոր Խան թիւ 5-6